ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» դեկտեմբերի 2017թ. **N-----Ն**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Երևանի զարգացման 2018 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2018 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով՝ ընդհանուր 1000 տպաքանակներով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները:

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հիմնական նպատակն է՝ նախանշել քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունները՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները, որոնք փաստաթղթում ներկայացված են ըստ առանձին ոլորտների:

Ծրագրի կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները: Յուրաքանչյուր բաժին հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Վիճակի բնութագիր», «Հիմնախնդիրներ» և «2018 թվականի նախատեսվող աշխատանքներ»:

2018 թվականի ծրագրերն ու միջոցառումները կազմվել են՝ հիմք ընդունելով Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրի գերակայությունները, ինչպես նաև առկա հիմնախնդիրները և ֆինանսական հնարավորությունները: Ծրագիրն ուղղված է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացմանը, ինչի արդյունքում ակնկալվում է ապահովել քաղաքի համաչափ և կայուն զարգացումը:

Այս առումով կարևորվում է բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը՝ ինչպես Երևանի բնակիչների, այնպես էլ մայրաքաղաքի հյուրերի համար, մասնավորապես հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը:

2018 թվականի ընթացքում ոչ միայն կշարունակվեն և տրամաբանական ավարտին կհասցվեն սկսված աշխատանքները, այլև կիրականացվեն հեռանկարային նոր ու հավակնոտ ծրագրեր:

Կրթական որակի բարելավումը, երեխաների կրթության համար մեկնարկային հավասար պայմաններ ստեղծելը, հասանելիության բարձրացումը, կրթական հաստատությունների պայմանների և հարմարավետության բարձրացումը, ինչպես նաև ներառական կրթության համակարգի զարգացումը ևս կարևորվում են Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրով:

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի կարևորագույն ոլորտներից է սոցիալական ապահովությունը: Կշարունակվեն իրականացվել հոգածության բազմաշերտ ծրագրեր:

Քաղաքային տնտեսության զարգացման գործում կարևորվում է համայնք-մասնավոր հատված համագործակցության խրախուսումը և համատեղ իրագործվող ծրագրերի շրջանակի ընդլայնումը: Քաղաքային տնտեսության արդյունավետ կառավարման և առկա խնդիրների համատեղ լուծման հաջողված փորձերն առաջիկա տարիներին կկիրառվեն նաև այլ ոլորտներում:

Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2017 թվականի նոյեմբերի 8-ի նիստի դրական եզրակացությամբ «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվել է հանրային քննարկումների: Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.45-Ն և Երևանի քաղաքապետի 2017 թվականի նոյեմբերի 08-ի հ.3960-Ա որոշումների համաձայն՝ 2017 թվականի նոյեմբերի 8-23-ը կազմակերպվել են հանրային քննարկումներ հանրային բաց լսումների եղանակով: Հանրային քննարկումների արդյունքներն ամփոփվել են 2017 թվականի նոյեմբերի 24-ին հրավիրված Խորհրդի նիստում: Խորհրդի անդամների միաձայն կողմ քվեարկությամբ տրվել է

դրական եզրակացություն՝ Նախագիծը սահմանված կարգով Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածը՝ համաձայն որի Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները՝ որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի զարգացման 2018 թվականի ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագիծ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2017թ. որոշման

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագիր

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԱԽԱԲԱՆ 2
ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 6
ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ 10
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ 13
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 19
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 22
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 25
ՏՐԱՆՍՊՈՐՏ 29
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ 33
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 37
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 39
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ 42
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ 45
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 47
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 48
ՄՇԱԿՈՒՅԹ 50
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 56
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 58
ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 61
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 63
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 66
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 69
ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 71
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 74
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 77
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 80
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 83
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 85
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 87
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 90

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը 2799 տարեկան է:

Երևանի տարածքը կազմում է 223 քառ.կմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա: Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ և համեմատաբար խստաշունչ ձմեռ:

Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է, հանդիսանում է տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային և տարանցիկ հանգույց:

Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ: Երևանի ՀՆԱ-ն, ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կատարված հետազոտությունների, 2015թ. կազմել է 2,833,215.6 մլն դրամ, որը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 56%-ն է (ՀՀ ՀՆԱ-5.032.089.0 մլն): 2015թ. ՀՆԱ-ն աճել է 2014թ. ցուցանիշի նկատմամբ մոտ 3.6%-ով: Մեկ շնչի ՀՆԱ-ն կազմել է շուրջ 2,644.158 մլն դրամ: Երևանում ՀՆԱ-ի բաշխվածությունը ըստ ոլորտների հետևյալն է՝ ծառայություն 57.7%, առևտուր 16.6%, արդյունաբերություն 13.4%, շինարարություն 11.9%, գյուղատնտեսություն 0.4%:

Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 41.2%-ը, շինարարության՝ 63.7%-ը, մանրածախ առևտրի՝ 76.4%-ը, ծառայությունների՝ 82.2%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի՝ 76.5%-ը:

Երևանի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման գործում զգալի նշանակություն ունի նաև այն, որ այստեղ է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատահիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակները, Հայաստանում գործող բանկեր և ֆինանսական հաստատություններ:

Քաղաքում է գործում իր էությամբ եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, բազմաթիվ գիտական հաստատություններ, համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոն և մոտ 60 թանգարան, համերգասրահ և մարզական կենտրոն:

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը՝ հաշվի առնելով բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ որպես հետևանք երաշխավորելով երևանցիների կյանքի որակի էական բարելավումը:

Ծրագիրը բովանդակում է քաղաքային տնտեսության ոլորտների ներկա վիճակը, հիմնախնդիրները և զարգացման հիմնական ուղղությունները: Ծրագրում օգտագործված

վիճակագրական տվյալները վերցված են Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած նյութերից։

Ծրագրի իրականացման կայուն երաշխիքներն են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը և այլ իրավական ակտեր, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ Երևանի քաղաքապետը և ավագանին։

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի լիարժեք իրականացումը հիմնարար նախադրյալներ կստեղծի մայրաքաղաքի կայուն և համաչափ զարգացման համար։

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Երևանի տարածքային համաչափ և կայուն զարգացման ապահովում:*
2. *Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական ծրագրերի շարունակականության ապահովում:*
3. *Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխմանը միտված ծրագրի գործնական փուլի մեկնարկ:*
4. *Փողոցային լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքների գործնական փուլի մեկնարկ:*
5. *Ժամանակակից նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման ծրագրերի իրականացման գործնական փուլի մեկնարկ:*
6. *Վերելակային տնտեսության արդիականացման ծրագրի իրագործելիության ուսումնասիրման և նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ապահովում:*
7. *Բակային տարածքների բարեկարգման և բնակչության անվտանգ տեղաշարժի ծրագրերի շարունակականության ապահովում:*
8. *Բնակելի ֆոնդի վերանորոգման և պահպանման, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրերի շարունակականության ապահովում:*
9. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիության ապահովում քաղաքային առօրյան ավելի մատչելի դարձնելու մարդասիրական ծրագրերի շարունակական և հետևողական իրագործում:*
10. *Մայրաքաղաքի բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտման աշխատանքների իրականացում, ինչպես նաև 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգության ապահովման ծրագրի շարունակականության ապահովում:*
11. *Զբոսաշրջության զարգացմանը խթանող քաղաքականության իրականացման շարունակականության ապահովում:*
12. *Մայրաքաղաքի բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավմանը միտված ծրագրերի շարունակականության ապահովում:*
13. *Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության արդեն իսկ ձևավորված ավանդույթների պահպանում ու զարգացում:*
14. *Նպատակային քաղաքականության վարման միջոցով մայրաքաղաքի տնտեսական և քաղաքացիական կյանքին բնակչության անմիջական մասնակցության խթանում ու նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ և հաղորդակցության ժամանակակից միջոցների կիրառմամբ դրան միտված հնարավորությունների ստեղծում:*
15. *Կառավարման համակարգի բարեփոխումների և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովում, իրավական դաշտի կատարելագործում:*
16. *Մայրաքաղաքի արտաքին ձևավորման և շենքերի արտաքին տեսքի կարգաբերման շարունակական ծրագրերի իրականացման ապահովում:*
17. *Միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացմանը միտված ծրագրի իրագործելիության ուսումնասիրման աշխատանքների համար նախադրյալների ստեղծում:*

18. *Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում:*
19. *Ներդաշնակ կենսատարածքի ձևավորում և բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը նպաստում:*
20. *Հանգստի գոտիների ստեղծում, կանաչ տարածքների պահպանում ու ավելացում:*
21. *Մշակութային ժառանգության պահպանություն, առողջ ապրելակերպի խրախուսում:*
22. *Երեխաների իրավունքների պաշտպանություն և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավում:*
23. *Առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում և բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակական բարելավում:*
24. *Բնակչության անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովում:*
25. *Բնակիչների սոցիալական պաշտպանվածության, հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի շարունակականության ապահովում:*
26. *Միջազգային համագործակցության ընդլայնում, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացում, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն ու դրա արդյունավետ կիրառման ապահովում:*

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի միջավայրի բարելավմանն ու կենսական հարմարավետության որակական բարձրացմանն ուղղված ծրագրերով իրականացվում են Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթները՝ նպատակ ունենալով արմատավորել Երևան քաղաքի համաչափ տարածական զարգացման առաջնահերթության սկզբունքը:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման հիմնական միջոցառումների ծրագրով ընթացել է քաղաքի ծրագրավորված քաղաքաշինական քաղաքականության իրականացումը: Մշակվել են քաղաքի որոշ վարչական շրջանների գոտիավորման նախագծեր: Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված, ըստ առաջնահերթության, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվել են ճանապարհաշինարարական ծրագրեր՝ շրջանցող մայրուղիների և տրանսպորտային հանգույցների կառուցմամբ:

Մայրաքաղաքի հյուսիսային և հարավային մուտքերն իրար կապող շրջանցիկ ճանապարհի հարավային մուտք հանդիսացող Արշակունյաց պողոտա-Շիրակի փողոց-Արտաշատի 5կմ երկարությամբ և 24-28 մետր լայնությամբ ճանապարհահատվածը 2016թ. հանձնվել է շահագործման: Արտաշատի խճուղու երկաթուղային գծանցի վրայով կառուցվել է 270մ երկարությամբ ուղեանցը /Էստակադա/ և Շիրակի փողոց-Արշակունյաց պողոտա հատման մասի շրջանաձև երթևեկությամբ 2 ուղեանցերով ճանապարհը: Ճանապարհահատվածում կառուցվել է վերելակով համալրված վերգետնյա հետիոտնային անցում:

Շարունակվել են 2016 թվականից սկսած Շիրակի փողոցից դեպի Արգավանդի հատված տանող ճանապարհի շինարարական աշխատանքները: Ավարտվել են շրջանցիկ ճանապարհի Կարմիր բլուր հնավայրի հարակից տարածքում իրականացվող հնագիտական պեղումները:

Սկսվել են Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները:

Երևան քաղաքի տրանսպորտային հաղորդակցուղիների, հանգույցների թողունակության բարձրացման, երթևեկության նորմալ կազմակերպման, շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման, տրանսպորտային հոսքերի անարգել կազմակերպման նկատառումներով կառուցվել կամ վերակառուցվել են քաղաքային ճանապարհային ցանցի որոշակի հատվածներ:

Քաղաքաշինական ներդրումային ծրագրերի իրականացմամբ քաղաքի ողջ տարածքով համաքաղաքային գործառույթների համաչափ վերաբաշխման, կենտրոնի բեռնաթափման և առավել կանոնակարգված ծավալատարածական զարգացման նպատակով քաղաքի շրջանային կենտրոններում պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ստեղծվել են հասարակական նշանակության ժամանակակից ուսումնամարզական, մշակութային և հոգևոր, առևտրային, հյուրանոցային, վարչական, բնակելի և հասարակական կառույցներ և համալիրներ: Կառուցվել են՝ «Ռիբոկ» բազմաֆունկցիոնալ սպորտային ակումբը (Դավթաշեն), «Ռիո» բազմաֆունկցիոնալ առևտրահասարակական կենտրոնը (Արաբկիր), Երազ բնակելի թաղամասում Ադոնց փողոցի 6/1 հասցեում բնակելի համալիրի, այդ թվում «Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի» շրջանակներում բնակելի մասնաշենքերը (Արաբկիր), Սուրբ Սարգիս եկեղեցու հարակից տարածքում մանկական վերականգնողական

կենտրոնը (Կենտրոն), «Այբ» դպրոցի նոր՝ երրորդ մասնաշենքը (Արաբկիր), «Սիթիզեն» մասնագիտությունների մանկական քաղաքը Աճառյան փողոցի «Փլեյ Սիթի» զվարճանքի կենտրոնի տարածքում (Ավան) «Իբիս» հյուրանոցը, «Կամար» բիզնես կենտրոնը (Կենտրոն):

Ընթանում են Գլխավոր պողոտայի Սարյան փողոցից Մաշտոցի պողոտա միջանկյալ հատվածի զբոսայգու բարեկարգման և արդիականացման աշխատանքները: Ամողջությամբ արդիականացվել է «Վերնիսաժը»՝ Հանրապետության և Խանջյան փողոցների միջանկյալ հատվածը, ինչպես նաև Նալբանդյան և Հանրապետության փողոցների միջանկյալ զբոսայգու հատվածը: Ավարտական փուլում են գտնվում Սարյան փողոցից Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածի զբոսայգու շինարարական աշխատանքները: Կատարվել են Կարապի լճի տարածքի բարեկարգման աշխատանքներ, Օղակաձև զբոսայգու բարեկարգման նպատակով մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Քաղաքաշինական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում իրականացված բարեփոխումների արդյունքում զգալիորեն կրճատվել են քաղաքաշինական փաստաթղթերի քննարկման և տրամադրման ժամկետները:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի գլխավոր հատակագծի իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ընթացքի ուսումնասիրություն, հաշվառում, անհրաժեշտ ճշգրտումների իրականացում, համապատասխան ծրագրերի, գոտիավորման նախագծերի մշակում:*
2. *Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորման համար օրենքով նախատեսվելիք անհրաժեշտ իրավական և նախագծային փաստաթղթերի մշակում:*
3. *Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում, ճանապարհափոխոցային ցանցի ընդլայնում, ժամանակակից չափանիշներին համապատասխանող ճանապարհների և դրանց երկայնքով արդիականացված ստորգետնյա ենթակառուցվածքների և ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգերի կառուցում, մայրաքաղաքի կենտրոնը բեռնաթափող ու շրջանցող ճանապարհների կառուցում, անընդհատ երթևեկություն ապահովելու նպատակով տարբեր մակարդակների վրա տրանսպորտային հանգույցների և նոր ուղեբաժանքների կառուցում, ավտոկայանատեղերի կառուցում, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացում:*
4. *Մայրաքաղաքի բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտման աշխատանքների իրականացում, քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հիմնախնդրի լուծմանն ուղղված ծրագրերի շարունակականության ապահովում:*
5. *Բնակելի թաղամասերի վերակառուցման և ամբողջականացման, զբոսաշրջային ռեսուրսների զարգացման, հանգստի և ժամանցի նոր գոտիների ստեղծման նպատակով քաղաքային տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքաշինական ներդրումային ծրագրերի մշակում:*
6. *Զբոսայգիների և կանաչ տարածքների վերականգնում, նոր այգիների և հանգստի գոտիների հիմնում:*
7. *Մայրաքաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման և շենքերի արտաքին տեսքի կարգաբերման շարունակական ծրագրերի իրականացման ապահովում:*
8. *Երևան քաղաքի թաղամասերի և բնակարանային ֆոնդի արդիականացում:*
9. *Քաղաքաշինական միջավայրում հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովմանն ուղղված համալիր ծրագրերի և նախագծերի մշակում ու իրականացում:*

10. Կայուն զարգացման «ՌԻՕ+20» գագաթաժողովի որոշումների իրագործմանն ուղղված «Կայուն քաղաքներ», «Կանաչ ճարտարապետություն», «Խելացի քաղաքներ», «Կանաչ քաղաքաշինություն» և «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» սկզբունքներից և գաղափարախոսությունից բխող միջոցառումների և աշխատանքների իրականացում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է Երևանի գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրություն և հաշվառում:
2. Կիրականացվի Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում և հասարակության իրազեկում:
3. Չորրորդ կարգի վթարայնության աստիճան ունեցող շենքերի բնակիչներին նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ նախկին, քանդված վթարային շենքի տեղում նոր բազմաբնակարան շենքի կառուցման մեկնարկ:
4. «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ուղղությամբ կառուցապատման աշխատանքներ կընթանան Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եղնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքներում՝ արդիականացնելով, ամրացնելով կիրառական ենթակառուցվածքները, ներգրավելով այն քաղաքի կենսագործունեության մեջ:
5. Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի շրջանակներում կշարունակվեն իրացման աշխատանքներ:
6. Մշակութային զբոսաշրջության զարգացմանը խթանող «Երևանյան պողոտա» պատմական Երևանի դիմագիծը ներկայացնող ներդրումային ծրագրին ընթացք տալու համար կկազմակերպվեն քննարկումներ:
7. Նախատեսվում է շարունակել համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ծրագրերի իրականացում:
8. Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնման, այգիների և զբոսայգիների վերականգնման նպատակով կիրականացվեն աշխատանքներ մի շարք զբոսայգիներում՝

- Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված այգու վերակառուցում,
- Կոմիտասի անվան զբոսայգու հիմնանորոգման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- «Հաղթանակ» զբոսայգում միջազգային չափանիշներին համապատասխան հանգստի գոտու և զվարճանքի կենտրոնի ստեղծման հետ կապված բանակցությունների անցկացում ներդրող կազմակերպությունների հետ,
- Միջազգային չափանիշներին համապատասխան Կենդանաբանական այգու վերակառուցման և զարգացման ծրագրերի շարունակականության ապահովում,
- Հրազդանի կիրճի բարեկարգման ծրագիր՝ մարզական և մարմնակրթական բաղադրիչներով արկածային-զբոսաշրջային կենտրոնի ստեղծման ուղղությամբ ներդրումային առաջարկների իրագործման աշխատանքների իրականացում:

9. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրով անվտանգ և հարմարավետ ճանապարհային ցանց ստեղծելու նպատակով Երևանում շարունակվելու են նախորդ տարիներից մեկնարկած ծրագրով միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհների շինարարության հետ կապված աշխատանքները: Ծրագրում ընդգրկված են Արգավանդ-Շիրակ, Դավթաշեն-Աշտարակ, Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածները:
10. Նախատեսվում է իրականացնել թվով 2 տրանսպորտային հանգույցների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքները և մեկնարկել շինարարությունը՝

- Արշակունյաց պող. և Գ. Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ,
- Արշակունյաց պող., Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ):

11. Նախատեսվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի փողոցի վերջնամասից մինչև Ռուբինյանց փողոցի փակուղի միացնող ճանապարհի նախագծային աշխատանքների կազմակերպում: Ճանապարհը կհանդիսանա նոր կառուցված փողոցի շարունակությունը:

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Գովազդ

Երևան քաղաքում իրականացվում է մեծ և փոքր գովազդային վահանակների, շենք-շինություններին տեղադրված գովազդային մակերեսների գույքագրում, գովազդի մասով վարչական շրջանների աշխատանքների համակարգում, տուրքերի հավաքագրում, էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով իրականացվում են Երևան քաղաքում առկա գովազդային վահանակների հաշվառման, էլեկտրոնային կարգով թույլտվությունների տրամադրման աշխատանքներ, մշակված հայեցակարգի տեղայնացում, շենք-շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների անձնագրերի մշակում, ինչպես նաև գովազդային վահանակների արդիականացում:

Հիմնախնդիրներ

1. *Շենք-շինությունների գովազդային անձնագրերի կազմում և գովազդների կանոնակարգում համաձայն անձնագրերի:*
2. *Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործում:*
3. *Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում:*
4. *Արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կշարունակվի մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ՝ գովազդային վահանակների արդիականացման աշխատանքները: Սոցիալական գովազդների տեղադրումը կիրականացվի համայնքային կամ պետական հանձնաժողովի կողմից այդպիսին ճանաչվելուց հետո:
- Նախատեսվում է իրականացնել վարչական շրջաններում առկա գովազդային վահանակների, ցուցանակների արդիականացման, «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցման աշխատանքներ, ինչպես նաև գովազդային վահանակնների փոխարինում քաղաքային չափերի գովազդային վահանակներով: 2016 թվականին ստեղծված էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում առկա գովազդային վահանակների հաշվառման, էլեկտրոնային կարգով թույլտվությունների տրամադրման աշխատանքներ, որն իր հերթին կբարձրացնի գովազդի ոլորտի կառավարման արդյունավետությունը և կնպաստի տեղական տուրքերի հավաքագրմանը:
- Կանցկացվի արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոն:
- Կկազմվեն 100 շենքերի գովազդային անձնագրեր, որով կհստակեցվեն արտաքին գովազդի տեղադրման վայրերը, գունային լուծումները, ինչպես նաև գովազդային վահանակների արտաքին տեսքը և մակերեսները:
- Կշարունակվեն աշխատանքները օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման ուղղությամբ, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Ձևավորում

Երևան քաղաքի ձևավորման ոլորտում իրականացրած աշխատանքներն ուղղված են Երևան քաղաքի բարեկարգմանը, Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների համաչափ զարգացմանը, մայրաքաղաքի բնակիչների, հյուրերի և զբոսաշրջիկների համար Երևանն առավել գունագեղ, էսթետիկ, համահունչ կահավորված ու հարմարավետ դարձնելուն:

Հիմնախնդիրներ

1. *Պատմամշակութային շենքերի գովազդային անձնագրերի մշակում:*
2. *Վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորում:*
3. *Ոչ բարեհաճ ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգում ու նկարազարդում, պանելային շենքերի ֆասադների գունազարդում:*
4. *Արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը և տոնական ձևավորման հայեցակարգին վերաբերող ընդհանուր պահանջների մշակում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կնորոգվեն թվով 300 անվճար հայտարարությունների տախտակներ, փողոցների 100 ուղենիշներ, կիրականացվեն ծառաբների 35 մետաղական ծածկույթի պատրաստման և տեղադրման աշխատանքներ, կպատրաստվեն և կտեղադրվեն թվով 20 ցուցանակներ մշակութային շենքերի, տուն-թանգարանների ճակատային հատվատծներում: Կպատրաստվեն և կտեղադրվեն 50 շարժական դրոշակահենքեր: Ամսական կտրվածքով նախատեսվում է իրականացնել 529 հիմնային պատվանդանների դրոշների փոխման, մաքրման և սպասարկման աշխատանքներ:
- Նախատեսվում է իրականացնել մի շարք մշակութային միջոցառումների ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ (Բանակի օր, Սուրբ Սարգիս, Մայիսի 1, Մայիսի 9, Մայիսի 28, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության օր, Երևանյան ամառ, Սահմանադրության օր, Անկախության օր, Ուսուցչի օր, Ամանորյա տոնակատարություններ և այլն):
- Կիրականացվեն դրոշակազարդման աշխատանքներ օտարերկրյա պատվիրարկությունների պետական և պաշտոնական այցերի ժամանակ:
- Նախատեսվում է լայնածավալ դրոշակազարդարման և ձևավորման աշխատանքներ իրականացնել Մայիսի 28-ին նվիրված Առաջին Հանրապետության 100-ամյակին:
- Կշարունակվի պատմամշակության շենքերի գովազդային անձնագրերի ստեղծման գործընթացը:
- Նախատեսվում է շարունակել արդեն իսկ վերանորոգված և գունազարդված կամարանցումների վնասված հատվածների նորոգման, թարմացման և թերությունների շտկման աշխատանքները:
- Կիրականացվի պանելային շենքերի ֆասադների դեկորատիվ գունազարդում:
- Շարունակվելու է վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորումը, որի շրջանակներում վարչական շրջանների կողմից իրականացվելու են նկարազարդման աշխատանքներ բակային տարածքներում:
- Շարունակվելու է Երևան քաղաքի դիտահորերի դեկորատիվ թուջե կափարիչների ձևավորման և տեղադրման գործընթացը:
- Նախատեսվում է նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում, այդ թվում՝ նոր տիպի ծաղկամանների, բազրիքների, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատերի տեղադրում և այլն:

- Երևան քաղաքի փողոցների, հրապարակների, այգիների կահավորման նպատակով նախատեսվում է համայնք-մասնավոր հատված համագործակցության արդյունքում քաղաքային կահույքի արդիականացման աշխատանքներ, նոր նստարանների, աղբամանների տեղադրում բոլոր վարչական շրջաններում՝ հաշվի առնելով երևանյան ոճի տարրերը:
- Կիրականացվեն մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքներ: Արդյունքում մետաղյա հենասյուները զերծ կպահվեն գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներից, ինչպես նաև կպահպանվի սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:
- Նախատեսվում է «Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնական հոբելյանական մի շարք միջոցառումների շրջանակներում քաղաքի մեծածավալ ձևավորում և ինստալիացիոն աշխատանքների իրականացում:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Փողոցների բարեկարգում

Երևան քաղաքի փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 945կմ, Երևան քաղաքում առկա է շուրջ 1080 փողոց, իսկ փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ:

Փողոցների ասֆալտբետոնե ծածկի պահպանման նպատակով ամեն տարի իրականացվում են վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:

Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում նաև բակային տարածքներում: Բացի այդ իրականացվում են մայրաքաղաք մտնող մայրուղիների, հրապարակների և վերանորոգման կարիք ունեցող այլ տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. *Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում:*
2. *Բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերականգնում:*
3. *Երևան քաղաքի փողոցների բարեկարգում:*
4. *Հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում:*
5. *Հուսալի և ժամանակակից ճանապարհների կառուցում:*
6. *Մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Փողոցների պատշաճ վիճակը պահպանելու նպատակով կիրականացվեն անհրաժեշտ ծավալի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգման և շուրջ 400 հազ. գծմ ճաքալցման աշխատանքներ:
- Ասֆալտապատման աշխատանքները կիրականացվեն բոլոր 12 վարչական շրջանների փողոցներում, մայթերում, բակերում և գրունտային ճանապարհներին:
- Նախատեսվում է իրականացնել շուրջ 750 հազ. քմ ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 60%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում:
- Նախատեսվում է նաև շուրջ 5000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

Հենապատերի նորոգում-վերականգնում

Երևան քաղաքում հաշվառված է հենապատերի վերանորոգման և հիմնանորոգման կարիք ունեցող, ինչպես նաև նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն ունեցող շուրջ 120 հասցե:

Հիմնախնդիրներ

1. *Քանդված և վնասված հենապատերի նորոգում:*
2. *Վթարային և քայքայված, հենապատերի հիմնանորոգում, անվտանգության աստիճանի բարձրացում:*
3. *Նոր հենապատերի կառուցում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է շարունակել հենապատերի վերանորոգման աշխատանքները: Առկա հասցեներից կընտրվեն առավել հրատապները և առաջնահերթերը: Կիրականացվեն նաև հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում և նորոգում

Նոր անցումների ստեղծման վայրերն ընտրվում են ուսումնասիրության և մասնագիտական քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով քաղաքացիների առաջարկները: Վերանորոգվում և շահագործման բարենպաստ պայմաններ են ստեղծվում առկա անցումներում:

Երևանում առկա է թվով 66 անցում՝ 27 վերգետնյա և 39 ստորգետնյա, որոնց մեծ մասը բավարար վիճակում են, մի շարք գետնանցումներում անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման աշխատանքներ՝ հիմնականում աստիճանների նորոգման, հարդարման, ջրամեկուսացման, ջրահեռացման, երեսապատման և լուսավորության ուղղություններով:

Երևանի քաղաքապետարան-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մշակվում է համապատասխան ծրագրի նախագիծ՝ մայրաքաղաքի ստորգետնյա անցումներում գործող վարձակալող սուբյեկտների հետ միասին իրականացնելու ստորգետնյա անցումների աստիճանների վերանորոգման աշխատանքները:

Հիմնախնդիրներ

1. Ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում հետիոտնի առավել մեծ կուտակումներ առաջացնող խաչմերուկներում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն անցումներում նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝վարձակալների հետ համագործակցությամբ:
- Ներկայումս հաշվառված է մոտ 40 հասցե, որտեղ նպատակահարմար է կառուցել վերգետնյա անցումներ: 2018թ. համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ նախատեսվում է իրականացնել թվով 5 վերգետնյա անցումների կառուցման ծրագիր:

Թեքահարթակների կառուցում

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններ ապահովելու նպատակով մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվում են թեքահարթակներ՝ Երևանի զարգացման ծրագրերով և մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում:

Թեքահարթակների կառուցման տեղերը որոշելու նպատակով քննարկումներ են անցկացվում հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:

2013-2017թթ. ընթացքում մայրաքաղաքում կառուցվել է շուրջ 2340 թեքահարթակ, որից 1950-ը կառուցվել է Երևանի քաղաքապետարանի ծրագրերով, իսկ 390-ը՝ մասնավոր ընկերությունների կողմից:

Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում:

Օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում:

Մայրաքաղաքի փողոցների մի շարք հասցեներում տեղադրվել են վատ տեսողություն ունեցող քաղաքացիների համար նախատեսված դեղին, հատուկ անհարթություններով, նախազգուշացնող բետոնե սալիկներ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

2018թ. նախատեսվում է կառուցել շուրջ 120 թեքահարթակ, կտեղադրվեն նաև վատ տեսողություն ունեցող քաղաքացիների համար նախատեսված հատուկ սալիկներ: Թեքահարթակների կառուցման ծրագիրը շարունակական է:

Մայթերի վերանորոգում և բարեկարգում

Բարեկարգման ծրագրերը ենթադրում են հարմարավետության և անվտանգության, ինպես նաև մայրաքաղաքի գեղեցիկ արտաքին տեսքի ապահովում:

Կատարվում են մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես. վերանորոգվում կամ փոխարինվում են նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները, վերանորոգվում և տեղադրվում են նոր բետոնե և բազալտե եզրաքարեր:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է շարունակել մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքները 2017 թվականին իրականացված ծավալների չափով:

Կամրջային կառուցվածքների սպասարկում, շահագործում, վերականգնում և ամրացում:

Անչափ կարևոր են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը:

Կամուրջների հիմնանորոգման նախագծեր կազմելիս հաշվի են առնվում ստացված առաջարկությունները և կատարվող ուսումնասիրությունների արդյունքում, հնարավորության սահմաններում, իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Կամրջային կառույցների հիմնանորոգում:

2. Ընթացիկ նորոգում, շահագործման բարելավում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Կշահագործվեն և սպասարկման ծառայություններ կմատուցվեն մայրաքաղաքի 37 կամուրջների, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, վերգետնյա անցումների և էստակադաների համար:

Երևան քաղաքում շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգում և քարերի մաքրում, վթարային պատշգամբների նորոգում

2017 թվականի դրությամբ մաքրվել և նորոգվել են 510 շենքերի ճակատային հատվածներ: Վերանորոգվել են շուրջ 434 շենքերի 905 պատշգամբներ:

Մայրաքաղաքի պատշաճ տեսքը ապահովվում է նաև շենքերի ճակատային հատվածների մաքրման, լվացման, նորոգման և ներկման, բազմաբնակարան շենքերի

վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների շնորհիվ:

Հիմնախնդիրներ

1.Անձրևատար խողովակների փոխարինում:

2.Շենքերի ճակատային մասերի լվացում, մաքրում և ներկում:

3.Վթարային պատշգամբների նորոգում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Ըստ անհրաժեշտության կիրականացվի շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքներ, ինչպես նաև կվերանորոգվեն շուրջ 190 վթարային շքապատշգամբներ:

Հանգստի գոտիների ստեղծում, բակային տարածքների բարեկարգում

Մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր: Այդ նպատակով իրականացվում են նոր հանգստի գոտիների, այգիների, պուրակների ստեղծման, բակային տարածքների ու խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Նոր հանգստի գոտիների ստեղծում:

2. Բակերի և այգիների բարեկարգում:

3. Գործող զբոսայգիների բարեկարգում և տարածքի ընդարձակում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

2018 թվականին բակային տարածքների բարեկարգման ծրագրերը կլինեն շարունակական և կիրականացվեն առնվազն 2017 թվականին իրականացված ծավալներով:

Նախատեսվում է թվով 5 հանգստի գոտիների բարեկարգում՝

- Կոմիտասի անվան զբոսայգի,
- Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված այգի (համայնք-մասնավոր հատված համագործակցություն),
- Ծարավ Աղբյուրի փողոցում՝ նոր թաղամասի հարակից տարածքում այգու կառուցում (Ծարավ Աղբյուրի 55/27),
- Էրեբունի և Նոր Նորք վարչական շրջաններում մեկական հանգստի գոտու կառուցում:

Մինի ֆուտբոլի դաշտերի ստեղծում

Երևանում այժմ շահագործվում են 132 մինի ֆուտբոլի դաշտեր:

Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում բակերի բարեկարգման աշխատանքներին և մինի ֆուտբոլի դաշտերի կառուցմանը:

Հիմնախնդիրներ

1. Երեխաների ակտիվ հանգստի ապահովում

2. Բակերի բարեկարգ վիճակի ապահովում

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է կառուցել 6 մինի ֆուտբոլի դաշտ:

Երևան քաղաքի փողոցներում աղբամանների և կոնտեյներների տեղադրման համար հարթակների կառուցման աշխատանքներ

Մայրաքաղաքի փողոցների մայթերին տեղադրված և քաղաքացիների ազատ տեղաշարժին, ինչպես նաև երթևեկությանը խոչընդոտող աղբամանների տեղադրման համար իրականացվում են հարմարեցված հարթակների կառուցման աշխատանքներ: 2017թ. կառուցվել է 226 հարթակ:

Հիմնախնդիրներ

1. Փողոցների մաքրության ապահովում:

2. Քաղաքացիների և տրանսպորտային միջոցների ազատ տեղաշարժի ապահովում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

2018թ. նախատեսվում է կառուցել 226 հարթակ:

Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատությունների հիմնանորոգում

Երևանի կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատություններում իրականացվել են հիմնանորոգման, ջեռուցման ապահովման, տանիքների վերանորոգման աշխատանքներ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. ծրագրով վերանորոգման աշխատանքներ են նախատեսվում Երևանի ենթակայության շուրջ 39 մանկապարտեզներում:
- ՄԱԶԾ հետ համագործակցությամբ կիրականացվի Էրեբունի վարչական շրջանի թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի ամբողջական հիմնանորոգման ծրագիրը:

Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում

Երևանի ենթակայությամբ գործում են 31 առողջապահական կազմակերպություն, որոնցից 4-ը բժշկական կենտրոններ են (այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 3 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց), 2-ը՝ դիսպանսեր, 1-ը՝ շտաբուժօգնության ծառայություն, 1-ը՝ գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 1-ը՝ ծննդատուն և 22-ը՝ պոլիկլինիկա:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է իրականացնել Երևանի ենթակայության շուրջ 15 պոլիկլինիկաների տանիքների վերանորոգման աշխատանքներ:

Երևան քաղաքի ջրային կառույցների սպասարկման ու շահագործման ծառայությունների իրականացում

Երևանի քաղաքապետարանի ծրագրերով յուրաքանչյուր տարի նախատեսվում են Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա 35 ջրային կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է շարունակել ջրային կառույցների վերականգնման ծրագիրը: 2018թ. շարունակվելու են մայրաքաղաքի 35 ջրային կառույցների վերանորոգման, վերազինման, պահպանման և շահագործման աշխատանքները:
- Կիրականացվի բարեկարգման կարիք ունեցող շատրվանների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ համայնք-մասնավոր հատված շարունակական համագործակցության միջոցով:

3-րդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքերի վերականգնման-ամրացման աշխատանքներ

Երևանի քաղաքապետարանում հաշվառված 3-րդ աստիճանի վնասվածության ամրացման ենթակա շենքերից 2-ում կրկնակի հետազոտման արդյունքում հայտնաբերվել են 4-րդ աստիճանի վթարային տարրեր և անհրաժեշտություն է առաջացել հրատապ իրականացնել ամրացման աշխատանքներ:

2017թ. կատարվել են 1 շենքի՝ Ֆուչիկի հ.23 շենքի ամրացման 1-ին փուլով նախատեսված առաջնահերթ աշխատանքները:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է իրականացնել Գ. Նժդեհի հ.56ա շենքի վերականգնման-ամրացման, ինչպես նաև Ֆուչիկի հ.23 շենքի ամրացման աշխատանքները:

Հուշարձանների պահպանում (պատվանդանների վերանորոգում, կառուցում)

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է ՀՀ կառավարության 20.04.2002թ. հ.438 որոշման համաձայն Երևանի սեփականություն հանդիսացող 401 հուշարձանների պահպանումը, սպասարկումն ու պատվանդանների նորոգման աշխատանքները:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Երևանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են տարածքների բարեկարգման, հուշարձանների լվացման և պատվանդանների վերանորոգման աշխատանքներ:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է Երևանի վարչական տարածքում գտնվող հողերի ընթացիկ հաշվառումը և գործող օրենսդրության համաձայն յուրաքանչյուր տարի կազմվում է Երևանի հողային հաշվեկշիռը: Հողային հաշվեկշիռը կազմվում է հողերի պետական հաշվառում իրականացնող ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ կոմիտեի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համաձայնեցված:

Հողային հաշվեկշռում արտացոլվում է հողային ֆոնդը՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի:

Բազմաբնակարան և հանրակացարանային բնակելի շենքերում կրող կոնստրուկցիաները փոփոխության ենթարկելու, վերակառուցումներ իրականացնելու, ինչպես նաև տարիներ շարունակ հիմնանորոգման և ամրացման աշխատանքներ չկատարելու պատճառով ներկայումս մի շարք շենքեր ունեն տարբեր աստիճանների վթարայնության աստիճաններ: Շենքերի տեխնիկական վիճակի վրա բացասաբար ազդեցություն են ունեցել նաև ներքին և արտաքին ջրակոյուղատար ցանցերի մաշվածությունը, տանիքների ջրամեկուսիչ շերտի վնասվածությունը:

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից տրված եզրակացությունների համաձայն Երևան քաղաքում 2017թ. ընթացքում հաշվառվել են քանդման ենթակա 4-րդ կարգի վթարայնության աստիճան ունեցող Արցախի 4-րդ նրբանցքի հ.8 և հ.10, Կողբացու փողոց հ.41 և Շիրակի փողոց հ.60 բազմաբնակարան և հանրակացարանային շենքերը՝ ընդհանուր մոտ 200 բնակարան կառուցվածքով:

Վարձակալությամբ տրված համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասերի, այգիների, պուրակների, ինչպես նաև այլ շենք, շինությունների զբաղեցրած հողամասերի վարձակալության պայմանագրերի ժամկետները, դրույքաչափերն և վարձավճարներն ունեն վերանայման և գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցման կարիք:

Առկա են դեպքեր, երբ շենք, շինություններն իրենց գործառական նշանակությամբ չեն օգտագործվում, ինչը ունի հստակեցման կարիք: Նշվածը հնարավորություն կտա գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ՝ գույքահարկի և/կամ վարձավճարի չափերը համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա է այնպիսի անշարժ գույք, որ տարիներ շարունակ ընդգրկված լինելով գույքի կազմում՝ ենթարկվել է բարոյական և ֆիզիկական մաշվածության, ավելին, նշված գույքը պահանջում է լրացուցիչ չհիմնավորված ծախսեր՝ կապված պահպանման և շահագործման հետ:

Երևան քաղաքում դեռևս առկա են խորհրդային ժամանակներից քաղաքացիների կողմից զբաղեցրած, սակայն մինչ օրս չմասնավորեցված բնակարաններ:

Առկա են Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքեր, որոնք դեռևս չունեն իրավունքների պետական գրանցում համայնքի անվամբ:

Երևան քաղաքի նախկին՝ Հաղթանակ, Չարբախ, Նորագավիթ, Նուբարաշեն, Սիլիկյան, Զրաշեն, Մուշական և Մուշավան, ինչպես նաև այլ թաղամասերում առկա են նախկինում տնամերձ՝ բնակարանային շինարարության, ինչպես նաև գյուղատնտեսական

գործունեություն ծավալելու համար հատկացված, բայց դեռևս չսեփականաշնորհված հողամասեր:

Առկա են դեպքեր, երբ հողամասերի գործառնական և/կամ նպատակային նշանակությունները չեն համապատասխանում գործող օրենսդրությանը և ունեն հստակեցման կարիք:

Հիմնախնդիրներ

1. *Երևան քաղաքի 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան և հանրակացարանային շենքերի առկայություն, շենքերի բնակիչների վերաբնակեցման գործընթաց իրականացնելու նպատակով նոր բազմաբնակարան ֆոնդի ստեղծում:*
2. *Նոր ծրագրերի իրականացում՝ ուղղված Երևան քաղաքի բնակարանային ֆոնդի պահպանմանն ու վերականգնմանը, ինչպես նաև վթարայնությունը վերացնելու և շենքերի ամրացում իրականացնելու նպատակով:*
3. *Տնամերձ, բնակարանային շինարարության համար, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում:*
4. *ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման շրջանակներում չհասցեավորված շենք-շինությունների և հողամասերի հասցեավորում:*
5. *Հողամասերի և շենք-շինությունների նպատակային և գործառնական նշանակությունների համապատասխանեցում փաստացի օգտագործմանը:*
6. *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի և շենք-շինությունների վարձակալության դրույքաչափերի համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված չափերին:*
7. *Երևանի սեփականություն համարվող գույքի կազմից ֆիզիկական և բարոյական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող գույքի մասնավորեցման գործընթացի իրականացում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Մեկնարկել նոր բազմաբնակարան շենքի կառուցման ծրագիր՝ Երևան քաղաքում 2015-2017 թվականների ընթացքում հաշվառված քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբանցքի հ.8 և հ.10, Կողբացու փողոց հ.41 և Շիրակի փողոց հ.60 բազմաբնակարան և հանրակացարանային շենքերից՝ ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ.682 և 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» հ.172-Ն որոշումների շրջանակներում բնակիչների վերաբնակեցման գործընթաց իրականացնելու նպատակով:
- Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում:
- Նախատեսվում է նաև համապատասխան լիցենզավորված կազմակերության միջոցով պատվիրել արդեն իսկ վթարայնության աստիճան ունեցող շենքերի կրկնակի հետազոտություն:

- «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, սակայն դեռևս չգրանցված գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպում:
- Երևանի սեփականություն համարվող գույքի կազմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող, ինչպես նաև ակտիվ շահագործման փուլում չգտնվող գույքի օտարման գործընթացի իրականացում:
- Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակելի շենքերում քաղաքացիների կողմից զբաղեցրած բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացի կազմակերպում:
- Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքային միավորների հայտնաբերման, հաշվառման, չափագրման, գույքագրման և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում:
- Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող շենք, շինությունների գործառական նշանակությունների համապատասխանեցում փաստացի օգտագործմանը:
- Օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած, սակայն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման աշխատանքների իրականացում:
- Երևան քաղաքի նախկին՝ Հաղթանակ, Չարբախ, Նորագավիթ, Նուբարաշեն, Սիլիկյան, Ջրաշեն, Մուշական և Մուշավան, ինչպես նաև այլ թաղամասերում տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում:
- Նախկինում կնքված հողամասերի, ինչպես նաև շինությունների վարձակալության պայմանագրերի ժամկետների և դրույքաչափերի վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին:
- ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» հ.947-Ն որոշման համաձայն՝ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների և ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին բնակարանային կարիքավորության հաշվառման վերցնելու և ցուցակները ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացնելու գործընթացի կազմակերպում:
- Համապատասխան աջակցության ցուցաբերում Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքներում:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքում գործում են առևտրի 8587 օբյեկտներ, սպառողական ապրանքների 7, գյուղատնտեսական արտադրանքի 10, գյուղմթերքի փոքրածավալ 18 շուկա, 5 տոնավաճառ, 24 առևտրի կենտրոն, հանրային սննդի 1608 և կենցաղային ծառայություններ մատուցող 2908 օբյեկտ:

Առևտրի օբյեկտների 62,8%-ը, հանրային սննդի կազմակերպման օբյեկտների 77.3%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 62%-ը կենտրոնացված են Կենտրոն, Արաբկիր, Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջաններում:

Մայրաքաղաքի բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվում է խանութներում և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի միջոցով: Եթե առևտրի այդ տեսակների շրջանառությունը մանրածախ առևտրի ողջ ծավալում 2017թ. 1-ին կիսամյակի ընթացքում կազմել է 91,5%, ապա գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, տաղավարների ու կրպակների միջոցով կատարվող առևտրի շրջանառությունը ունի չնչին տեսակարար կշիռ և նշված ժամանակաշրջանում այն կազմում է ընդամենը 2.4%:

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 90%-ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության մոտ 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ: Մնացած 7 վարչական շրջանների տարածքներում իրականացվող առևտրի շրջանառությունը առանձին-առանձին վերցրած կազմում է ընդամենի 0.03%-ից մինչև 6%:

Առևտրի շրջանառության 47.6%-ը իրականացվում է խոշոր, մնացած 52.4%-ը՝ փոքր և միջին բիզնեսի կողմից:

Չնայած Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի արգելմանը, դեռևս այն հսկողության ուժեղացման և կանոնակարգման կարիք ունի:

Անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող և զվարճանքի օբյեկտները:

Որոշ կենտրոնական փողոցներին հարող տարածքներում տեղադրված կրպակները և տաղավարները կարիք ունեն կանոնակարգման և վերակառուցման:

Հիմնախնդիրներ

1. *Երևան քաղաքի ծայրամասային վարչական շրջաններում նոր առևտրի և սպասարկման նոր օբյեկտների կառուցում:*
2. *Գյուղատնտեսական արտադրանքի ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ նոր շուկաների կազմակերպում:*
3. *Պիտանիության ժամկետներն անցած ապրանքների վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացում:*
4. *Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ մշտական հսկողության սահմանում:*
5. *Ապամոնտաժման կամ արդիականացման կարիք ունեն Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների), ինչպես նաև բացօթյա փոքրածավալ շուկաների ու տոնավաճառների և շինանյութերի վաճառքի կետերի մի մասը:*
6. *Առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների՝ առևտրի օբյեկտից դուրս ցուցադրումն արգելելու և օրենսդրական*

պահանջներն ապահովելու ուղղությամբ հսկողության խստացման անհրաժեշտություն:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենքով տրված լիազորությունների շրջանակներում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում:
- Կշարունակվեն միջոցներ ձեռնարկվել Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի վերացման ուղղությամբ: Երեկոյան ժամերին, հանգստյան և տոնական օրերին բացօթյա ապօրինի առևտուրը արգելելու և կանխարգելելու նպատակով մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում և հրապարակներում կսահմանվի հերթապահություն:
- Կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպման գործընթացը:
- Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում:
- Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում:
- Անհրաժեշտ հսկողության իրականացում Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին, խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ:
- Անհրաժեշտ միջոցառումների իրականացում առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ:
- Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում:
- Հետիոտնի երթևեկի խոչընդոտը բացառելու նպատակով աշխատանքներ կտարվեն բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգման ուղղությամբ:
- Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման կամ արդիականացման ուղղությամբ:
- Հետևողական աշխատանքներ կիրականացվեն սեփականաշնորհված տարածքներում շինանյութերի վաճառքի կետերի պարտադիր պարսպապատման ու սահմանազատման ապահովման, սանիտարական կանոնների պահպանման և շրջակա միջավայրի աղտոտման բացառման ուղղությամբ:
- Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում: Թափառող կենդանիների վնասազերծման ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմերի մշակում, միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդրում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի

ձևավորում: Կուսումնասիրվեն նաև թափառող կենդանիների դեմ պայքարի կազմակերպման, ընտանի կենդանիների պահելու կանոնների, շների զբոսանքի կազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ տարբեր երկրներում կիրառվող առաջավոր փորձը, և աշխատանքներ կիրականացվեն դրա ներդրման ուղղությամբ:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարում

Երևանում առկա 4883 բազմաբնակարան շենքերից 4572-ի կառավարումն իրականացվում է 181 համատիրությունների կողմից, 169-ը՝ լիազորագրային կառավարիչների, 122-ը՝ վարչական շրջանների ղեկավարների կողմից:

ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» հ.1161-Ն որոշման հիման վրա Երևանի քաղաքապետարանում մշակվել և կիրառվել են պարտադիր նորմերի վերահսկման մեխանիզմներ: Դրա արդյունքում բարձրացել է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը, բարելավվել է կառավարման մարմինների հաշվետվողականությունը՝ դառնալով ավելի թափանցիկ:

«Համատիրությունների մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքներով սահմանված վերահսկողության մեխանիզմների ոչ հստակությունը որոշակի դժվարություններ է ստեղծում ընդհանուր ժողովի հրավիրման, բյուջեների կազմման և հաստատման, ֆինանսական միջոցների գանձման և ծախսման, կանոնադրական այլ պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման համար:

Ոլորտում առկա խնդիրների կարգավորման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագրին:

Ծրագրի շրջանակներում մշակվել և քննարկման փուլում է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի նախագիծը:

Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի թվով 4428 վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից:

Հիմնախնդիրներ

1. *Տանիքների հիմնանորոգման անհրաժեշտություն:*
2. *Ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:*
3. *«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն:*
4. *3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ամրացման անհրաժեշտություն:*
5. *Վերելակային տնտեսության կապիտալ վերանորոգման, արդիականացման և միջազգային չափորոշիչներին համապատասխան սպասարկման անհրաժեշտություն:*
6. *Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո նախատեսվում է ներդնել բազմաբնակարան շենքի կառավարման նոր մոդել, որը

կապահովի գործառույթների հստակեցում, պատասխանատվության սահմանում և բնակչությանը հաշվետու լինելու մեխանիզմներ:

- Նախատեսվում է վերանորոգել բազմաբնակարան շենքերի շուրջ 1615 շքամուտք:
- Կիրականացվի բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 81000քմ հարթ և 43000քմ թեք տանիքների վերանորոգում:
- Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի և ՀՀ Երևան համայնքի միջև 2014թ. փետրվարի 20-ին և դեկտեմբերի 22-ին կնքված փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում կիրականացվի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:
- Պետություն–համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում կմշակվի վերելակային տնտեսության արդյունավետ կառավարման ծրագիր, որով կնախատեսվի վերելակային տնտեսության ամբողջական արդիականացում և միջազգային չափորոշիչներին համապատասխան անվտանգ սպասարկում:

Կոշտ թափոնների կառավարում

Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ: Մայրաքաղաքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1000տ աղբ:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է մրցույթում հաղթող ճանաչված «Սանիթեք» և «Սանիթեք Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունների կողմից: Արդյունքում.

- մշակվել ու ներդրվել են աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի վերահսկման նոր մեխանիզմներ,
- մայրաքաղաքում տեղադրվել են եվրոպական արտադրության ավելի քան 8400 նոր աղբամաններ,
- աղբահանության, սանմաքրման և ձնամաքրման աշխատանքերը սկսել են իրականացվել շուրջ 140 նոր մեքենա-սարքավորումներով:

Նուբարաշենի քաղաքային աղբավայրը գործարկվել է 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա՝ զբաղեցնելով շուրջ 52.3 հա տարածք:

Մայրաքաղաքի տարածքից Նուբարաշենի աղբավայր է տեղափոխվում տարեկան միջին հաշվով 290-320 հազ. տոննա կենցաղային աղբ: Այն ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել որևէ ընդունված ստանդարտով որպես աղբավայր, չի համապատասխանում միջազգային /կամ որևէ/ տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշներին և բացառապես հանդիսանում է որպես աղբի կուտակման վայր:

Աղբավայրում առկա չէ հիմքի մեկուսացում և չի կատարվում առաջացող մեթան գազի հավաքում: Աղբավայրը չունի ժամանակակից պահանջները բավարարող հոսքաջրերի հավաքման որևէ տեխնիկական համակարգ, որի պատճառով հոսքաջրերը հոսում են առկա աղբավայրից դուրս՝ առանց որևէ պաշտպանիչ արգելքների: Աղբավայրը չունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ հավաքվող աղբն ընդունելու համար: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում ու խառնվում են (հիմնականում առանց տոփանման) թափոնների հավաքագրման առաջնային գծում: Աղբավայրը ցանկապատված և առանձնացված չէ: Նվազագույն ընդունելի շահագործում իրականացնելու համար աղբավայրն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ և որակի մեքենա-մեխանիզմներով:

Քաղաքային աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումը, ինքնաբռնկման երևույթները կանխելու նպատակով 2009թ. Երևանի քաղաքապետարանը ճապոնական

«Շիմիձու» ընկերության հետ կնքել է համաձայնագիր Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի իրականացման վերաբերյալ: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում մինչև 2023 թվականը, ըստ հաշվարկների, պետք է իրականացվի 512 հազար տոննա $C0_2$ գազին համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:

Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի խցանված աղբամուղերի մաքրման, ախտահանման, աղբընդունիչի վերանորոգման, շինարարական աղբի տեղափոխման, ինչպես նաև գետերի հուների մաքրման աշխատանքների իրականացման համար կնքվել է ծառայությունների գնման պայմանագիր:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի քաղաքային նոր աղբավայրի կառուցում ժամանակակից միջազգային չափանիշների խստագույն պահպանմամբ:*
2. *Գործող աղբավայրերի մեկուսացում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան:*
3. *Մայրաքաղաքում աղբավերամշակման գործարանի կառուցման իրագործելիության բազմակողմ ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում կառուցում՝ համայնք-մասնավոր հատվածի փոխշահավետ համագործակցությամբ*
4. *Չսահմանված վայրերում աղբ թափելու նկատմամբ վերահսկողության խստացում՝ իրավական ակտերի հստակ ամրագրմամբ*
5. *Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի բարելավմանը զուգահեռ նախատեսվում է մեկնարկել Երևան քաղաքում նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման ծրագիրը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է Նուբարաշենի գործող աղբավայրի հարակից տարածքում կառուցել նոր, միջազգային չափորոշիչներին համապատասխան աղբավայր՝ բոլոր ենթակառուցվածքներով, ինչպես նաև մեկուսացնել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը, կառուցել արտանետվող գազերի հավաքման և այրման կայան, տեղադրել գեներատոր էլեկտրաէներգիայի ստացման համար:
- Նոր աղբավայրի ամբողջ տարածքը նախատեսված է կառուցել 8.8 մլն $մ^3$ աղբի ծավալի համար: Երևան քաղաքում տարեկան 300 հազար տոննա աղբի գնահատված ծավալի պարագայում կապահովվի շուրջ 28 տարի շահագործում: Աղբի ծավալների փոփոխությամբ պայմանավորված, մասնավորապես աղբի վերամշակման արդյունքում, աղբավայրի շահագործման ժամկետը կավելանա: Նոր աղբավայրը կծառայի Երևան քաղաքին և հարակից 4 համայնքներին:
- Միջոցներ կձեռնարկվեն աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավման, ինչպես նաև չնախատեսված վայրերում աղբ տեղադրելու դեպքերը կանխելու և բացառելու ուղղությամբ:
- 2018 թվականին կմշակվի նաև աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման և արդյունավետ շահագործման ծրագիր, որը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում:

Արտաքին լուսավորություն

Երևանում 2017թ. տարեսկզբից շահագործվում է 1555 կմ արտաքին լուսավորության ցանց, մասնավորապես՝ 2165 օբյեկտներ (փողոցներ, բակեր, այգիներ, արձաններ, և այլն), առկա են 66314 հատ տարբեր տիպի լուսատուներ, որոնք մոնտաժված են 40524 հատ հենասյուների վրա: Շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը վերջին տարիների ընթացքում կապիտալ ներդրումների հաշվին իրականացված աշխատանքների շնորհիվ զգալի աճել է:

Հիմնախնդիրներ

1. *Չլուսավորվող նրբանցքների, բակերի, խաղահրապարակների և փողոցների լուսավորում:*
2. *Նոր տրանսպորտա-տեխնիկական սարքավորումների, ցանցի ավտոմատացման, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրում:*
3. *Կապի և կառավարման համակարգի ներդրում, դիսպետչերական ծառայության ավտոմատացում:*
4. *Լուսային էներգաարդյունավետ և ժամանակակից խնայողական սարքավորումների տեղադրում:*
5. *Վերգետնյա մալուխային ցանցի անցկացում ստորգետնյա խրամուղիներով:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել 1640 կմ արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ: 2018թ. նախատեսվում է նաև իրականացնել արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, որի շնորհիվ կվերականգնվի ևս 30կմ արտաքին լուսավորության ցանց և տարեվերջին Երևան քաղաքի շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1670կմ: Նախատեսվում է շարունակել նաև բակային տարածքների լուսավորության գործընթացը:
- Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի հետ համագործակցությամբ կիրականացվի Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության համակարգերի արդիականացումը:

  Իրականացվող աշխատանքների արդյունքում նախատեսվում է՝
  - նատրիումային լուսատուները փոխարինել որակյալ և ժամանակակից լուսադիոդային լուսատուներով,
  - անհրաժեշտության դեպքում վերանայել հենասյուների բարձրությունը և տեղադրման հեռավորությունը՝ երթևեկելի և հետիոտնի համար նախատեսված վայրերում ապահովելով առանց ստվերի լուսավորություն,
  - իրականացնել գոյություն ունեցող մալուխային ցանցի անցկացումը ստորգետնյա խրամուղներով,
  - հաշվի առնելով լուսադիոդային լուսատուների լուսատեխնիկական տվյալները. վերակառուցել վերը նշված փողոցների հենասյուները:

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում, վերականգնվող նպատակային ֆինանսական ֆոնդում կուտակված խնայողության հաշվին, նախատեսվում է շարունակել արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները, մասնավորապես նատրիումական լուսատուները փոխարինել ժամանակակից լուսադիոդային լուսատուներով:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևան քաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է ավտոբուսներով, միկրոավտոբուսներով, տրոլեյբուսներով և մետրոպոլիտենով:

Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի համակարգն իր մեջ ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 53 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում:

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների 668 ավտոբուսով: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և 18 մասնավոր կազմակերպությունների կողմից:

Երևան քաղաքում գործող երթուղային ցանցով նախատեսված է 46 ավտոբուսային երթուղի (616 միավոր շարժակազմ), որից փաստացի գործում են 41 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 430-440 միավոր շարժակազմ:

Գործող երթուղային ցանցով նախատեսված է 68 միկրոավտոբուսային երթուղի (1421 միավոր շարժակազմ): Փաստացի գործում է 72 միկրոավտոբուսային երթուղի (երթուղային ցանցով նախատեսված թվով 4 ավտոբուսային երթուղիներ դեռևս սպասարկվում են միկրոավտոբուսներով), որոնք համալրված են տարբեր մակնիշների մոտ 1400 միկրոավտոբուսներով, օրական երթուղիներ է դուրս բերվում միջին հաշվով 1000-1100 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են 39 մասնավոր կազմակերպություններ:

Վերջին տարիներին միկրոավտոբուսների թվաքանակի կրճատման հետևանքով զգալիորեն (մոտ 1200-ով) նվազել է միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը (այդ թվում՝ 2017 թվականին): Չնայած դրան, այսօր մայրաքաղաքում ուղևորափոխադրումների հիմնական մասը դեռևս իրականացվում է միկրոավտոբուսներով:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է 79 տրոլեյբուս (1-ը՝ տեխօգնության): Գործող երթուղային ցանցով նախատեսված է 10 տրոլեյբուսային երթուղի (108 միավոր շարժակազմ), որից փաստացի սպասարկվում են 5 տրոլեյբուսային երթուղիներ, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 45-48 միավոր շարժակազմ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերլուծությունը ցույց է տվել, որ 2017թ. որոշակիորեն նվազել է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը (մոտ 5.5%-ով) և տեսակարար կշիռը ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում կազմել է մոտ 2.6%:

Երևանի մետրոպոլիտենում առկա է 45 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ):

Վերջին տարիներին մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում արձանագրվել է կայունացման և աճի միտում: 2017թ. ևս արձանագրվել է ուղևորափոխադրումների ծավալի որոշակի աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մոտ 3.2%-ով: Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների

տեսակարար կշիռը ևս ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում աճել է և կազմում է մոտ 7.7%:

2017 թվականին Երևանի քաղաքապետարանը հայտարարել է Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների մեկնարկի մասին, ինչի շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի հիման վրա մշակում է մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների փաթեթ, որն իրենից ենթադրում է հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա նոր արդյունավետ երթուղային ցանցի նախագծում, հստակ պատկերացում տրանսպորտային պարկի քանակի և տեսականու, սպասարկման չափորոշիչների, ինչպես նաև ուղևորահոսքի մասին, միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորության վերլուծություն, զեղչային համակարգի կիրառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն ու շահագործում և այլն:

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպելու նպատակով սահմանված է թվով 836 կանգառ, որոնցից 348-ում տեղադրված են կանգառասրահներ և կանգառանշաններ, 488-ում՝ միայն կանգառանշաններ:

Մայրաքաղաքի նոր երթուղային ցանցի ներդրումը ենթադրում է նաև շարունակել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների որոշ նախկին կանգառների վերականգնման, ինչպես նաև, ըստ նոր երթուղիների ուղեգծերում ընդգրկված ճանապարհահատվածների՝ նոր կանգառների սահմանման ուղղությամբ նախկինում մեկնարկած աշխատանքները:

Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի ոլորտի կանոնակարգման նպատակով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ընթանում են գործնական միջոցառումներ՝ մայրաքաղաքի համայնքային սեփականությունը հանդիսացող փողոցներում (ճանապարհահատվածներում) և հրապարակներում կայանատեղերի կազմակերպման ու կահավորման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ:

Որպես էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոց Երևան քաղաքում էլեկտրամոբիլների տարածմանը խթանելու նպատակով Երևանի ավագանու 14.02.2017թ. հ.675-Ն որոշմամբ որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար սահմանվել է ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշումներով, թվով 50 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց թույլատրվել է կազմակերպել, ինչպես նաև շարունակել նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

Երևանի քաղաքապետի թվով 18 որոշումներով սահմանվել է թեթև մարդատար տաքսի-ավտոմոբիլների 137 հատ կայանատեղ:

Հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկման մատչելիության և հարմարավետության ապահովման նպատակով հատուկ վերելակային հարմարանքներով կահավորվել և Երևան քաղաքի ներքաղաքային երթուղիներում շահագործվում են թվով 25 «ՀԻԳԵՐ» մակնիշի ավտոբուսներ: Բացի այդ, թվով 2 «ԼԻԱԶ» մակնիշի տրոլեյբուս իրենց կառուցվածքով հարմարեցված են (կահավորված են թեքահարթակով) հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկումն

իրականացնելու համար: Նմանատիպ թեքահարթակով կահավորված են նաև Երևան «Սիթի-Տուր» զբոսաշրջային ավտոբուսները:

Հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մայրաքաղաքի հյուրերի համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման նպատակով «Հիզեր» մակնիշի թվով 110 քաղաքային ավտոբուսների ուղևորասրահներում տեղադրվել են կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման սարքեր և ներկայումս իրականացվում է կանգառների հայտարարումը հայերեն և անգլերեն լեզուներով:

Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման անհրաժեշտությունը՝ կայանատեղերի կահավորման աշխատանքների շրջանակներում մեկնարկել է և հետևողականորեն լուծում է ստանալու նաև հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց տեղափոխող տրանսպորտային միջոցների համար առանձնացված տեղերի նախատեսման խնդիրը: Այդ համատեքստում թվով 101 վճարովի կայանատեղերում, համապատասխան կահավորանքի միջոցով, առանձնացվել են տեղեր հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցների համար:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.190-Ն որոշման համաձայն ընթանում է հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց փոխադրող տրանսպորտային միջոց վարող անձանց տրանսպորտային միջոցների համար ավտոկայանատեղի վճարների արտոնությունների տրամադրումը:

Հիմնախնդիրներ

1. *Ոչ արդյունավետ գործող երթուղային ցանց. այն չի բավարարում մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող առկա պահանջներին:*
2. *Միասնական տոմսային համակարգի բացակայություն:*
3. *Ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմերը համալրված չեն:*
4. *Վերգետնյա տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բարվոք վիճակ:*
5. *Ուղևորների փոխադրման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն:*
6. *Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռը:*
7. *Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի ոչ բավարար մակարդակ:*
8. *Վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսության վիճակը բավարար չէ:*
9. *Երևանի մետրոպոլիտենի հնարավորությունները սահմանափակ են, շարժակազմի և տնտեսության վիճակի բարելավման անհրաժեշտություն կա:*
10. *Ճանապարհատրանսպորտային գործոնների բնութագրիչներին համահունչ զարգացումը թելադրում է ճանապարհային երթևեկության կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրավիճակային համապատասխանեցում:*
11. *Հասարակական տրանսպորտի կանգառների ոչ արդյունավետ տեղաբաշխվածություն, դրանք ամբողջությամբ բարեկարգված և կահավորված չեն:*
12. *Հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկման մակարդակի ոչ բավարար մակարդակ:*
13. *Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի նոր, արդյունավետ երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի մշակման և ներդրման աշխատանքների իրականացում:
- Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում կառավարման համակարգի փոփոխությունների մեկնարկ՝ ապահովելով ցանցին համապատասխան ավտոբուսների և այլ ենթակառուցվածքների համալրումը:
- Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում միկրոավտոբուսների շահագործման բացառում:
- Մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, ինչպես նաև մետրոպոլիտենի դրենաժային թունելի կառուցում և ընդլայնում («Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների հատվածում մոտ 1կմ երկարությամբ), գործող թունելի վիճակի բարելավում (ներառյալ հակակոռոզիոն ծրագիր), վագոնների հիմնանորոգում և արդիականացում, շարժասանդուղքների հիմնանորոգում:
- Վերգետնյա էլեկտրատրանսպորտի հետագա զարգացմանը, շահագործման անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ նոր տրոլեյբուսների ներկրում, ընդհանուր տնտեսության, հպակային ցանցի, մալուխային տնտեսության բարելավում, առկա շարժակազմի հիմնանորոգում:
- Հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխվածության վերանայման և կահավորման աշխատանքների իրականացում:
- Վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպմանն ու շահագործմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման աշխատանքների իրականացում:
- Թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլների կայանատեղերի սահմանման և կազմակերպման աշխատանքների իրականացում:
- Ճանապարհային երթևեկության կազմակերպչական լուծումների կիրառում:
- Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական կրթություն

Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների ընդհանուր թիվը 159 է, աշակերտների ընդհանուր թիվը 2017թ.՝ 93590, որից միջնակարգ դպրոցի շրջանավարտներ՝ 418, հիմնական դպրոցի շրջանավարտներ՝ 7753:

Պետության կողմից քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակում հետևողական աշխատանք է տարվել Երևանի 159 դպրոցներում կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ, սակայն դպրոցները հիմնականում կարիք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազայով ապահովման և գույքի նորացման, իսկ շենքերը՝ վերանորոգման:

Երևանի քաղաքապետարանի հանրակրթական հաստատություններում կրթության որակի բարելավման և մրցունակության ապահովման նպատակով՝ մշակվել և իրականացվում են ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր՝ կրթության ազգային ինստիտուտի, տարբեր բուհերի համապատասխան ամբիոնների և այլ կրթական հաստատությունների, ինչպես նաև կրթական ծրագրեր իրականացնող միջազգային հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ներառական կրթություն է իրականացվում մայրաքաղաքի 54 դպրոցներում, որտեղ աշխատում են շուրջ 384 հատուկ մանկավարժներ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ և լոգոպեդներ:

Դպրոցները հիմնականում ապահովված են համակարգիչներով և պարբերաբար համալրվում են: Դպրոցներում առկա են էլեկտրոնային գրատախտակներ, էլեկտրոնային ձեռնարկներով գրադարաններ:

Կազմակերպվել են գիտելիքների միջդպրոցական մրցույթներ, ստուգատեսներ, դպրոցական առարկայական օլիմպիադաներ՝ մրցանակներով և անվանակարգերով խրախուսվող դպրոցականների օրինակը միջոց դարձնելով ուսման նկատմամբ պատասխանատվության բարձրացման: ՀՀ դպրոցական առարկայական օլիմպիադաներից դիպլոմների արժանացած դպրոցականների ընդհանուր թիվը 417 է:

Մշակվում և իրականացվում են տարվա հոբելյարներին նվիրված համադպրոցական միջոցառումներ:

Հաջողությամբ ավարտվել է շախմատի մուտքը դպրոց, աշակերտները ապահովված են դասագրքով, դպրոցները՝ համապատասխան գույքով: Երևանի բոլոր վարչական շրջաններում երեխաների համար ապահովվել է շախմատի դպրոցի հասանելիությունը անվճար հիմունքներով:

Ուշադրության կենտրոնում են սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները. ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցությամբ իրականացվում են զինվորների ու դպրոցականների համատեղ միջոցառումներ զորամասերում ու դպրոցներում, ինչպես նաև փոխայցելություններ:

Անցկացվում է դպրոցականների առարկայական օլիմպիադան՝ կիրառելով կազմակերպման առցանց ձևը:

Շարունակվում է սիրիահայ երեխաների կրթության և ինտեգրման գործընթացը ՀՀ կրթական ծրագրով՝ իրենց ընտրած դպրոցներում:

Հետևողականություն է դրսևորվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հիմնական կրթության ապահովման նկատմամբ:

Չնայած կատարված աշխատանքներին՝ առաջնահերթ է մնում դպրոցների նորոգման և գույքի նորացման խնդիրը:

Փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են ուսուցիչների և աշակերտների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքներ /Ստեփանակերտ, Սանկտ Պետերբուրգ/, իսկ համագործակցության ծրագրերի շրջանակում՝ Գերմանիայի Դաշնային և Իրանի Իսլամական հանրապետություններ /Սպահան/:

Հիմնախնդիրներ

1. *Դպրոցների հիմնանորոգում. շենքային պայմանների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:*
2. *Դպրոցների մարզադահլիճների և սպորտհրապարակների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:*
3. *Ներառական կրթություն իրականացնող դպրոցների և հատուկ դպրոցների շենքային պայմանների համապատասխանեցում սովորողների ֆիզիկական կարիքներին: Համընդհանուր ներառման մեկնարկի համար լիարժեք պայմանների ապահովում:*
4. *Ներառական կրթություն իրականացնող դպրոցների և միջազգային կազմակերպությունների համագործակցության ընդլայնում:*
5. *Դպրոցների գրադարանային ֆոնդի համալրում գեղարվեստական, մեթոդական և մասնագիտական գրականությամբ: Էլեկտրոնային գրադարանների ստեղծում, հարստացում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Ապահովել համագործակցություն՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկատիրական միություն» ՀԿ-ի հետ՝ դպրոցներում ինժեներական խմբակ-լաբորատորիաների ստեղծման մեկնարկային ծրագրի /ռոբոտաշինություն/ իրականացման նպատակով:
- Շարունակել սովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված գործընթացները՝ դասապրոցեսում նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառումը ապահովելու համար:
- Դպրոցականի ազգային նկարագրի ձևավորման, Երևանի նկատմամբ սիրո և պատասխանատվության խորացման նպատակով՝ դպրոցներում խմբակի ձևով կամ դասղեկական ժամերին ուսումնասիրել «Երևանագիտություն» առարկան՝ Երևան քաղաքի պատմության թանգարանի, «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի» համագործակցությամբ:
- Արժևորելով մայրաքաղաքի վաստակաշատ մանկավարժների ներուժը՝ Երևանյան դպրոցներում կազմակերպել փորձի փոխանակում, վարպետաց դասերի կազմակերպում՝ տարվա լավագույն տնօրենների, ուսուցիչների, վաստակավոր մանկավարժների, Խորենացու մեդալակիրների, տարակարգ ունեցող ուսուցիչների ուժերով՝ համաձայն ժամանակացույցի:
- Փորձի փոխանակման նպատակով շարունակել ուսուցիչների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ: Կազմակերպել աշակերտների փոխայցելություններ:
- Ձեռնարկել միջոցներ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման՝ ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն Երևանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում համընդհանուր ներառական կրթության ներդրման ուղղությամբ՝ համագործակցելով ՀՀ կրթության և գիտության,

ֆինանսների նախարարությունների և համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ:

- Համամագործակցություն ներառական կրթություն իրականացնող դպրոցների և ծնողների միջև՝ երեխայի կարիքով պայմանավորված աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով:
- Դպրոցների բազմամասնագիտական խմբերի վերապատրաստումներ՝ համապատասխան ՀԿ-ների աջակցությամբ:
- UCOM ընկերության համագործակցությամբ՝ Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի զարգացման նպատակով:
- «Օգնի՛ր դպրոցիդ» կայք էջերի ակտիվացմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Շարունակել բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ դպրոցի ծրագրի իրականացումը:
- Մանկավարժների խրախուսման նպատակով շարունակել «Երևան քաղաքի տարվա լավագույն տնօրեն, տարվա լավագույն ուսուցիչ», ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարության նույնանուն մրցույթների քաղաքային փուլերի անցկացումը, սովորողների մարզական, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի /քաղաքային, հանրապետական փուլեր/, առարկայական օլիմպիադաների կազմակերպումը և անցկացումը:
- Իրականացվող մարզական և այլ կարգի մրցույթներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկում: Վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրերի իրականացման շարունակականության ապահովում:

Նախադպրոցական կրթություն

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 160 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 30067 է:

Երեխաների դպրոցական կրթության համար մեկնարկային հավասար պայմաններ ստեղծելը առաջնային խնդիր է եղել: Արդյունքում Երևանի քաղաքապետի՝ 31.03.2011թ հ.1101-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում Երևան քաղաքում հաշվառված ծնողների համար երեխաների նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար՝ քաղաքապետարանի ֆինանսական ներդրմամբ:

Մայրաքաղաքում գործող ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը հասնում է շուրջ 60-ի:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներում յուրաքանչյուր երեխայի բազմակողմանի զարգացման, ունակությունների, ձիրքերի դրսևորման համար հավասար պայմաններ ապահովելու նպատակով՝ հիմնովին լուծվել է մանկապարտեզների ջեռուցման հիմնախնդիրը, մշակվել և ներդրվել է էլեկտրոնային հերթագրման համակարգ:

Յուրաքանչյուր տարի՝ սկսած 2011 թվականից, ապահովվել է շուրջ 30000 երեխայի նախադպրոցական անվճար կրթություն:

Ներառական կրթություն է իրականացվում 8 կենտրոններում՝ 168 ներառված երեխաների համար:

Հիմնախնդիրներ

1. *Մանկապարտեզների շենքային պայմանների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին, ինչպես նաև երեխաների ֆիզիկական կարիքներին:*
2. *Ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների մանկավարժական համակազմի համալրում՝ համապատասխան մասնագետներով:*
3. *Էլեկտրոնային գրադարանների ստեղծում մանկապարտեզներում:*
4. *Մանկապարտեզներում նորագույն տեխնոլոգիաների ներդրման շարունակական աշխատանքների անհրաժեշտություն:*
5. *Դպրոցների ազատ տարածքների հարմարեցումամբ կամ համապատասխան տարածքի հնարավորություն ունեցող մանկապարտեզներում առանց քնի և մեկանգամյա սննդով նախադպրոցական կրթության կազմակերպում 5-6 տարեկան մանկապարտեզ չհաճախող երեխաների համար:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Մանկապարտեզների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում:
- Անվճար նախադպրոցական ծրագրի շարունակականություն:
- Մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ միջոցառումների իրականացում:
- Արժևորելով մայրաքաղաքի վաստակաշատ մանկավարժների ներուժը՝ Երևանյան մանկապարտեզներում կազմակերպել փորձի փոխանակում, վարպետաց դասերի կազմակերպում՝ տարվա լավագույն տնօրենների, դաստիարակների ուժերով:
- Փորձի փոխանակման նպատակով շարունակել մանկապարտեզների դաստիարակների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ:
- Համագործակցություն ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների և ծնողների միջև՝ երեխայի կարիքով պայմանավորված աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով:
- Մանկապարտեզներում ներառված երեխաների հետ աշխատող մասնագետների վերապատրաստումներ՝ համապատասխան ՀԿ-ների աջակցությամբ:
- Շարունակել բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ մանկապարտեզի ծրագրի իրականացումը:
- Դաստիարակների խրախուսման նպատակով շարունակել «Երևան քաղաքի տարվա լավագույն տնօրեն, տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների կազմակերպումը և անցկացումը:
- Մանկապարտեզների բոլոր աշխատակիցներին առողջապահության ապահովագրության փաթեթների տրամադրում:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտում քաղաքային իշխանությունների քաղաքականության հիմնական նպատակը բնապահպանական անվտանգության ապահովումն է, այդ թվում մայրաքաղաքի կայուն և համաչափ զարգացման նպատակով շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը, կանխատեսումն ու կանխարգելումը, ինչպես նաև կանաչապատումն ու շրջակա միջավայրի պահպանությունը:

Ներկայումս Երևան քաղաքի կանաչ տնկարկները կազմում են 6762,5 հա, որից 862.0 հեկտարն է ընդհանուր օգտագործման, իսկ յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող կանաչ տարածքը կազմում է 7,8 մ^2:

Տրանսպորտային միջոցների մեծ թիվը, ինչպես նաև ժամանակին արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը զգալիորեն վատթարացրել են Երևան քաղաքի և նրա շրջակա տարածքի օդային ավազանի ու հողերի վիճակը: Իրավիճակի բարելավմանը նպաստում է կանաչ տնկարկների հիմնումը, ընդլայնումը և վերականգնումը:

Երևան քաղաքի անբարենպաստ կլիմայական և էկոլոգիական պայմաններում կանաչ տարածքներն ունեն սանիտարահիգիենիկ և միկրոկլիմայական պայմանները բարելավելու, գեղեցիկ լանդշաֆտա-դիզայներական տեսք հաղորդելու նշանակություն:

Հիմնախնդիրներ

1. *Անխափան ոռոգում երաշխավորող ոռոգման ցանցի ընդլայնում և կառուցում:*
2. *Բնապահպանության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում:*
3. *Շրջակա միջավայրի /օդ, ջուր, հող/ աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում:*
4. *Կանաչ տարածքների հետևողական վերականգնում և ընդլայնում:*
5. *Հանգստի գոտիների ստեղծում և վերականգնում:*
6. *Մայրաքաղաքի արվարձաններում և մերձակա տարածքներում բնապահպանական վիճակը բարելավելու նպատակով՝ ֆունկցիոնալ դերակատարություն ունեցող, փոշեկլանիչ հատկություններով օժտված և քամիների ուժգնությունը մեղմացնող ծառատեսակների տնկման անհրաժեշտություն:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կշարունակվեն գարնանային և աշնանային ժամանակահատվածում ծառերի ձևավորման աշխատանքները: Կձևավորվի շուրջ 27.000 ծառ: Տարվա կտրվածքով կիրականացվի սանիտարական ձևավորման, խորը և կանաչ էտի աշխատանքներ:
- Կտնկվի շուրջ 46.000 հատ ծառ և թուփ: Մասնավորապես կտնկվեն սոսիներ, թխկիներ, ակացիաներ, թույաներ և այլն: Կտնկվի 2.730.000 ծաղկասածիլ, այդ թվում վարդակակաչ: Բուժման կենթարկվի շուրջ 30.000 ծառ: Կկրապատվի 75.000 ծառ: Աշխատանքներ կիրականացվեն նաև հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ «Ծառատունկ» հայ-ամերիկյան ծրագրի հետ:
- Նախատեսվում է տեղադրել թվով 60 գեղարվեստական կոմպոզիցիա՝ թափվող ծաղիկներով, որոնք կտեղադրվեն մայրաքաղաքի գլխավոր փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում և պուրակներում:

- Կներկրվի 10526 խմ բուսահող, ինչը հնարավորություն կստեղծի բարելավել սիզամարգերի հողային կառուցվածքը:
- Նախատեսվում է ստեղծել նոր ոռոգման ցանց Մոսկովյան փողոցում (Կենտրոն վարչական շրջան) և Շիրակի փողոցում: Հրազդանի կիրճում կկառուցվի պոմպակայան և կմիացվի Արաբկիր զբոսայգու գործող ոռոգման համակարգին:
- Ամենօրյա աշխատանքներ կիրականացվեն կանաչապատ տարածքների պատշաճ սպասարկումն իրականացնելու ուղղությամբ, այդ թվում՝ վերակառուցվող թվով 5 հանգստի գոտիներում:
- Աշխատանքներ կկատարվեն միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացմանը միտված ծրագրի իրագործելիության ուսումնասիրման աշխատանքների համար նախադրյալների ստեղծման նպատակով:

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առողջապահության ոլորտի գերակայությունը առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, մատչելիության ապահովումը, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Երևանի ենթակայությամբ գործում է 31 առողջապահական կազմակերպություն, որոնցից 4-ը բժշկական կենտրոն են (այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 3 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց), 2-ը՝ դիսպանսեր, 1-ը՝ շտաբուժօգնության ծառայություն, 1-ը՝ գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 1-ը՝ ծննդատուն և 22-ը՝ պոլիկլինիկա: Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններից 24-ը մատուցում է ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն:

2010-2017թթ. ընթացքում Երևանի ենթակայության առողջապահական ընկերություններում իրականացվել են վերը նշված գերակայության ապահովմանն ուղղված մի շարք գործողություններ, մասնավորապես՝ շենքերի մասնակի վերանորոգում, հիմնանորոգում, թեքահարթակների կառուցում, տեխնիկական հագեցում, դժվարամատչելի ծառայությունների մատուցում, ջեռուցման համակարգի անցկացում, ընդ որում՝ 2016 թվականին Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունները ամբողջությամբ ապահովվել են ջեռուցման համակարգերով, իսկ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների մոտ 50%-ում կատարվել են պատուհանների փոխարինման աշխատանքներ: Ջեռուցման համակարգի անցկացման կարևորությունը ավելի է մեծանում, եթե հաշվի առնենք, որ բուժհաստատությունների մեծ մասում բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ են մատուցվում նաև երեխաներին:

Որակյալ բուժծառայությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հագեցվածությունը: Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների բարոյապես և ֆիզիկապես մաշված սարքավորումները փոխելու և արդի բուժման նոր մեթոդներին համապատասխանացնելու նպատակով 2013-2017թթ. ձեռք է բերվել և բուժհաստատություններին անհատույց օգտագործման հիմունքերով տրամադրվել է 223 ժամանակակից բուժսարքավորում՝ այդ թվում 3 ռենտգեն ապարատ: Երևանի ենթակայությամբ ժամանակակից պահանջներին համապատասխանող և մրցունակ ծննդատուն ունենալու նպատակով 2017 թվականին ձեռքբերված սարքավորումների հիմնական մասը, ինչպես նաև 79 անուն գրասենյակային և տնտեսական կահույք տրամադրվել է ամբողջովին հիմնանորոգված և վերաբացված «Քանաքեռ-Զեյթուն» ծննդատուն ՓԲԸ-ին:

Արդյունքում՝ հնարավոր եղավ Երևանի ենթակայության գործող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բուժհաստատությունները հագեցնել նոր ժամանակակից պահանջներին համապատասխանող բուժսարքավորումներով, որը նպաստեց ինչպես մատուցվող բուժծառայությունների որակի բարձրացմանը, այնպես էլ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների ավելացմանը, այսինքն՝ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններից սկսեցին օգտվել ոչ միայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք՝ պետական պատվերի շրջանակներում, այլ նաև վճարովի հիմունքերով մատուցվող ծառայություններից օգտվող քաղաքացիներ:

Ծրագիրն իր հերթին նպաստեց նաև վճարովի հիմունքերով մատուցվող բժշկական ծառայությունների ծավալի ավելացմանը, որը հնարավորություն է տալիս ստանալ

լրացուցիչ եկամուտ, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս ոչ միայն ապահովել բուժհաստատությունների ընթացիկ գործունեությունը, այլև ստեղծել ֆոնդեր՝ հետագա զարգացման համար:

Կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտությունը շատ կարևոր է առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար, իսկ պետության կողմից երաշխավորված թանկարժեք ու դժվարամատչելի հետազոտությունների ցանկում ներառված լինելը այն հասանելի չի դարձնում հասարակության լայն շերտերի համար, որն էլ կարևոր հիմնախնդիրներից մեկն է Երևան համայնքի բնակիչների համար բուժծառայությունների մատուցման մատչելիության ապահովման տեսանկյունից: Այս խնդրի կարգավորման նպատակով Երևան քաղաքապետարանի կողմից ձեռք է բերվել կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, որից 2014 թվականից առ այսօր օգտվել է 843 քաղաքացի: Նշված ծառայության ձեռքբերումը հնարավորություն է տալիս որոշ չափով մեղմել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովել առանձին խմբերում ընդգրկված անձանց համար նշված ծառայության սպառումը:

Հիմնախնդիրներ

1. *Բժշկական ծառայությունների որակի բարձրացում:*
2. *Թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում:*
3. *Առողջապահական հաստատությունների հիմնանորոգում:*
4. *Բժշկական սարքավորումների արդիականացում և տեխնիկապես հագեցում:*
5. *Հիվանդությունների վաղ հայտնաբերման և հետագա արդյունավետ բուժման նպատակով սկրինինգային հետազոտությունների անցկացում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Լիարժեք ախտորոշում և արդյունավետ բուժում իրականացնելու նպատակով Երևանի բնակիչների համար նախատեսվում է ձեռք բերել թանկարժեք և դժվարամատչելի հետազոտություններ, այդ թվում՝
    1. կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 135 հատ,
    2. մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 60 հատ:
- Երևան քաղաքի բնակչության շրջանում ածխաջրատային փոխանակության խանգարմամբ (ավելցուկային քաշ, ճարպակալում, մետաբոլիկ համախտանիշ, շաքարային դիաբետ) և սրտանոթային շատ բարձր ռիսկով այցելուների տարածվածության աստիճանը գնահատելու, ինչպես նաև ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատասխան նորարական բուժական միջոցառումների կիրառմամբ՝ բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով Երևան քաղաքի 2000 բնակիչների շրջանում նախատեսվում է իրականացնել սքրինինգային հետազոտություն:
- Երևան քաղաքի բնակչության շրջանում /մասնավորապես քաղցկեղով հիվանդ, կամ ռիսկի խմբերում ներառված բնակչության շրջանում/ ճիշտ սնուցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով, հիմնվելով ESMO միջազգային ուղեցույցների վրա, նախատեսվում է խմբագրել և տպագրել 200 հատ «Սնուցում և քաղցկեղ» գրքույկ, որը կպատասխանի և բժիշկների և հիվանդների հարցերին:
- Որակյալ բժշկական ծառայության մատուցման և մատչելիության բարձրացման նպատակով Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների համար 2018թ. նախատեսվում է ձեռք բերել նոր բուժսարքավորումներ և բժշկական պարագաներ, մասնավորապես՝ 1 ռենտգեն ապարատ, 1 ցիստոսկոպ, 1

իմունոֆերմենտային անալիզատոր, 2 ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 2 տվիչով /դյուրակիր/, 5 հարվածալիքային թերապիայի սարքավորում, 15 գալվանիզացիայի սարքավորում:

- Երևանի ենթակայության թվով 15 բուժհաստատություններում կատարվելու են տանիքների հիմնանորոգման աշխատանքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ապահովության բնագավառում Երևանի քաղաքապետարանի գործունեությունն ուղղված է մայրաքաղաքում կայուն սոցիալական միջավայրի ապահովմանը, քաղաքացիների սոցիալական երաշխիքների պաշտպանությանն ու իրականացմանը, սոցիալական ռիսկերի աստիճանական կրճատմանը:
Ներկայումս Երևան քաղաքում գործում են 12 սոցիալական աջակցության տարածքային բաժիններ, որոնց միջոցով իրականացվում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության տարբեր խմբերի հաշվառումն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, ինչպես նաև սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության տարբեր խմբերի պետական նպաստների նշանակումը:

Սոցիալական ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում կներդրվի ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը, որը կնպաստի սոցիալական ծառայությունների մատուցման մատչելիությանը, հասցեականության մեծացմանը, տեղեկատվական բազաների միասնական կառավարման համակարգ ստեղծմանը կբարելավվի անհատական սոցիալական ծառայությունների տրամադրման մատչելիությունը և որակը: Ներկայումս 5 վարչական շրջաններում ստեղծվել են սոցիալական ծառայությունների համալիր կենտրոններ:

Առկա խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետարանը համագործակցում է սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող 25 հասարակական կազմակերպությունների հետ: Համագործակցության արդյունքում Երևանում գործում է բարեգործական 18 ճաշարան, որտեղ օրական մեկ անգամ տաք կերակուր է տրվում կարիքավոր շուրջ 2500 շահառուների:

Երևանի քաղաքապետարանում ստեղծվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի Երևանի քաղաքային հանձնաժողով», որի գործունեությունն ուղղված է մայրաքաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց անարգել տեղաշարժն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը, հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ներկայացված առաջնահերթությամբ, մայրաքաղաքի հանրային նշանակության տարբեր վայրերում կառուցում է թեքահարթակներ: Աշխատանքներ են տարվում նաև հանրային տրանսպորտը վերջիններիս համար մատչելի դարձնելու ուղղությամբ: Կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար կատարվում են տարաբնույթ սոցիալական աջակցության ծրագրեր:

Հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվում մայրաքաղաքի փողոցներից, կիսակառույցներից կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անօթևանների հայտնաբերման և ժամանակավոր կացարանում տեղավորման ուղղությամբ: Նրանց տրամադրվում է սնունդ, սոցիալական և իրավական խորհրդատվություն:

Հիմնախնդիրներ

1. *Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանն աստիճանական ինտեգրում և նրանց համար մատչելի միջավայրի ձևավորում:*
2. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում:*

3. *Տարեցների շրջանում աղքատության հիմնախնդրի լուծմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում:*
4. *Միրիահայերի հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացում:*
5. *Անօթևան անձանց հիմնախնդիրների լուծման համար բարենպաստ պայմանների ստեղծում*
6. *Բազմազավակ ընտանիքների սոցիալ-կենցաղային և բնակարանային պայմանների բարելավում*
7. *Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում*:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, կարիքավոր բնակչության հայտնաբերում, հաշվառում, պետական նպաստների նշանակում:

Աջակցություն ՍԱՏԲ-ների կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության տարբեր խմբերի պետական նպաստների նշանակման գործընթացում:

Սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում մայրաքաղաքի ևս 2 վարչական շրջաններում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, որը կնպաստի համալիր սոցիալական ծառայությունների մատուցմանը: Արդյունքում ակնկալվում է նոր որակի ծառայությունների տրամադրում, սոցիալական ծառայությունների մատչելի մատուցում, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակությունն ապահովող ինքնաշխատ ծրագրի կիրառում և հասցեականության մեծացում:

2018թ. ընթացքում Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ 17200 ընտանիքներ, որոնք կստանան պետական նպաստներ:

Համայնքային սոցիալական աջակցության ծրագրեր

Նախատեսվում է կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքներին, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, աղքատ, բազմազավակ ընտանիքներին, պատերազմի վետերաններին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և անօթևան անձանց համար սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրերի իրագործում:

Կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման ծրագրերի իրագործումը ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով, նաև պետություն-ՀԿ-համայնք համագործակցությամբ կազմակերպված ցերեկային խնամքի կենտրոններում:

Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող կանանց համար:

Ապրիլի 7-ի՝ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ կիրականացվեն այցելություններ երևանաբնակ բազմանդամ ընտանիքներ ունեցող մայրերին, երիտասարդ բազմազավակ մայրերին, նոր մայրացող կանանց և կտրամադրվի աջակցություն: Շուրջ 250 ընտանիքների կտրամադրվեն կենցաղային և այլ անհրաժեշտ ապրանքներ:

2018թ. ապրիլի 24-ին Մեծ Եղեռնը վերապրած քաղաքացիներին կտրամադրվի դրամական օգնություն:

Սոցիալապես անապահով երևանաբնակ շուրջ 3000 ծնողների համար կկազմակերպվեն այցելություններ՝ ՀՀ և Լեռնային Ղարաբաղի հանրապետության սահմանամերձ զորամասերում ծառայող իրենց զինվոր որդիներին:

Սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների շուրջ 1200 երեխաներ /7-13 տարեկան/ իրենց ամառային հանգիստը կանցկացնեն Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական ճամբարներում:

Հոկտեմբերի 1-ին տարեցների օրվա կապակցությամբ տարեցներին (մասնավորապես 100 և ավելի տարիք ունեցող) կտրամադրվի դրամական օգնություն և կենցաղային անհրաժեշտ ապրանքներ:

Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների 4000 երեխաների համար նախատեսվում է կազմակերպվել միջոցառումներ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Սոցիալական կարիքի մեջ գտնվող երևանաբնակ քաղաքացիներին կցուցաբերվի դրամական օժանդակություն:

Կշարունակվի նաև անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորման գործընթացը:

Նախատեսվում է տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում, ցերեկային խնամքի կենտրոնների (բարեգործական ճաշարանների) գործունեության կազմակերպում:

Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ստեղծում, նրանց աստիճանական ինտեգրում և սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում: Ծրագրի շրջանակում կիրականացվի տարաբնույթ սոցիալական աջակցությունների և ծառայությունների մատուցում կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց, քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ: Հաշմանդամություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող տրանսպորտային միջոցների համար կառանձնացվեն գծանշված տարածքներ:

Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա կապակցությամբ կիրականացվեն միջոցառումներ:

Կիրականացվեն սիրիահայերի հասարակական և տնտեսական ինտեգրման, ինչպես նաև սոցիալական օժանդակության ծրագրեր: Կշարունակվի կարիքավոր սիրիահայ ընտանիքներին տարաբնույթ սոցիալական աջակցությունների տրամադրումը /այդ թվում՝ երեխաներին արտահերթ հիմունքներով ՆՈՒՀ-երում և դպրոցներում ընդգրկումը/, հասարակական կյանքին և փոքր բիզնեսների հիմնադրման միջոցով տնտեսական ինտեգրումը: Սիրիահայերի սոցիալական պաշտպանության քաղաքականությունը նպատակաուղղված է վերջիններիս համար հավասար հնարավորությունների ստեղծմանը՝ կյանքի բոլոր ոլորտներում:

Կշարունակվեն բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը:

Կշարունակվի համագործակցությունը հասարակական կառույցների հետ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Երևան քաղաքում գործում է մարզական 4 միություն, մարզական 12 ակումբ, 16 լողավազան, ֆուտբոլի 11 մարզադաշտ, թենիսի 24 կորտ, 4 հրաձգարան, 5 ստադիոն, 37 մարզադահլիճ, նետաձգարան, աթլետիկական մանեժ, հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի 3 ջրամբար, մարզամշակութային 2 կենտրոն, հավաքական թիմերի ուսումնամարզական կենտրոն, ձիարշավարան, բազմագործառութային 132 փոքր դաշտ և տարբեր գերատեսչական ենթակայության 60 մարզադպրոց: Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը, Հրազդան և Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտերը, ֆուտբոլի, շախմատի ակադեմիաները, հեծանվահրապարակը, Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի կենտրոնական տունը, «Դինամո» մարզահամալիրը, Իրինա Ռոդնինայի անվան գեղասահքի սահադաշտը Երևան քաղաքի նշանակալի մարզական կառույցներ են: Երևան համայնքի ենթակայությամբ գործում է 41 մարզադպրոց:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են Երևան քաղաքի առաջնություններ մոտ 40 մարզաձևերից, առողջարարական, հանրային, երիտասարդական 9 միջոցառումներ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար 8 մարզաձևերից կազմված բակային փառատոն, ըմբշամարտի միջազգային մրցաշար: Աշխատանքներ են իրականացվում ՀՀ Նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք», «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ», «Լավագույն մարզական բակ» հանրապետական մրցույթներին երևանյան թիմերի և բակերի մասնակցության ապահովման ուղղությամբ:

Հիմնախնդիրներ

1. Բնակչության, այդ թվում՝ մանուկների ու պատանիների մոտ առողջ ապրելակերպի արմատավորման, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու, աշխատունակության բարձրացման, երկարակեցության ապահովման, ինչպես նաև սպորտի հանրայնացման նպատակով՝ բնակության և հասարակական վայրերում համապատասխան պայմանների ստեղծում:

2. Մարզաձևերի հավաքական թիմերի մարզիկներով համալրման, մանկապատանեկան սպորտի զարգացման, մանուկների ու պատանիների ֆիզիկական կարողությունների, գիտելիքների տիրապետման ապահովման նպատակով՝ մարզադպրոցների շենքային պայմանների բարելավում և ժամանակակից մարզագույքով ապահովում:

3. Պետական և համայնքային ենթակայության, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների համագործակցության արդյունավետության բարձրացում, ինչպես նաև մարզական ակումբներից, մարզաբազաներից բնակչության օգտվելու մատչելիության ապահովում:

4. Միջազգային և տարածաշրջանային մարզական շարժումների հետ համագործակցության ակտիվացում:

5. Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու, նրանց շարժողականության բարձրացման, օրգանիզմի գործառնական հնարավորությունների վերականգնման նպատակով համապատասխան պայմանների ստեղծում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական և հանրային մարզական միջոցառումների կազմակերպում՝ ՀՀ Նախագահի մրցանակների համար մարզական մրցույթ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար «առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային առաջնություն, Երևան քաղաքի 36 առաջնություն, ուսումնամարզական 2 հավաք, Երևան և գործընկեր քաղաքների համագործակցության շրջանակում կազմակերպվող մարզաառողջարարական ու մարզական միջոցառում և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվող 2 միջոցառում:
- Երևան-Ստեփանակերտ, Երևան-Մոսկվա և Երևան-Սանկտ-Պետերբուրգ քաղաքների համագործակցության ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացում:
- Երևան քաղաքի հավաքական թիմերի, երևանյան թիմերի ու մարզիկ–մարզուհիների մասնակցության ապահովում Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում:
- Հանրապետական ու միջազգային մրցաշարերին, առաջնություններին նախապատրաստվելու և պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով Երևանի թիմերի և երևանցի մարզիկ-մարզուհիների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում:
- Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար անցկացվող «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի կազմակերպում:
- Երևանի քաղաքապետի մրցանակների սահմանում՝ միջազգային և հանրապետական մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսման նպատակով:
- Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման գործընթացի շարունակականության ապահովում:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզամշակութային միջոցառումների կազմակերպում:
- Համահայկական երկրորդ ձմեռային խաղերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում, այդ թվում՝ ըստ մարզաձևերի ընտրական մրցաշարերի անցկացում, հավաքական թիմերի ձևավորում, հավաքականների համար ուսումնամարզական հավաքների անցկացում, միասնական մարզահանդերձանքով ապահովում և մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցության իրականացում:
- Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպություններում իրականացվող ուսումնամարզական գործընթացի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխանության նկատմամբ վերահսկողության իրականացում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները: Հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները ակտիվ մասնակցություն են ունենում մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում:

Երևանի քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի. 46-Ն որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը: Երևանի քաղաքապետարանում գործում է երիտասարդական կենտրոն՝ սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Խորհուրդը նաև ներգրավվում է համաքաղաքային գրեթե բոլոր ծրագրերին, տարաբնույթ տոնական ու մեծ միջոցառումների կազմակերպչական և կամավորական աշխատանքներին:

Հիմնախնդիրներ

1. *Մայրաքաղաքի երիտասարդների սոցիալ-տնտեսական գործունեության, զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների անցկացում:*
2. *Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խրախուսում:*
3. *Հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների ակտիվացում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կիրականացվի համագործակցություն մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ:
- Կշարունակվի համագործակցությունը Երևանի քույր և գործընկեր քաղաքների երիտասարդության հետ, կընդլայնվեն համագործակցության ուղղությունները:
- Կիրականացվեն միջոցառումներ՝ ուղղված երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը ու սպորտի մասսայականացմանը:
- Նախատեսվում է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երիտասարդության հոգևոր և մշակութային դաստիարակությանը, ստեղծագործ մտքի խթանմանն ու զարգացմանը:
- Կշարունակվեն աշխատանքներն՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանմանն ու դրա քարոզմանը: Նոր համատեղ ծրագրեր կիրականացվեն ոլորտի մասնագետների և այդ հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց հետ կմշակվեն և կիրականացվեն միջոցառումներ, որոնք կնպաստեն հաշմանդամություն ունեցող երիտասարդների հետ աշխատելու ու համագործակցելու կարծրատիպերի վերացմանը: Աշխատանքներում կներգրավվեն ինչպես երիտասարդներ, այնպես էլ՝ այդ հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններ:
- Կկազմակերվեն միջոցառումներ, որոնք կխթանեն բարձր տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդների առաջընթացը:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Երևանի քաղաքապետարանը իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և նրանց ընտանիքների բացահայտման, նրանց խնդիրների գնահատման և մասնագիտական աջակցությանն ուղղված գործառույթներ:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի պաշտպանության նպատակով աշխատանքներ են իրականացվում մանկատների բեռնաթափման, հաստատություններում գտնվող երեխաների վերադարձը կենսաբանական և խնամատար, ինչպես նաև խնամակալ ընտանիքներ ապահովելու նպատակով:

Երևանի քաղաքապետի 2015 թվականի մարտի 2-ի h 515-Ա որոշման համաձայն իրականացվում է վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից կատարվող աշխատանքների ամենամսյա գնահատում և, ըստ անհրաժեշտության, մեթոդական աջակցության և մասնագիտական խորհրդատվության տրամադրում:

Շահագրգիռ պետական և հասարակական կառույցների, վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ հետևողական աշխատանքի արդյունքում իրականացվում է խնամատար ինստիտուտի բարեփոխման գործընթացը և տարաբնույթ միջոցառումներով նպաստում խնամատար ընտանիքների ավելացմանը:

Որդեգրման գործընթացի թափանցիկության արդյունքում որդեգրողներին հասանելի են դարձել ՀՀ-ում առկա որդեգրման ենթակա երեխաների տվյալները:

Ավելացել է հատուկ կարիքներով երեխաներին որդեգրողների և խնամատար ծնողների թիվը:

ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների պաշտպանության և ընտանեկան բռնությունների պայքարի վարչության, սոցիալական աջակցության տարածքային բաժինների և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ իրականացվում է Երևան քաղաքում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հայտնաբերումը և մուրացիկության և թափառաշրջիկության երևույթի կանխարգելումը:

Այլընտրանքային խնամքի տրամադրման գործընթացն իրականացվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ:

Շահագրգիռ միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ պարբերաբար իրականացվում են մասնագիտական քննարկումներ և ներկայացվում առաջարկներ օրենսդրության բարեփոխման նպատակով:

Հիմնախնդիրներ

1. *Մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելում:*
2. *Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկում:*
3. *Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների կանոնակարգում:*
4. *Կրթությունից դուրս մնացած, առանց ծնողական խնամքի մնացած, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, կրթական համակարգում ընդգրկման և*

կրթության շարունակության ապահովման, փաստաթղթերի ձեռքբերման ուղղված մասնագիտական ծառայությունների տրամադրում:

5. *Խնամատար ինստիտուտի դերի բարձրացում և խրախուսում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է Երևան քաղաքում բնակվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին՝ վարքային խնդիրներ ունեցող, առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և նրանց ընտանիքներին առողջ ապրելակերպի խրախուսման նպատակով կրթամշակութային, ինտելեկտուալ, սպորտային միջոցառումների և հասարակության մեջ ինտեգրման գործընթացի իրականացում, մասնավորապես.

- սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում,
- ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքների կազմակերպում բոլոր վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար,
- «Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքիների խրախուսման միջոցառումների կազմակերպում,
- Աջափնյակ վարչական շրջանի ցերեկային խնամքի հաստատության և Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի երեխաների համար գիտակրթական ֆիլմերի ցուցադրության կազմակերպում,
- երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ,
- հատուկ կարիքներով երեխաների այցելությունների կազմակերպում թանգարաններ,
- բոլոր վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար թեմատիկ սեմինարների կազմակերպում,
- հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում՝ հատուկ կարիք ունեցող շնորհալի և տաղանդավոր երեխաների մասնակցությամբ:

Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ

Մշակույթի ոլորտում նախատեսվող և իրականացվող ծրագրերի նպատակն է բարձրացնել մշակույթի դերը, պահպանել և տարածել ազգային մշակութային ժառանգությունը, խթանել անհատի, ինչպես նաև հասարակության ստեղծագործական ներուժը, ապահովել ազգային մշակութային ավանդական ձևերի պահպանումը և զարգացումը:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 74 կազմակերպություն, որից 5 թանգարան, 3 թատրոն, 19 գրադարան, 26 երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ, 16 մշակույթի տներ, մշակույթի ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» և Յու.Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, Երևանի կենդանաբանական այգին և «Հայ-Արտ մշակութային կենտրոնը»:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել պետական և ազգային տոներին նվիրված միջոցառումների շարք՝ Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, «Գարնանամուտ», Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Գարուն-Երևան», «Ողջույն Երևանից Ստեփանակերտին», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Ջազի միջազգային օրվան, Երիտասարդության միջազգային օրվան, «Երևանյան ամառ 2018» եռամսյա ծրագրին, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին, «Երևանցին» հեռուստաշարք՝ ամիսը 2 անգամ, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին: Մայրաքաղաքում տարվա կտրվածքով նախատեսվում է անցկացնել նաև միջազգային միջոցառումների շարք և մշակութային ծրագրեր ու նախագծեր՝ «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն, «ՀայՖեստ» միջազգային թատերական փառատոն, «Երևանյան հեռանկարներ» միջազգային փառատոն, «Ռեանիմանիա» Երևանի միջազգային անիմացիոն կինոյի և պատկերապատման արվեստի փառատոն և այլն, որոնք իրականացվում են Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ:
- 2018 թվականին կիրականացվեն մշակութային տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ, որոնք, տարածելով և հանրահռչակելով հայկական մշակույթը, կստեղծեն և կամրապնդեն համագործակցության նոր շրջանակներ: Նախատեսվում է իրականացնել Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկ ինքնության պահպանության ապահովմանն ու ինքնաարտահայտմանն ուղղված ծրագրեր:

Էրեբունի-Երևան 2800-ամյակի հոբելյանական միջոցառումներ

2018 թվականին Երևանի հիմնադրման 2800-ամյակի կապակցությամբ ողջ տարվա կտրվածքով մայրաքաղաքում, մարզերում և արտերկրում նախատեսվում են Երևանին նվիրված բազմաթիվ միջոցառումներ,ծրագրեր ու ակցիաներ:

Էրեբունի-Երևան 2800-ամյակի հոբելյանական միջոցառումների կազմակերպչական աշխատանքները իրականացնելու նպատակով Երևանի քաղաքապետի 27.10.2017թ. h. 3821-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ:

«Էրեբունի Երևան 2800» տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքի բոլոր հատվածներում կիրականացվեն բազմաբովանդակ և բազմաբնույթ մշակութային, կրթական-ճանաչողական, գիտական ծրագրեր և միջոցառումներ, հրատարակչական, ֆիլատելիստական միջոցառումներ, տոնական, հանդիսավոր համերգաշարեր: Մասնավորապես նախատեսվում է՝

- նոր քարտեզների հրատարակության կազմակերպում՝ Ուրարտական թագավորության էրիվանի, Երևանի նորօրյա ժամանակաշրջանների,
- Էրեբունի ամրոցի մասնակի վերականգնում (վերականգնում, ամրակայում, վերստեղծում, բարեկարգում, ենթակառուցվածքների ստեղծում),
- «Երևան 2800» - գիրք-ալբոմի ստեղծում (բազմալեզու),
- Երևանի պատմությանը վերաբերող գրքի տպագրում ,
- պաշտոնական կայքի ստեղծում
- գաստրոնոմիկ ցուցահանդես, գինու փառատոն,
- Երևանի մասին պիեսի՝ թատերգության մրցույթ,
- «Ես՝ Արգիշտիս» պիեսի բեմադրությայն ստեղծում,
- Երևանի մասին նոր երգի համահայկական մրցույթ,
- մշակութային ԲՈՒՀ-երի ուսանողների մրցույթ «Երևան 2800» խորագրով՝ վավերագրական ֆիլմի ժանրում,
- գեղանկարչական և քանդակագործական ցուցահանդես՝ ուրարտական թեմաներով,
- «Երևանյան էտյուդներ» խորագրով գեղարվեստական ֆիլմի ստեղծում,
- մեծակտավ երաժշտական ստեղծագործությունների ստեղծման պատվերներ,
- Հայաստանի ազգային պատկերասրահի հետ համատեղ «Աշխարհային գեղանկարիչները Երևանյան թեմաներով» միջազգային ցուցահանդեսի կազմակերպում,
- Երևան քաղաքի բոլոր երգչախմբերի՝ 2800 կատարողների մասնակցությամբ «Էրեբունի Երևան» հիմնի կատարում և նկարահանում ՄՀՀ-ում,
- «Հավերժ մանուկ իմ Երևան» անվանի հայերի, երևանցիների փոքր և մեծ ժամանակի մեկական լուսանկարների ցուցահանդես,
- Երևանի պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգաշար-փառատոն,
- «Էրեբունի 2800»-ի կապակցությամբ «Արգիշտի 1-ին» թատերական ներկայացման առաջնախաղը Էրեբունի թանգարանում տեղադրվելիք ամֆիթատրոնում,
- օդագնացության փառատոն,
- քույր քաղաքների պաննոյի բացում քաղաքի կենտրոնում՝ քույր քաղաքների լոգոներով, անվանումներով և տարեթվերով,
- սոցիալական ու գովազդային հոլովակների պատրաստում,
- տարազ ֆեստ փառատոնի միջազգային ցուցադրման կազմակերպում ՄՀՀ-ում,
- պատմական կարասների ու հայտնաբերված գարու նմուշների բացօթյա ցուցադրմամբ գարեջրի փառատոն Կարմիր բլուրում,
- Հանրապետության և այլ հրապարակներում տոնական համերգային միջոցառումներ՝ հոչակավոր հայ և արտասահմանցի կատարողների մասնակցությամբ,
- կստեղծվի Երևանի հիմնադրման 2800-ամնակին նվիրված հայկական զարդանախշերով հոբելյանական գորգ:

Թանգարաններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 5 թանգարաններում ցուցանմուշների քանակը 2016թ. կազմել է 117.3 հազ. ցուցանմուշ, այցելուների թիվը՝ 55.6 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Ֆոնդապահոցներում և ցուցադրություններում թանգարանային առարկայի անվտանգ և անհրաժեշտ պայմանների ապահովում, թանգարանային նմուշների վերականգնում:*
2. *Թանգարաններում տեղեկատվական-հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում:*
3. *ՀՀ-ում գործող թանգարանների մշակութային արժեքների միասնական էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի աշխատանքներին և մշակութային արժեքների թվայնացման գործընթացին մասնակցություն:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Թանգարաններում նախատեսվում է իրականացնել ժամանակակից և միջին սերնդի արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեություն, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրում, թանգարանային ֆոնդի համալրում, ինչպես նաև թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կկազմակերպվեն նոր ցուցադրություններ:
- Թանգարաններում կկազմակերպվեն պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված միջոցառումներ և ցուցադրություններ, ինչպես նաև միջոցառումներ՝ նվիրված «Թանգարանների միջազգային օրվան» և «Եվրոպական ժառանգության օրվան»:
- Նախատեսվում է կկազմակերպել միջոցառումների շարք՝ նվիրված Երևանի հիմնադրման 2800 ամյակին:
- Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի և «Հողաշեն կառույցների ոլորտում մասնագիտացող միջազգային կենտրոն» ասոցիացիայի /CRAterre/ համագործակցության ծրագրի շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն Էրեբունի հնավայրի պահպանման, պատմամշակութային արժևորման, զբոսաշրջության խթանման և տուրիստական ծառայությունների ընդլայնման համար
- «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածքում կշարունակվեն պարբերաբար իրականացվող գիտական ուսումնասիրություններն և պեղումները:
- Շարունակական բնույթ են կրելու այցելուների սպասարկման բարելավմանն ուղղված աշխատանքները:

Թատրոններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության 3 թատրոններում շարունակում է ավելանալ բեմադրվող և նոր ներկայացումների այցելուների քանակը՝ 2016թ. հանդիսատեսի թիվը կազմել է 80677 հազ. մարդ, բեմադրված ներկայացումների թիվը՝ 417, նոր ներկայացումների թիվը՝ 15:

Հիմնախնդիրներ

1. *Նորագույն տեխնոլոգիաների, սարքավորումների և էլեկրոնային կառավարման համակարգերի ներդրում ու կիրառում*
2. *Նոր ստեղծագործություններով խաղացանկի համալրում*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է իրականացնել շուրջ 10-15 նոր բեմականացում, համալրել ստեղծագործական կազմը, բարձրացնել ներկայացումների մատուցվող ծառայությունների որակը, իրականացնել բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինում, ապահովել մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոներին:

Գրադարաններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 19 գրադարաններ՝ 20 մասնաճյուղերով:

Հիմնախնդիրներ

1. *Տեղեկատվական-հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում և կիրառում,*
2. *Մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանում,*
3. *Տեղեկատվական և տեխնիկական բազայի համալրում և վերազինում,*
4. *Գրականության ֆոնդի համալրում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

«Հայաստանի գրադարանների ավտոմատացված ցանց» ծրագիր

«Հայաստանի գրադարանների ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակում «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը կշարունակի իր աշխատանքները և գրադարանի գրքային ֆոնդը կմուտքագրվի ընդհանուր տեղեկատվական բազա: Կշարունակվի էլեկտրոնային գրադարանի ֆոնդերի թվայնացման, համալրման գործընթացը և նոր ծրագրերի տեղադրումը թվային բազայում: Տեղադրված է նաև հատուկ խմբի համար /տեսողական խնդիրներ ունեցող/ «ԱՐԵՎ» էլեկտրոնային-թվային համակարգը, իսկ լսողական խնդիրներ ունեցողների համար՝ «ԷԼԳՐԱԴ»-ի թվային բազաների «Ոսկե շղթա 1,2,3» ծրագրերը:

Կիրականացվի ազատ ժամանցի կազմակերպում՝ գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, ազգային գրադարանային շաբաթ, ինչպես նաև՝ հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ: Կկազմակերպվի գրադարանավարի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» ամենամյա միջոցառումը, ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և այլն:

Երաժշտական և արվեստի դպրոցներ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 15 երաժշտական, 10 արվեստի և 1 կերպարվեստի դպրոց:

Հիմնախնդիրներ

1. Երաժշտական և արվեստի դպրոցների գույքի թարմացում և երաժշտական գործիքների համալրում:

2. Հանրապետական և միջազգային հարթակներում ներկայանալու համար նպաստավոր պայմանների ստեղծում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կկազմակերպվեն համերգներ, հանրապետական ու միջազգային մրցույթներ, փառատոններ երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ: Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում կանցկացվի Ա.Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոնը, լավագույն սաները հնարավորություն կունենան ելույթ ունենալ կամերային և սիմֆոնիկ նվագախմբերի հետ:
- Կշարունակվի «Բաց դաս» խորագրով ծրագրի իրականացումը: Ծրագրի շրջանակներում մասնագետներն ու դպրոցի սաները կկազմակերպեն բացօթյա հանրային դասընթացներ՝ ներգրավելով հանրության լայն շերտեր:
- Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը:
- Երաժշտական և արվեստի դպրոցների համար ձեռք են բերվելու անհրաժեշտ գույք և երաժշտական գործիքներ:

Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 16 մշակույթի տուն, գեղագիտական, ստեղծագործական ու մշակութային կենտրոններ:

Հիմնախնդիրներ

1.Երաժշտական գործիքների, անհրաժեշտ գույքի, սարքավորումների համալրում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Ստեղծագործական կենտրոնների և մշակույթի տների միջոցով նախատեսվում է ստեղծել համապատասխան պայմաններ, իրականացնել ծրագրեր՝ ուղղված բնակչության հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորմանը:

Այլ մշակութային կազմակերպություններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են «Հայաստանի փոքրիկ երգիչներ», «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ները և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ն:

Հիմնախնդիրներ

1. *Անհրաժեշտ սարքավորումների և գույքի ձեռքբերում:*
2. *Երաժշտական նյութերի ապահովում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կապահովվի վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությունը փառատոններին, համերգներին, ցուցահանդեսներին ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում:
- Նախատեսվում է մեծացնել հանրության հետ շփման շրջանակները, որը կխթանի կազմակերպությունների որակի բարձրացմանն ու հանրահռչակմանը:

Երևանի կենդանաբանական այգի

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ է գործում Երևանի կենդանաբանական այգին: Երևանի կենդանաբանական այգու գործունեությունն ուղղված է

Հայաստանի բնության և մշակութային ժառանգության պահպանությանը, տարածմանը և հանրահռչակմանը: Այգու՝ որպես կրթադաստիարակչական հաստատության հիմնական առաքելությունը բոլոր տարիքի անձանց և Հայաստանի բնության հարուստ կենսաբազմազանության հետ կապի ստեղծումն է: Այգու հիմական գործունեությունը կայանում է այցելուների, զբոսաշրջիկների ժամանցի ապահովումը, բնական ռեսուրսների, կենսաբազմազանության և կենդանիների համապատասխան բնակավայրերի ստեղծումն ու պահպանումը:

Հիմնախնդիրներ

1. Այգու արդիականացման և վերակառուցման գործընթացի շարունակություն:
2. Նոր ազատավանդակների կառուցում:
3. Այգում կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրում:
4. Այգու սահմանագծով պարսպապատում:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. կենդանաբանական այգին կվերաբացվի նոր լուծումներով՝ էլ ավելի համապատասխանելով միջազգային չափորոշիչներին: Մասնավորապես կբացվի միջազգային չափորոշիչներին համապատասխան կառուցված առյուծների, արջերի և գայլերի նոր ազատավանդակները, ինչպես նաև կարանտինը: Միաժամանակ աշխատանքներ կիրականացվեն այգու՝ խիստ անհրաժեշտ պարսպապատման ուղղությամբ:
- Այգում աշխատանքներ են տարվելու կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և նոր տեսականիով ապահովելու նպատակով:
- Նախատեսվում է «Երևանի կենդանաբանական այգում վայրի կենդանիների պահպանում, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացում ու ցուցադրում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում է միջազգային 8 կազմակերպությունների, որոնց հետ ունի լայն պայմանագրային դաշտ և համատեղ իրականացվող տարբեր ծրագրեր:

Երևան քաղաքը համագործակցության լայնածավալ ծրագրեր է իրականացնում Ստեփանակերտի, Մոսկվայի, Փարիզի, Թեհրանի, Ռիգայի, Վիեննայի, Սանկտ-Պետերբուրգի, Մարսելի, Լիոնի, Պլեսի-Ռոբինսոնի և այլ քաղաքների հետ:

Քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ կազմակերպվում են գիտաժողովներ, համաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ:

Վերջին տարիներին Երևան քաղաքը հիմնել է նոր համագործակցություններ Ռիգա, Խանտի Մանսիսկ, Աշխաբադ, Ամման, Նովոսիբիրսկ, Կրասնոդար, Անտոնի և Վուլբի քաղաքների հետ:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը Երևանի և Ստեփանակերտի, ինչպես նաև Երևանի և ԼՂՀ շրջանների ու ՀՀ մարզերի միջև՝ վերջիններիս ցուցաբերելով տեխնիկական, սոցիալական, մեթոդական աջակցություն:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի քույր և գործընկեր քաղաքների, ինչպես նաև այլ քաղաքների քաղաքային տնտեսության լավագույն փորձի և մոդելների ներդրման մեխանիզմների մշակում:*
2. *Միջազգային համագործակցության շրջանակներում հնարավոր ռեսուրսների ներգրավում Երևանի քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում:*
3. *Մայրաքաղաքների և խոշոր քաղաքների հետ եղբայրացման համաձայնագրերի ստորագրում՝ համագործակցության պայմանավորվածությունների ձեռքբերում և բազմակողմ համագործակցության աշխարհագրության ընդլայնում:*
4. *Երևանի պատվիրակությունների ներկայության ապահովում միջազգային և տարածաշրջանային կառույցներում:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնական միջոցառումների մեծածավալ նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ:
- Կվարվեն բանակցություններ ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ:
- Կիրականացվի աջակցություն ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովման և գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպման համար:
- Կակտիվացվի համագործակցությունը միջազգային և տարածաշրջանային կառույցների, սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:
- Կակտիվացվեն տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները:
- Կտրամադրվի տեղեկատվություն Երևան քաղաքում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ Երևանի քույր և գործընկեր քաղաքներին, ինչպես նաև կակտիվացվեն կապերը Երևանի քաղաքապետարանի ու քույր և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև՝ զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով:

- Նախատեսվում է իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր:
- Կխրախուսվեն և կընդլայնվեն վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունները:
- Կակտիվացվեն համագործակցային կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ և այլն/:
- Կթարմացվեն համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ:
- Նախատեսվում է համագործակցության համաձայնագրերի ստորագրում Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Հունաստանի Ալեքսանդրապոլիս, Մարոկկոյի Տետուան և ՌԴ Չեբոկսարի քաղաքների հետ:
- Կստորագրվի Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև 2018-2020թթ. համագործակցության ծրագիր:
- Կիրականացվի փորձի փոխանակում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցության շրջանակներում:
- Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում կշարունակվի մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագիրը՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:
- Երևանի հիմնադրման 2800-ամյակի առթիվ AIMF-ի աջակցությամբ կիրականացվի «Էրեբունու արժևորումն ու պահպանումն, արդյունավետությունը և տուրիստական բազմազանության առաջարկը» խորագիրը կրող ծրագիրը: Կցուցաբերվի ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին, կկազմակերպվեն փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և կմշակվեն համատեղ ծրագրեր:
- Կցուցաբերվի ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև կապահովվի հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին:
- Կակտիվացվի համագործակցությունը «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ:
- Կիրականացվեն համատեղ ծրագրեր Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ:
- Կկազմակերպվեն փոխայցելություններ փորձի փոխանակման նպատակով Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների միջև:
- Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2015-2020թթ. համագործակցության ծրագրի շրջանակներում կանցկացվեն մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Երևանի օրերը Ստեփանակերտում, մշակութային տարբեր միջոցառումներ, մասնագետների փոխայցելություններ:
- Աջակցություն կցուցաբերվի 2018 թվականի հոկտեմբերին Երևանում կայանալիք Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի կազմակերպչական աշխատանքներին:

Զ Բ Ո Ս Ա Շ Ր Ջ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մայրաքաղաք Երևանում զբոսաշրջության զարգացմանը նպաստել է ինչպես համաշխարհային զբոսաշրջության առաջընթացը, այնպես էլ Հայաստանի յուրօրինակ գրավչությունը: Երևանը մեծ ներուժ ունի լավագույն մասնագիտացված, զարգացած և ակտիվ զբոսաշրջային կենտրոնի ձևավորման համար ոչ միայն տարածաշրջանում, այլև աշխարհում:

Երևան քաղաքը օժտված է ռեսուրսային հզոր ներուժով, որը ներազդում է զբոսաշրջության կայուն զարգացման վրա, հետևաբար Երևան քաղաքի՝ որպես մասնագիտացված, զարգացած և ակտիվ զբոսաշրջային կենտրոնի ձևավորմանը:

Երևանում է գտնվում հանրապետության գիտական հաստատությունների, համալսարանների և ինստիտուտների, թատրոնների, պատկերասրահների, թանգարանների, համերգասրահների, մարզական կենտրոնների գերակշիռ մեծամասնությունը:

Քաղաքային զբոսաշրջությունը մշակույթի, պատմության և ժամանցի լավագույն սինթեզն է: Քաղաքային զբոսաշրջության զարգացման խթանիչներն են ճարտարապետությունը, թանգարանները, հուշարձանները, հյուրանոցային տնտեսությունը, զարգացած ենթակառուցվածքները, ժամանցի վայրերը և այլն: Այս առումով Երևանը շատ պարզ /հեշտ կողմնորոշվող/, հանգիստ, անվտանգ, մատչելի ու ապահով քաղաք է զբոաշրջիկների տարբեր տարիքային խմբերի համար:

Երևանում օրեցօր ավելանում է հյուրանոցների թիվը՝ պայմանավորված զբոսաշրջային ծառայությունների հանդեպ արագ աճող պահանջարկով:

2017թ. հունիս ամսվա դրությամբ Երևանում գործում է 200 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 13,5% գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Մայրաքաղաքի հյուրանոցային տնտեսության օբյեկտները ապահովում են շուրջ 4600 համար և 8000 ննջատեղ: 2017թ. Երևանի հյուրանոցային տնտեսության ոլորտն ավելացել է 400 համարով:

Շուկայում գործում են այնպիսի հյուրանոցային բրենդեր, ինչպիսիք են՝ «Արմենիա Մարիոթ», «Հայաթ Փլեյս», «Բեստ Վեստերն Կոնգրես», «Ռադիսոն Բլյու», «Դաբլլ Թրի Բայ Հիլտոն» և այլն:

2017թ. մայրաքաղաքում բացվեց «Աքոր» միջազգային ընկերությանը պատկանող «Իբիս» երեքաստղանի հյուրանոցը (225 համար):

Առաջիկայում նախատեսվում է այնպիսի միջազգային օպերատորների մուտքը, ինչպիսիք են՝ Վինդհամը, Կեմպինսկին:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստան է ժամանել 1 172 402 զբոսաշրջիկ: 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշն աճել է 21%-ով: 2016թ. հանրապետություն է ժամանել 1 259 657 զբոսաշրջիկ: 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշն աճել է 5.7%-ով:

Զբոսաշրջիկների մեծ մասը Ռուսաստանի Դաշնությունից են (22.3%), Իրանի Իսլամական հանրապետությունից (17.8%), ԱՄՆ-ից (10.1%) և Գերմանիայից (6.1%):

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է զբոսաշրջիկների առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը: Զբոսաշրջիկների մեծ մասն այցելում է Երևան մայիս-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Ներկայացնելով Երևան քաղաքի ռեսուրսային ներուժը՝ կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամաշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու Երևանի քաղաքային պատմամշակութային ժառանգությանը,

տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրօրինակ խոհանոցին և այլն:

Քաղաքային զբոսաշրջության համար կարևորվում են նաև տվյալ քաղաքում միջոցառումների անցկացումը: Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանը որդեգրել է մայրաքաղաքում փառատոնային զբոսաշրջությունը զարգացնելու քաղաքականություն, ինչի արդյունքում զբոսաշրջիկների կայուն աճ է գրանցվում: Տուրիզմի բաժնի կողմից ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան», «Երևան Տարազ ֆեստ» և Երևանի Գարեջրի փառատոների անկացումը:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում մասնավոր ներդրողներ ներգրավելու նպատակով մշակվել են ներդրումային փաթեթ-առաջարկներ: Այդ փաթեթները ներառում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Շենգավիթ հնավայրի, Կարմիր բլուր հնավայրի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման, «Հաղթանակ» զբոսայգու, Հրազդանի կիրճի տարածքների վերակառուցման ու արդիականացման և այլ ծրագրեր:

Երևանը՝ որպես զբոսաշրջային քաղաք, վերջին տարիներին պարբերաբար հայտնվում է միջազգային պարբերականների և կայքերի հոդվածներում:

Երևանի քաղաքապետարանի կողմից մայրաքաղաք այցելող զբոսաշրջիկներին աջակցելու նպատակով տպագրվում են անվճար քարտեզներ, ուղեցույց թերթիկներ, որոնք բաժանվում են գրեթե բոլոր հյուրանոցներին և զբոսաշրջային ընկերություններին:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի բրենդինգի բացակայություն:*
2. *Երևանի միջազգային շուկայում ոչ բավարար չափով գովազդում և ներկայացում՝ որպես զբոսաշրջային կենտրոն:*
3. *Զբոսաշրջիկների համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովում:*
4. *Միջազգային զբոսաշրջիկների պահանջներին համահունչ մայրաքաղաքի զբոսաշրջային ենթակառուցվածքների և հետաքրքրություն ներկայացնող վայրերի ոչ բավարար հագեցվածություն:*

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Երևանի ճանաչելիության բարձրացման նպատակով կիրականացվի մարքեթինգային քաղաքականություն՝ Երևանի 2800-ամյակին ընդառաջ: Նախատեսվում է միջազգային հարթակներում մայրաքաղաքի հանրահռչակման նպատակով Երևանի մասին տարաբնույթ տպագիր նյութերի պատրաստում և տարածում, հոլովակների պատրաստում, միջազգային էքսպոների մասնակցություն: Շարունակվելու է իրականացվել նաև համագործակցություն հյուրանոցային տնտեսության օբյեկտների, զբոսաշրջային կազմակերպությունների, օդանավակայանի, Երևանի մետրոպոլիտենի հետ՝ տրամադրելով տեղեկատվություն մայրաքաղաքում իրականացվող միջոցառումների վերաբերյալ:
- Երևանը, որպես գրավիչ զբոսաշրջային քաղաք դիրքավորելու և միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով, Երևանում կիրականացվեն մի շարք միջոցառումներ: Երևան քաղաքի զբոսաշրջային դիրքավորման ամրապնդմանն ուղղված քայլերից կարևորվում է հատկապես «Էրեբունի-Երևան» միջոցառումների ծրագրի իրականացումը: Նախատեսվում է նաև զարգացնել «Երևանյան ամառ» եռամսյա միջոցառումների ծրագիրը, որի շրջանակում արդեն ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան» տոնածիսական փառատոնը, Երևանի գարեջրի փառատոնը, Երևան Տարազ ֆեստը, մշակութային, գործարար բացօթյա ցուցահանդեսները, թեմատիկ տոնավաճառները և այլն: Երևանի հիմնադրման 2800-ամյակին ընդառաջ

մայրաքաղաքում կկազմակերպվի «Երևանը հրավիրում է» ցուցահանդեսը:

- Նախատեսվում է Երևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում, ինչպես հայերեն, այնպես էլ բոլոր այն լեզուներով, որոնք օգտակար կլինեն թիրախային լսարանի համար: Զբոսաշրջիկների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կգործի բազմալեզու կայք, որտեղ այցելուները կարող են գտնել հավաստի տեղեկատվություն մայրաքաղաքի պատմության, գործող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ: Նախատեսվում է նաև շահագործել զբոսաշրջային միասնական տեղեկատվական կենտրոնը, որը զբոսաշրջիկներին կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն ճանապարհորդության տարբեր հարցերի, երթուղու, զբոսաշրջավայրերի վերաբերյալ և այլն:
- Կիրականացվեն ծրագրեր ուղղված Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը: Այդ նպատակով նախատեսվում է՝ Երևանի քաղաքապետարանի ենթակա թանգարանների մասնակցությամբ միջոցառումների իրականացում, «Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու շարունակական կատարելագործում ու արդիականացում, լեզուների ավելացում, Երևան քաղաքում տեղադրված ցուցանակների գույքագրում և անհրաժեշտության դեպքում՝ արդիականացում՝ համագործակցելով ՀՀ ոստիկանության հետ:
- Նախատեսվում է իրականացնել զբոսաշրջության ոլորտում միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացմանն ուղղված աշխատանքներ: Կիրականացվեն տարաբնույթ միջոցառումներ քույր և գործընկեր քաղաքների հետ: Կկազմակերպվեն գործարար հանդիպումներ, ճանաչողական այցեր, փորձի փոխանակում, սեմինարներ, կոնֆերանսներ, կլոր-սեղաններ՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանը զբաղեցնում է 2607 հա տարածք, բնակչությունը կազմում է 109.1 հազ. մարդ: Շրջանը սահմանակից է Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզերին, Դավիթաշեն, Արաբկիր, Կենտրոն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում,*
2. *Թեքահարթակների ստեղծում՝ տեղաշարժման դժվարություններ ունեցողների համար,*
3. *Մանկապարտեզների հիմնանորոգում,*
4. *Սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կենցաղային պայմանների բարելավում,*
5. *3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքների իրականացում,*
6. *Շենքերի կոյուղագծերի, ջրագծերի նորոգում և հիմնանորոգում,*
7. *Վարչական շրջանում վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում, քաղաքաշինական միջավայրի բարելավում և արդյունավետ հողօգտագործման ապահովում,*
8. *Շրջանի որոշ բնակավայրերում գազաֆիկացման և լուսավորության ցանցի արդիականացում: Չլուսավորված բակերում և փողոցներում արտաքին լուսավորության ապահովում, վթարային էլեկտրասյուների փոխարինում նորերով,*
9. *Ոռոգման ջրագծերի կապիտալ վերանորոգում և նորերի անցկացում,*
10. *Կանաչ տարածքների ընդլայնում, հանգստի գոտիների ստեղծում,*
11. *Բնակֆոնդի պահպանմանն ուղղված աշխատանքների իրականացման նպատակով աջակցության ապահովում,*
12. *Վարչական շրջանի բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցում և որակի էական բարելավում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Աջափնյակ վարչական շրջանում գործում է 16 մանկապարտեզ, 20 հանրակրթական դպրոց, որոնցից՝ 4 ավագ, 1 միջնակարգ, 15 հիմնական դպրոցներ, 3 բուհ, 1 արհեստագործական ուսումնարան, 2 մասնավոր վարժարան, 1 արտադպրոցական կազմակերպություն՝ ՄՊՍԿ, 2 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 մշակութային կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ՝ 3 մասնաճյուղով, 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, 4 գիտահետազոտական ինստիտուտ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Աջափնյակ վարչական շրջանում նախատեսվում է վերանորոգել հ. 36 մանկապարտեզը, մասնակի վերանորոգել հհ. 35, 37, 46, 47, 48 մանկապարտեզները:
- Իրականացվելու է հ. 44 մանկապարտեզի և թիվ 22 հանրակրթական դպրոցի ջեռուցման համակարգի, ինչպես նաև հ. 46 մանկապարտեզի և թիվ 156 հանրակրթական դպրոցի ջեռուցման համակարգի առանձնացման աշխատանքներ:
- 2018թ. նախատեսում է կազմակերպել և իրականացնել 20 մշակութային և կրթական միջոցառում, 10 մարզական միջոցառում՝ այդ թվում բակային փառատոններ և ավանդական մրցաշարեր: Նախատեսվում է կառուցել մարզադպրոցի նոր շենք:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Աջափնյակ վարչական շրջանի տարածքում գործում է հանրապետական նշանակության 6 հիվանդանոց, 2 ամբուլատոր պոլիկլինիկա և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության բարեգործական ճաշարանը:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով կշարունակվի սոցիալապես անապահով ընտանիքներին օժանդակության ցուցաբերման գործընթացը:
- Շարունակական բնույթ կկրի վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին պետպատվերի շրջանակներում բուժսպասարկման ապահովման ծրագիրը:
- 2018թ. ընթացքում վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների համար կշարունակվի բարեգործական ճաշարանի կազմակերպման ծրագիրը, որը իրականացվում է «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ: Բարեգործական ճաշարանի շահառուների համար կկազմակերպվեն միջոցառումներ՝ «Ամանորի», «Սուրբ Ծնունդի», «Սուրբ Հարության», «Խաղողօրհնեքի» և «Տարեցների օրվա» կապակցությամբ:
- Սոցիալական տարբեր խմբերի համար տոն և հիշատակի օրերին «Սուրբ Հարության», «Ընտանիքի միջազգային օրվա», «Երեխաների պաշտպանության օրվա», «Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա», «Գիտելիքի օրվա» կապակցությամբ կկազմակերպվեն միջոցառումներ: Դրամական, պարենային աջացություն կցուցաբերվի սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքներին: Սննդի փաթեթներ կհատկացվեն առավել կարիքավոր ընտանիքներին: Նպաստառու, բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ երեխաներին կտրամադրվի դպրոցական պայուսակ՝ գրենական պիտույքների փաթեթներով:
- Աջակցություն կցուցաբերվի նաև վարչական շրջանում վարձակալական հիմունքներով բնակվող սիրիահայ ընտանիքներին:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Վարչական շրջանում ճանապարհային ցանցի երկարությունը 78.3 կմ է: Շրջանում առկա է բազմաբնակարան բնակելի 427 շենք, որտեղ կա 338 վերելակ: Կանաչ տարածքը կազմում է 686.8 հա, ոռոգման ցանցի երկարությունը՝ 39.000 կմ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի թվով 155 մուտքերի, 5000 քմ հարթ և 1350 քմ թեք տանիքների, թվով 24 վերելակների վերանորոգման աշխատանքներ: 2018թ. կավարտվեն Շինարարների փող. հ. 14/1 բազմաբնակարան բնակելի շենքի շինարարական աշխատանքները:
- Նախատեսվում է կառուցել 15.400 քմ մակերեսով ճանապարհային նոր ցանց: Կստեղծվեն 6 նոր բակային տարածքներ: Կիրականացվեն ասֆալտ-բետոնե ծածկույթի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ՝ ներառելով նաև նախադպրոցական հաստատությունների բակերը: Վարչական շրջանում նախատեսվում է չոր և առավել վտանգավոր ծառերի հատում, սիզամարգերի մակերեսների ավելացում՝ հասցնելով 31,5 հա:

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ավան վարչական շրջանը սահմանակից է Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք, Արաբկիր վարչական շրջանների և Կոտայքի մարզի հետ: Ավան վարչական շրջանի տարածքը կազմում է 726 հա, բնակչությունը՝ 52.9 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Եզրաքարերի, հենապատերի և առկա քայքայված աստիճանների վերանորոգում,*
2. *Նոր բակային տարածքների ստեղծում, բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում,*
3. *Տեղաշարժման դժվարություններ ունեցողների համար թեքահարթակների ստեղծում,*
4. *Շենքերի ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում, բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում, վերելակների հիմնանորոգում, մուտքերի վերանորոգում,*
5. *Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի թարմացում, հարակից բակերի ոռոգման ցանցերի վերանորոգում և կանաչապատում,*
6. *Մանկապարտեզների հիմնանորոգում,*
7. *Ինքնավար ոռոգման համակարգի ստեղծում,*
8. *Դեռևս չլուսավորված բակերում և փողոցներում արտաքին լուսավորության ապահովում, վթարային էլեկտրասյուների փոխարինում նորերով,*
9. *Առողջապահական ծառայությունների որակի բարձրացում, բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավում՝ գույքի արդիականացում, վերազինում,*
10. *Շրջակա միջավայրի պահպանում, հանգստի գոտիների ստեղծում, կանաչ տարածքների և ոռոգման ցանցի ընդլայնում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Ավան վարչական շրջանում գործում են՝ 7 մանկապարտեզ, 5 հիմնական, 1 միջնակարգ, 1 ավագ և 2 հատուկ դպրոցներ, 1 գրադարան, 1 մարզադպրոց, 1 մշակույթի տուն, 1 արվեստի դպրոց, 1 շախմատի մասնագիտացված մարզադպրոց:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի թվով 2 մանկապարտեզների՝ հ.56, հ.57 հիմնանորոգման աշխատանքներ: Կշարունակվի հսկողությունը մանկապարտեզներում՝ սննդի որակի և ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ ընթացքն ապահովելու ուղղությամբ:
- Պետական տոներին և հիշատակի օրերին նվիրված մշակութային զանգվածային միջոցառումներ կանցկացվեն վարչական շրջանի կրթօջախներում, մշակույթի կենտրոններում, այգիներում: Նախատեսվում է իրականացնել ֆլեշմոբեր, ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրեր, հանդիպումներ, այցելություններ և տարաբնույթ այլ միջոցառումներ:
- Կկազմակերպվեն մարզական միջոցառումներ, սպորտլանդիաներ, մրցումներ՝ ուղղված առողջ ապրելակերպի խթանմանը:
- Նախատեսվում է նաև մարզադպրոցների մարզական գույքի թարմացում:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Ավան վարչական շրջանում գործում է 11 բուժհաստատություն, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ճաշարանը, որից օգտվում են շուրջ 180 շահառուներ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտի ծրագրերն ուղղված են շրջանի անապահով և խոցելի խավերի կենսապայմանների բարելավմանը՝ նպատակ ունենալով նաև իրականացվող սոցիալական ծրագրերը դարձնել առավել արդյունավետ և հասցեական:

- Սոցիալական տարբեր խմբերի համար կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: Կշարունակվի համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ, կիրականացվեն սոցիալական բնույթի տարբեր ծրագրեր:
- Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչներին, բազմազավակ անապահով ընտանիքներին, Հայրենական պատերազմի վետերաններին, միայնակ տարեցներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, ինչպես նաև սոցիալական այլ խմբերին կցուցաբերվի աջակցություն: Կկազմակերպվի սոցիալապես անապահով և հարազատ չունեցող անձանց հուղարկավորությունը:
- Կշարունակվի սիրիահայ ընտանիքներին տարաբնույթ աջակցությունների ցուցաբերման ծրագիրը:
- Պոլիկլինիկաների հետ համատեղ, սոցիալապես անապահով ընտանիքների համար, կկազմակերպվեն անվճար բուժզննություններ, խորհրդատվություններ և դժվարմատչելի հետազոտություններ, կտրամադրվեն միջնորդագրեր՝ պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով:
- Կկազմակերպվի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը ճամբարներում, երեխաներին կտրամադրեն դպրոցական պայուսակներ՝ համալրված գրենական պիտույքներով:
- Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքներին կտրաադրվեն նվեր-փաթեթներ:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Ավան վարչական շրջանում հաշվառված է 237 բազմաբնակարան շենք: Առկա է 361 վերելակ: Վարչական շրջանն ունի 37 փողոց, որոնց երկարությունը՝ 52.392 կմ է, ոռոգման ցանցի երկարությունը 19 կմ է:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ՝ ընդհանուր 8000 քմ մակերեսով, ինչպես նաև թեք տանիք ունեցող բազմաբնակարան բնակելի 2 շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ՝ 1150 քմ մակերեսով:
- Կիրականացվեն մայթերի և փողոցների ասֆալտապատման աշխատանքներ:
- Կկառուցվեն 3 նոր այգիներ, խաղահրապարակներ և պուրակներ, կիրականացվի տարածքի վնասված գույքի՝ նստարանների, աղբամանների, ցանկապատների, խաղային համալիրների վերանորոգում և ներկում:
- Նախատեսվում է իրականացնել 30 շենքերում առկա 60 մուտքերի և 6 վերելակների վերանորոգման, 500 գծմ եզրաքարերի, 250քմ գեղազարդ սալիկների նորերով փոխարինման աշխատանքներ:
- 2018թ. ընթացքում վարչական շրջանի բոլոր թաղամասերում և փողոցների հարակից տարածքներում նախատեսվում է ընդարձակել կանաչ տարածքները: Նախատեսվում

է նաև խիտ բնակեցված թաղամասերում բարեկարգել բակային այգիները, տեղադրել մանկական խաղեր և նստարաններ, իրականացնել ծառատունկ, թփերի տնկում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում:

ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Արաբկիր վարչական շրջանը գտնվում է մայրաքաղաքի հյուսիս-արևելյան հատվածում՝ 1329 հա մակերեսով: Շրջանի բնակչությունը կազմում է 115.0 մարդ: Վարչական շրջանն ընդհանուր սահմաններով հարում է Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, իսկ արտաքին սահմանագծով՝ Կոտայքի մարզին:

Հիմնախնդիրներ

1. *Կրթօջախների, մարզական և մշակութային հիմնարկների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի թարմացում,*
2. *Առողջապահական և սպորտային համալիրների ստեղծում,*
3. *Վթարայնության կարգի ուսումնասիրություն և ըստ վթարայնության աստիճանի շենքերի ամրացում, թեք և հարթ տանիքների նորոգում, մուտքերի էլեկտրամալուխների և լարերի վերադասավորում, վերելակների վերանորոգում և փոխարինում նորերով,*
4. *Փողոցների նոր հեղեղատարների կառուցում և հների վերանորոգում, ինչպես նաև նոր կոյուղագծերի կառուցում և գործողների վերակառուցում,*
5. *Դավթաշենի կամրջի անցումի հիմնանորոգում,*
6. *Հրազդանի կիրճում, փողոցներում և բակերում հենապատերի հիմնանորոգում և նորերի կառուցում,*
7. *Երեխաների մարզական զարգացման համար անհրաժեշտ մինի ֆուտբոլի դաշտերի քանակի ավելացում, բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և ընթացիկ վերանորոգում,*
8. *Ստորգետնյա և վերգետնյա անցումների թվի ավելացում, հատկապես ուսումնական հաստատություններին հարող տարածքներում,*
9. *Փողոցների ասֆալտապատման և վերանորոգման աշխատանքների իրականացում,*
10. *Սանիտարահիգենիկ պայմաններ ապահովելու համար աղբամուղերի և աղբախցերի հիմնանորոգում և վերակառուցում,*
11. *Ոռոգման ցանցի ընդլայնում և վերանորոգում, մատակարարվող ոռոգման ջրի ծավալների ավելացում,*
12. *Ջրածածկ նոր մակերեսների ստեղծում,*
13. *Գրադարանների արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերում, ժամանակակից գրականության համալրում, անհրաժեշտ ջերմային ռեժիմի ստեղծում՝ գրքերը պահպանելու համար,*
14. *Սոցիալապես անապահով ընտանիքների և փախստականների բնակարանային-կոմունալ պայմանների բարելավում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Երևանի Արաբկիր վարչական շրջանում գործում են 21 հանրակրթական դպրոցներ, որից 17-ը՝ հիմնական դպրոց, 4-ը՝ ավագ դպրոց, կույրերի երեկոյան միջնակարգ դպրոց, 13 մանկապարտեզ, 4 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, 2 գրադարան և 2 երաժշտական դպրոց:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. նախատեսվում է վերանորոգել հհ.29, 30, 31, 32 մանկապարտեզները, մասնակի վերանորոգել՝ հհ. 23, 24, 33 մանկապարտեզները:

- 2018թ. կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում նախատեսվում է կազմակերպել ՀՀ հիշատակի և տոն օրերին նվիրված մշակութային 16 և սպորտային 19 միջոցառում:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Արաբկիր վարչական շրջանում գործում է 1 բարեգործական ճաշարան՝ «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ», որի ծառայություններից օգտվում է 198 կարիքավոր բնակիչ:

Վարչական շրջանում գործում են 567 հասարակական կազմակերպություն, 3 պոլիկլինիկա և 3 հիվանդանոց, որոնց միջոցով իրականացվում է շրջանի բնակչության բժշկական սպասարկումը, ինչպես նաև բազմաթիվ այլ բժշկական ծառայություններ մատուցող կառույցներ, այդ թվում՝ հետազոտական, ակնաբուժական, ատամնաբուժական:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Սոցիալական աջակցության համակարգը բազմաբնույթ է և ներառում է տարբեր սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ համայնքի սոցիալապես խոցելի խմբերին:

- Շարունակական է լինելու համագործակցությունը Գերմանական Կարմիր Խաչի, «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ՝ բարեգործական ճաշարանների գործունեության ապահովման նպատակով: Հարության տոնի կապակցությամբ նախատեսվում է բարեգործական ճաշարանում կազմակերպել տոնական միջոցառում:
- Կկազմակերպվեն մի շարք միջոցառումներ նվիրված տոն և հիշատակի օրերին, սոցիալապես անապահով ընտանիքներին կտրամադրվեն նվերներ, երեխաներին՝ պայուսակ և գրենական պիտույքներ, սննդի փաթեթներ: Վետերաններին կտրամադրվի նվիրատվություն իսկ Եղեռնը վերապրած բնակիչներին աջակցություն՝ դրամական տեսքով: Կարիքավոր երեխաների համար կկազմակերպվեն այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր:
- Նախատեսվում է կազմակերպել սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը հանրապետության տարբեր ճամբարներում:
- Պարբերաբար այցելություններ կիրականացվեն միայնակ ծերերին, աջակցություն կցուցաբերվի անօթևաններին՝ ժամանակավոր կացարաններում բնակվելու հարցում:
- Աջակցություն կցուցաբերվի վարչական շրջանի սոցիալապես անապահով և հաշմանդամություն ունեցող բնակիչներին՝ ՀՀ-ում գործող առողջարանների ուղեգրեր տրամադրելու հարցում:
- Կիրականացվի համագործակցություն առողջապահական հիմնարկների հետ՝ սոցիալապես անապահով խավերին անվճար բուժօգնություն ցուցաբերելու ուղղությամբ՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ միջնորդագրերով պետական պատվերի շրջանակներում կազմակերպելու բնակիչների բժշկական հետազոտությունը, բուժումը և վիրահատությունները: Բժշկական հաստատություններում նախատեսվում է կազմակերպել «Բաց դռների օրեր»՝ խորհրդատվությունների, մասնակի հետազոտությունների համար:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Արաբկիր վարչական շրջանում հաշվառված են 692 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցից 208-ը բարձրահարկ: Բազմաբնակարան բնակելի շենքերից 392-ն ունեն թեք լանջավոր, իսկ 300-ը՝ հարթ տանիքներ: Գործում են 459 վերելակներ:

Արաբկիր վարչական շրջանում հաշվառված է 77 հա կանաչապատ տարածք, այդ թվում՝ 2.9 հա պուրակ, 5 հա այգի, 8.4 հա սիզամարգ, 36.7 հա անտառ-պուրակ: Արաբկիր վարչական շրջանում գործող ոռոգման համակարգի երկարությունը 71000 գծմ է:

Արաբկիրում առկա է 1 խոշոր կամուրջ՝ «Լամբադա», 3 վերգետնյա, 6 ստորգետնյա անցումներ և 1 էստակադա:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան բնակելի 7 շենքերի թեք տանիքների վերանորգում, իսկ նյութերի տրամադրմամբ՝ 3200քմ և 7000քմ հարթ տանիքների վերանորոգում: Վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն 184 մուտքերում, կվերանորոգվի 20 վերելակ: Թվով 13 բակեր բարեկարգվելու են և կառուցվելու են նոր խաղահրապարակներ:
- Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն 60 բակերում:
- Վերանորոգելու են 8 բազմաբնակարան բնակելի շենքերի ներքին ջրագծերը: Իրականացվելու է զբոսայգիների կառուցում և պահպանում:
- Կառուցվելու է 1 մինի ֆուտբոլի դաշտ: Կիրականացվեն ասֆալտ-բետոնե ծածկույթի վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգվելու է 120գծմ եզրաքարեր:
- Հրազդանի կիրճում կատարվելու են բարեկարգման աշխատանքներ: Փողոցներում և բակերում տեղադրվելու է 59 նստարան և 1 զրուցարան:
- Պարբերաբար կատարվելու են շենքերի դեռատիզացիոն, դեզինֆեկցիոն, աղբախցերի լվացման և քլորով մշակման աշխատանքներ:
- Նախատեսվում է ընդլայնել կանաչապատ տարածքները՝ անտառ-պուրակները հասցնելով 53 հա: Տնկվելու է 4000 հատ ծառ և 3500 հատ թուփ:
- Գործող ոռոգման ցանցից հիմնանորոգվելու է շուրջ 1200 գծմ, և կառուցվելու է նորը՝ 1700 գծմ երկարությամբ:

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դավթաշեն վարչական շրջանի տարածքը կազմում է 647 հա, բնակչությունը՝ 42.4 հազ. մարդ: Շրջանն արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին և սահմանակից է Աջափնյակ և Արաբկիր վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի վերանորոգում,*
2. *Բակային տարածքների շարունակական բարեկարգում և կահավորում,*
3. *Արտաքին լուսավորության ապահովում,*
4. *Փողոցների ասֆալտապատում և բարեկարգում,*
5. *Բազմաբնակարան շենքերի ջրատար և ջրթափ խողովակների վերանորոգում,*
6. *Բազմաբնակարան շենքերի պայմանների բարելավում, հարթ և թեք տանիքների վերանորոգում, վերելակների վերանորոգում և հիմնանորոգում,*
7. *Գրունտային ճանապարհների ասֆալտապատում, արտաքին լուսավորության անցկացում և ջրահեռացման համակարգի ստեղծում,*
8. *Ոռոգման ցանցի արդիականացում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Դավթաշեն վարչական շրջանում գործում է 5 մանկապարտեզ, 6 հանրակրթական դպրոց (1 միջնակարգ, 4 հիմնական և 1 ավագ), Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց, 1 գրադարան, 1 շախմատի դպրոց, 1 հանդբոլի և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է վերանորոգել հ.60 մանկապարտեզը:
- Բակային տարածքներում և վարչական շրջանի բոլոր կրթական հաստատություններում նախատեսվում է իրականացնել մշակութային և սպորտային միջոցառումներ: 2018թ. իրականացվելու են 17 մշակութային և 7 սպորտային միջոցառումներ, որոնցում ընդգրկված են վարչական շրջանի պատանիներն ու երեխաները:
- Նախատեսվող սպորտային ծրագրերում կընդգրկվեն մանկապարտեզների սաները, հանրակրթական և արվեստի դպրոցի երեխաները: Սպորտային մրցաշարերում, միջոցառումներում և հուշամրցաշարերում կապահովվի շախմատի դպրոցի սաների, բռնցքամարտի դպրոցի սաների և վարչական շրջանի երեխաների մասնակցությունը:
- Կանցկացվի սպարտակիադիա, որտեղ կընդգրկվեն 8-ից 12-րդ դասարանի աշակերտները:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Դավթաշեն վարչական շրջանի տարածքում է գործում հ. 20 ամբուլատոր բժշկական կենտրոնը և «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանը:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Դավթաշեն վարչական շրջանի և ՀՀ մարզերի, ԼՂՀ շրջանների միջև համագործակցության ծրագրերի շրջանակում կիրականացվեն միջոցառումներ, ինչպես նաև մշակութային և սոցիալական բաղադրիչով տարատեսակ ծրագրեր:

- Համագործակցության շրջանակներում կպահպանվեն հիմնական սոցիալական ծրագրերի ուղղվածությունները, որտեղ կընդգրկվեն սոցիալապես անապահով, խոցելի, կարիքավոր բնակիչները:
- Անապահով ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, անօթևաններին, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կտրամադրվի՝ պարենային օգնություն, ֆինանսական և հոգեբանական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն, կկազմակերպվի երեխաների ամառային հանգիստը ճամբարներում, ինչպես նաև կիրականացվի 14 միջոցառում՝ տոն և հիշատակի օրերին նվիրված: «Գիտելիքի օրվա» կապակցությամբ 2018թ. սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին կհատկացվեն պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Շարունակական բնույթ է կրելու ճաշարանի սոցիալապես անապահով խավի համապատասխան շահառուների սպասարկումը:

2018թ. սոցիալական բաղադրիչ ունեցող միջոցառումներ են իրականացվելու Ամանորի և Սուրբ Ծնունդի, Զատկի տոնի, Մայրության և գեղեցկության տոնի, Հայրենական Մեծ պատերազմի, ՀՀ անկախության օրվա և ՀՀ Բանակի օրվա կապակցությամբ:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված է 193 բազմաբնակարան շենք, 415 վերելակ:

Դավթաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքը կազմում է 23 հա (կանաչապատ տարածք, ծաղկապատ տարածք, այգի, պուրակ):

2018 թվականի նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է իրականացնել թվով 4 բակային տարածքների բարեկարգում՝ ապահովելով աղբամաններ, նստարաններ, զրուցարաններ, մանկական խաղեր և մարզագույք: Կիրականացվեն բակային տարածքներում և խաղահրապարակներում առկա գույքի վերանորոգման աշխատանքներ:

Կիրականացվեն 58 մուտքերի նորոգման աշխատանքներ՝ շենքերի բոլոր հարկերի ընդգրկմամբ, կվերանորոգվեն պատուհանները և դռները, շքամուտքի աստիճանավանդակը, բազրիքները:

Կվերանորոգվեն բնակելի շենքերի հարթ տանիքները, ձեռք կբերվեն և կտեղադրվեն անհրաժեշտ սարքավորումներ, պահեստամասեր և նյութեր՝ վերելակների անխափան գործունեությունն ապահովելու համար:

Աջակցություն կցուցաբերվի համատիրություններին, բազմաբնակարան շենքերում ներքին կոմունիկացիոն ցանցի վերանորոգման, մալուխների կարգի բերման, շենքերի նկուղների ջրատար խողովակների նորոգման, ջրթափ խողովակների վերանորոգման աշխատանքների ուղղությամբ:

Կիրականացվեն փողոցների երթևեկելի հատվածի և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկույթի ընթացիկ և կապիտալ նորոգման աշխատանքները, իսկ փողոցների եզրաքարերի վերանորոգումը կիրականացվի գույքագրման արդյունքում ստացված տեղեկատվությանը համապատասխան:

Շարունակական բնույթ է կրելու Դավթաշենի հուշարձանի հարակից տարածքի, բակային հանգստի գոտիների ծառերի և կանաչ տարածքների խնամքն ու մշակումը, մայթերի հարակից տարածքների, Եղվարդի խճուղու միջնամասի կանաչ շերտի, ինչպես նաև Կենտրոնական և Կաղնուտի այգիների խնամքի ու պահպանման աշխատանքները:

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Էրեբունի վարչական շրջանն ընդգրկում է Երևան քաղաքի հարավարևելյան հատվածը՝ զբաղեցնելով 4749 հա տարածք և ունի 127,3 հազ. բնակչություն:

Էրեբունին սահմանակից է Երևանի Կենտրոն, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջաններին, ինչպես նաև ՀՀ Կոտայքի և Արարատի մարզերին:

Հիմնախնդիրներ

1. *Ոռոգման ցանցի հիմնական և մասնակի վերանորոգում, կոյուղագծերի և դիտահորերի նորոգում, ինչպես նաև շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում,*
2. *Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների և վթարային պատշգամբների վերանորոգում,*
3. *Հանգստի նոր գոտիների ստեղծում, կանաչ տարածքների ընդլայնում, բակային տարածքների բարեկարգում, միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում,*
4. *Մանկապարտեզների վերանորոգում,*
5. *Աղբահանության և սանմաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավում,*
6. *Առաջնային ուշադրություն և հոգածություն միայնակ սոցիալապես անապահով թոշակառուներին՝ առողջական և սոցիալական խնդիրների լուծման հարցում, արտոնությունների տրամադրման և աջակցության հատուկ ծրագրերի շարունակականություն,*
7. *Օժանդակություն տեղաշարժման սահմանափակ կարողություններով կարիքավոր բնակիչներին՝ սայլակների ձեռք բերման ուղղությամբ, նոր թեքահարթակների կառուցում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում է 3 մասնավոր և 22 պետական հանրակրթական դպրոց (3 ավագ, 16 հիմնական, 3 միջնակարգ), 3 մասնավոր և Երևանի ենթակայության՝ 12 մանկապարտեզ, 4 գրադարան, 1 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, 1 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, 1 մարզատրամաբանական խաղերի մարզադպրոց:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. նախատեսվում է վերանորոգել հհ. 66, 74, 75 մանկապարտեզները:
- Շարունակական բնույթ են կրելու փոխայցելություններն Արցախի Հանրապետության, Հադրութի և Ստեփանակերտի շրջանների, ինչպես նաև Սևան քաղաքի դպրոցներ, մանկապարտեզներ, մարզադպրոցներ:
- 2018թ. ընթացքում կկազմակերպվեն 16 մշակութային 10 սպորտային միջոցառումներ:
- Կիրականացվի համագործակցություն Սևան քաղաքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի, Վրաստանի «Հայ Արտ» մշակութային կենտրոնի, Երևանի Պետական Դրամատիկական, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական, Միհեր Մկրտչյան, Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի, Համազգային թատրոնների հետ: Կշարունակվի համատեղ մշակութային ծրագրերի իրականացումը «Դո-ռե-մի» երգի ստուդիայի և «Լիբերտո» ակումբի հետ:

- Վարչական շրջանի մանկապարտեզների ավարտական խմբերի սաներին կտրամադրվեն պայուսակներ՝ գրենական պիտույքներով:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում են «Էրեբունի» և «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնները, որոնք ընդգրկում են 2 ծննդատուն, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցը, ՀՀՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալը, 6 ամբուլատոր պոլիկլինիկա, ատամնաբուժարաններ, շտապ օգնության ենթակայան:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Էրեբունի վարչական շրջանում 2018թ. ընթացքում կիրականացվեն սոցիալական տարբեր ծրագրեր, որոնք ուղղված կլինեն բազմազավակ և անապահով ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, միայնակ տարեցների կենսական ապահովմանը, ինչպես նաև բնակիչների սոցիալական պաշտպանվածությանը և սոցիալական հիմնախնդիրների լուծմանը:
- Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչների համար նախատեսվում է դրամական, նյութական և դեղորայքային օգնություն: Բազմազավակ անապահով ընտանիքների, Հայրենական պատերազմի վետերանների, միայնակ տարեցների, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, ինչպես նաև սոցիալական այլ խմբերի կցուցաբերվի աջակցություն՝ ձմռան վառելիքի ձեռքբերման, բուժօգնության և սոցիալական բնույթի այլ հարցերում:
- Կկազմակերպվի սոցիալապես անապահով և հարազատ չունեցող անձանց հուղարկավորությունը: Սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին կտրամադրվեն պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Մարտի 8-ի, ապրիլի 7-ի կապակցությամբ կկազմակերպվեն միջոցառումներ վարչական շրջանի կանանց, բազմազավակ մայրերի և սիրիահայերի համար, կտրամադրվեն նվերներ, դրամական աջակցություն: Սոցիալապես անապահով խավերի համար կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված տոներին և հիշատակի օրերին: Կշարունակվի սիրիահայ ընտանիքներին բազմաբնույթ աջակցության ցուցաբերման ծրագիրը: «Ամանորի և Սուրբ Ծննդյան» տոների կապակցությամբ բազմաթիվ անապահով ընտանիքներ կստանան սննդի փաթեթներ:
- Վարչական շրջանի կարիքավոր, սակավ ապահովված, բազմազավակ ընտանիքների 7-ից 13 տարեկան շուրջ 160 դպրոցականներ ամառային արձակուրդի 20-օրյա հանգիստը կանցկացնեն մանկական մարզաառողջարարական ճամբարում:
- Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ կտրամադրվեն դրամական օգնություններ: Կիրականացվեն միջոցառումներ նաև հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա կապակցությամբ, կցուցաբերվի օժանդակություն նրանց սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին, կցուցաբերվի աջակցություն հաշմանդամություն ունեցող կարիքավոր բնակիչներին՝ սայլակների ձեռքբերման գործում:
- 2018 թվականին կշարունակվի սոցիալապես անապահով բնակիչների՝ պետպատվերի շրջանակներում բուժսպասարկման ծրագիրը: Բնակչության շրջանում առողջապահական խնդիրների լուծման նպատակով ծրագրեր կիրականացվեն առողջապահական կազմակերպությունների հետ:
- Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ համագործակցությամբ արդյունքում կշարունակի գործել բարեգործական ճաշարանը:

- «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ կիրականացվեն աշխատանքներ՝ անօթևան անձանց և ընտանիքներին ժամանակավոր կացարանում տեղավորելու ուղղությամբ՝ ապահովելով շուրջօրյա խնամք, կենսակերպի փոփոխություն, հասարակական կյանքին ինտեգրում:
- Կշարունակվի ակտիվ համագործակցությունը սոցիալական հիմնահարցերով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպությունների և կառույցների հետ, համատեղ կիրականացվեն սոցիալական բնույթի տարբեր ծրագրեր:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Էրեբունի վարչական շրջանում առկա է 261 բազմաբնակարան շենք: Գործում է 218 վերելակ: Փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 101.9 կմ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. նախատեսվում է իրականացնել ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման աշխատանքներ: Կիրականացվի բազմաբնակարան շենքերի 6850քմ հարթ և 1100 քմ թեք տանիքների վերանորոգում: Նախատեսվում է 9 վերելակների հիմնանորոգում, բազմաբնակարան շենքերի 170 մուտքերի վերանորոգում, նախադպրոցական հաստատությունների 440քմ տանիքների հիմնանորոգում և վերանորոգում:
- Նախատեսվում է հիմնանորոգել 5 բակ:
- Խաղաղ Դոնի փող. հ. 27 շենքի բակում կկառուցվի մինի ֆուտբոլի դաշտ:
- Նախատեսվում է իրականացնել 7հա կանաչ տարածքների պահպանման և բարեկարգման, 3600մ ոռոգման ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ:
- Շարունակական բնույթ են կրելու վարչական շրջանում առկա հուշարձանների պահպանման աշխատանքները, վերանորոգվելու և բարեկարգվելու են չորս հուշարձանների հարակից տարածքները:
- 2018թ. նախատեսվում է Էրեբունի, Նոր Արեշի 50-րդ, Գուրգեն Մահարու և Նուբարաշենի փողոցների հատման մասում հիմնել համաքաղաքային նոր զբոսայգի:

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կենտրոն վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին: Տարածքը կազմում է 1335 հա, բնակչությունը՝ 125,3 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Ասֆալտապատում, մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգում, բակային տարածքների բարեկարգում, կանաչապատում, միջբակային տարածքների լուսավորում,*
2. *Խաղահրապարակների ստեղծում, կանաչ տարածքների ընդլայնում և պահպանում բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում, սանմաքրման և աղբահանության որակի բարելավում, կանաչապատ տարածքների խնամքի նորագույն մոտեցումների կիրառում, հանգստի գոտիների ստեղծում, այգիների բարեկարգում և կանաչապատում,*
3. *Տրանսպորտային նոր հանգույցների ստեղծում, փողոցային տրանսպորտային հոսքերի բեռնաթափում,*
4. *Բազմաբնակարան շենքերում բնակֆոնդի պահպանման, վերանորոգման աշխատանքների իրականացմանն ուղղված աջակցության ապահովում, պարտադիր նորմերի արդյունավետ և ամբողջական իրականացում,*
5. *Տեղաշարժվելու դժվարություններ ունեցող անձանց համար թեքահարթակների ստեղծում,*
6. *Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների, հարթ և թեք տանիքների, կոյուղագծերի և ջրագծերի վերանորոգում, վերելակների վերանորոգում,*
7. *Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի արդիականացում, բակերի ոռոգման ցանցերի վերականգնում և կանաչապատում,*
8. *Փողոցներում և բակային տարածքներում էներգախնայող նոր համակարգերի տեղադրում, արտաքին լուսավորության ապահովում, վթարային հենասյուների փոխարինում,*
9. *Բնակչության անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով անցումների ընթացիկ նորոգում և նորերի կառուցում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Կենտրոն վարչական շրջանում գործում է 34 մանկապարտեզ, որից՝ 21-ը վարչական շրջանի ենթակայության, 31 դպրոց (6 ավագ, 25 հիմնական), 23 բուհ, արվեստի և երաժշտական 7 դպրոց (վարչական շրջանի ենթակայության՝ 2), միջնակարգ մասնագիտական 2 ուսումնարան, 4 գրադարան (վարչական շրջանի ենթակայության՝ 2), կրթական-մշակութային 9 հաստատություն (վարչական շրջանի ենթակայության՝ 1), 2 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, մինի ֆուտբոլի 25 դաշտ, 19 թատրոն, 5 մշակութային կենտրոն, 31 թանգարան և ցուցասրահ: Շրջանում գործում է 9 կրթական-մշակութային հաստատություն՝ 1-ը վարչական շրջանի ենթակայության, 19 թատրոն, 5 մշակութային կենտրոն, 31 թանգարան և ցուցասրահ:

2018թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է վերանորոգել հհ. 2, 6, 8, 9, 13, 16, 18 մանկապարտեզները:

- Շարունակական բնույթ կկրեն տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպումը: 2018թ. նախատեսվում է իրականացնել 26 մշակութային, 13 կրթական, 7 սպորտային միջոցառումներ: Երեխաների ամառային հանգիստը կկազմակերպվի Հայաստանի ճամբարներում:
- Կհիմնանորոգվեն վարչական շրջանի մանկապարտեզները և կրթօջախները, կկահավորվեն համապատասխան գույքով, երաժշտական գործիքներով, խաղալիքներով և բակային խաղամիջոցներով:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Կենտրոն վարչական շրջանում գործում է 29 առողջապահական կազմակերպություն (Երևանի ենթակայության՝ 5):

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները կկրեն շարունակական բնույթ: Շարունակվելու է համագործակցությունը Գերմանական կարմիր խաչի, պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ՝ վերջիններիս ներգրավելով առկա սոցիալական խնդիրների լուծմանը:
- 2018թ. ընթացքում տոնական օրերին («Մայրության և գեղեցկության օր», «Գիտելիքի օր», «Երեխաների պաշտպաբության օր», «Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր», «ՀՀ բանակի օր», «Ամանոր և Սուրբ Ծնունդ») վարչական շրջանի կարիքավոր ընտանիքներին կցուցաբերվի աջակցություն՝ դրամական օգնություն, սննդի փաթեթներ, առաջին անհրաժեշտության պարագաներ, երեխաներին՝ սպորտային հագուստ, կոնֆետների փաթեթներ, պայուսակներ և գրենական պիտույքներ, մեծահասկաներին՝ կենցաղային պարագաներ, նյութական օգնություն: Դրամական աջակցություն կցուցաբերվի նաև 2 հասարակական կազմակերպությունների, անժառանգ ծերերին, նորակոչիկ զինծառայողներին, ՀՄՊ և արցախյան ազատամարտի մասնակիցներին:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Կենտրոն վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 106,0 կմ է: Վարչական շրջանում հաշվառված է բնակելի 764 շենք, անհատական բնակելի 8300 տուն, 581 վերելակ:

Վարչական շրջանում առկա է 425 բակային տարածք, 22 զբոսայգի, պուրակ, հանգստյան գոտի: Կանաչապատ տարածքները 49 հա է, ոռոգման ցանցի երկարությունը 50,1 կմ է, մերձակա անտառային գոտին՝ 120 հա:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Իրականացվելու են փողոցների, բակերի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ: Կտեղադրվեն մանկական խաղեր, սպորտային մարզագույք:
- Կիրականացվեն 8 բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ (ընթացիկ վերանորոգման աշխատանքները կիրականացվեն համատիրությունների միջոցով), կկառուցվի մինի ֆուտբոլի դաշտ:
- Կիրականացվեն փողոցների և բակերի լուսավորության աշխատանքներ: Բակերում կվերանորոգվեն առկա աստիճանները, հենապատերը և եզրաքարերը:
- Իրականացվելու են բազմաբնակարան շենքերի 7570 քմ հարթ և թվով 3 շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ: Նախատեսվում է վերանորոգել 220 շքամուտք: Վերելակների, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշարերի

վերանորոգման աշխատանքները կիրականացվեն համատիրությունների միջոցներով:

- Նախատեսվում է իրականացնել անցումների վերանորոգման աշխատանքներ:
- 2018թ. ընթացքում կիրականացվեն կանաչ տարածքների ընդլայնման, պահպանման և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ ծառատունկ, ծաղկապատում, սիզամարգերի բարեկարգում և ջրագծերի վերականգնում: Կիրականացվեն հուշարձանների պահպանմանն ուղղված աշխատանքներ:

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններին: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 2516 հա, բնակչությունը՝ 136.9 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Միջբակային տարածքների ասֆալտապատում, ճանապարհների վերակառուցում և ամբողջական բարեկարգում, եզրաքարերի նորոգում,*
2. *Այգիների կանաչապատում և բարեկարգում, հանգստի գոտիների և բակերի վերջնական ձևավորում,*
3. *Հենապատերի հիմնանորոգում և վերանորոգում, միջբակային անցուղիների աստիճանների վերանորոգում և վերակառուցում, ինչպես նաև թեքահարթակների կառուցում,*
4. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում,*
5. *Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում, վերելակների,*
6. *Բազմաբնակարան շենքերի աղբահանության և սանմաքրման աշխատանքների որակի բարելավում,*
7. *Ոռոգման ցանցի ընդլայնում, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգում,*
8. *Վերգետնյա և ստորգետնյա անցումների վերանորոգում, արտաքին լուսավորության ապահովում,*
9. *Կանաչ տարածքների ընդլայնում և հուշարձանների պահպանություն,*
10. *Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում,*
11. *Սոցիալապես անապահով անձանց համար բժշկական հետազոտությունների և բուժման կազմակերպում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է 24 հանրակրթական դպրոց (4 ավագ, 1 միջնակարգ, 14 հիմնական, 1 կրթահամալիր, 4 մասնավոր), 24 մանկապարտեզ, 1 գրադարան, 4 մարզադպրոց, 1 շախմատի դպրոցը, 2 մշակութային կենտրոն, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, մեկ համալսարան, 1 հատուկ դպրոց: Շրջանի տարածքում է գործում Երևանի հեծանվահրապարակը:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. նախատեսվում է վերանորոգել հհ.83, 89, 96 մանկապարտեզները:
- Իրականացվելու են դպրոցների, արտադպրոցական կազմակերպությունների շենքերի մասնակի վերանորոգման աշխատանքներ: Նախատեսվում է բարելավել մշակութային կազմակերպությունների շենքային պայմանները և իրականացնել մասնակի վերանորոգում:
- Նախատեսվում է կրթական, մշակութային միջոցառումների իրականացում և սպորտի մասսայականացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է 4 պոլիկլինիկա, 2 ծննդատուն, «Աստղիկ» բժշկական կենտրոնը, «Արմենիկում» կլինիկական կենտրոնը, «Սեբաստիա» բժշկական կենտրոնը, մեծահասակների «Նելադենտ» ՍՊԸ և մանկական «Հ.4 մանկական ստոմ. պոլիկլինիկա» ՍՊԸ ստոմատոլոգիական պոլիկլինիկաները:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Աջակցություն կցուցաբերվի վարչական շրջանի սոցիալապես խոցելի խմբերին: «Սուրբ Զատիկի» տոնի, «Ամանորի և Սուրբ Ծնունդի», «Գիտելիքի օրվա» կապակցությամբ անապահով ընտանիքներին կտրամադրվեն պարենային, դրամական աջակցություն:
- Նպաստառու, հաշմանդամություն ունեցող անձանց, զոհվածի ընտանիքների 1-ic 4 դասարանի երեխաներին կտրամադրվի աշակերտական պայուսակ՝ գրենական պիտույքներով, կկազմակերպվի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստը:
- Աջակցություն կտրամադրվի սիրիահայ ընտանիքներին:
- Կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված «Կանանց միամսյակին», «Հաղթանակի օրվան», «Երեխաների պաշտպանության միջազգային օրվան», ՀՊՄ մասնակիցներին կտրամադրվի դրամական աջակցություն:
- «Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա» կապակցությամբ նվերներ կտրվեն հաշմանդամություն ունեցող անձանց, «Տարեցների միջազգային օրվա» կապակցությամբ տարեցների թիվ 1 ինտերնատին կտրվեն նվերներ, դրամական աջակցություն և կկազմակերպվի ճաշկերույթ:
- 2018թ. ընթացքում կշարունակվի սոցիալապես անապահով ընտանիքներին օժանդակության ցուցաբերումը: Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով կշարունակվի շարժասայլակների, լսողական սարքերի տրամադրումը սոցիալապես անապահով ընտանիքներին:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կա 586 բազմաբնակարան բնակելի շենք, որից 500-ը՝ բարձրահարկ, 960 վերելակ, որից 900-ը՝ մարդատար: Վարչական շրջանի 122 փողոցների երկարությունը կազմում է 97,79 կմ: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում առկա է 9 զբոսայգի, կանաչ տարածությունը 90.01 հա է, ոռոգման ցանցի երկարությունը՝ 40,7 կմ է:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Իրականացվելու է ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքներ և 260 գծմ փողոցների եզրաքարերի վերանորոգում:
- 2018թ. նախատեսվում է վերանորոգել 7500 քմ հարթ տանիք:
- Կիրականացվեն նաև վերելակների վերանորոգման, հորանների մաքրման, ներքին ցանցի խողովակների վերանորոգման աշխատանքներ:
- Նախատեսվում է վերանորոգել բազմաբնակարան շենքերի 154 մուտք:
- 2018թ. կիրականացվի 2 բակային տարածքների բարեկարգում:
- Կվերանորոգվեն, կվերակառուցվեն հետնիոտների անցուղիների 5 աստիճանավանդակներ, բակերի և այգիների անսարք մանկական խաղային համալիրները, վնասված նստարանները:

- Կվերանորոգվեն բազմաբնակարան բարձրահարկ շենքերի անձրևատար խողովակները և կոյուղու ներքին ցանցը: Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի աղբախցիկների վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ:
- Նախատեսվում է կանաչ տարածքների ավելացում, դրանց խնամքի համար նորագույն մոտեցումների կիրառում, 15000 գծմ ոռոգման ցանցի վերանորոգում, 83 հա կանաչ տարածքների՝ անտառ-պուրակների, այգիների, սիզամարգերի խնամք, բարեկարգում և ընդլայնման աշխատանքներ:
- Խիտ բնակեցված թաղամասերում կստեղծվեն 450 քմ ծաղկային գոտիներ, կտնկվի 55000 հատ ծառ, 700 հատ թուփ և 1000 հատ վարդի թուփ: Նախատեսվում է չոր և հիվանդ ծառերի մասնակի և խոր էտ, ծառերի սնուցում՝ հանքային պարարտանյութերով, բուժում՝ թունաքիմիկատներով, կրապատում:

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիս-արևելյան հատվածում, սահմանակից է Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 1411 հա, բնակչությունը՝ 131.2 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Մանկապարտեզների, մարզական և մշակութային կրթօջախների, բժշկական հաստատությունների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի արդիականացում, վերազինում,*
2. *Մարզահրապարակների և խաղահրապարակների բարեկարգում, նորերի կառուցում, մանկական խաղերի, մարզասարքերի տեղադրում,*
3. *Վարչական շրջանի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ և հիմնական վերանորոգում,*
4. *Չլուսավորվող փողոցների, բակային և միջբակային տարածքների արտաքին լուսավորության ապահովում, արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում, վթարային հենասյուների փոխարինում նորերով,*
5. *Բակային տարածքների ամբողջական բարեկարգում, կանաչապատում, քաղաքային կահավորանքի՝ նստարանների և զրուցատաղավարների ավելացում,*
6. *Եզրաքարերի, հենապատերի և առկա քայքայված աստիճանների վերանորոգում,*
7. *Բազմաբնակարան շենքերում բնակֆոնդի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ շենքերի և շինությունների հարթ ու թեք տանիքների, մուտքերի վերանորոգում, վերելակային տնտեսության վերանորոգում, արդիականացում, ներքին կոյուղագծերի, ջրագծերի և ջրաթափ խողովակների նորոգում,*
8. *Հետիոտնային ստորգետնյա անցումների ընթացիկ նորոգում և կառուցում, վերգետյան անցումների կառուցում,*
9. *Տեղաշարժման դժվարություններ ունեցողների համար թեքահարթակների կառուցում,*
10. *Բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի արդյունավետ և ամբողջական իրականացում, սանմաքրման և աղբահանության որակի բարելավում,*
11. *Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, սանիտարական մաքրում, նոր հանգստի գոտիների ստեղծում, ոռոգման ցանցի վերականգնում և ընդլայնում,*
12. *Վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների և կենսապայմանների բարելվմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում:*

Կրթություն, մշակույթի և սպորտ

Նոր Նորք վարչական շրջանում գործում է 22 մանկապարտեզ, 20 դպրոց (5 ավագ, 15 հիմնական), 1 բուհ, 1 արվեստի և 1 երաժշտական դպրոց, միջին մասնագիտական 2 քոլեջ, 1 ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ճեմարան, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, 1 թանգարան, 1 հայորդաց տուն, 4 մարզադպրոց, 4 մշակութային հաստատություն:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել Երևանի հհ. 100, 112 մանկապարտեզների վերանորոգման աշխատանքներ: Վարչական շրջանում գործող

մանկապարտեզներում կիրականացվի գույքի արդիականացում և խոհանոցային պարագաների համալրում, ինչպես նաև սննդի որակի, ժամկետների պահպանման, ուսումնադաստիարակչական աշխատանքների նկատմամբ հսկողություն:

- Մշտապես վերահսկողության տակ են գտնվելու ուսումնական հաստատությունների հարակից տարածքների սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները:
- 2018թ. ընթացքում նախատեսվում է կազամակերպել մշակութային և սպորտային միջոցառումներ՝ նվիրված ՀՀ ազգային տոներին և հիշատակի օրերին:
- Երեխաների համար կկազմակերպվեն բակային ճամբարներ և մանկական զվարճալի միջոցառումներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Նոր Նորք վարչական շրջանում գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, 5 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան՝ «Նոր Նորք», «ՀՕՖ», «Զատիկ», «Առաքելություն Հայաստան», «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և ՀԲԸՄ» և «Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի» կրոնական կազմակերպություն:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նոր Նորք վարչական շրջանի սոցիալապես խոցելի խմբերին, մասնավորապես, բարեգործական ճաշարանների շահառուներին, զոհված ազատամարտիկներին, զինհաշմանդաներին, ծնողազուրկ երեխաներին, միայնակ թոշակառուներին, բազմազավակ, բազմանդամ, նպաստառու ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, սիրիահայերին սոցիալական ծրագրի շրջանակներում նախատեսվում են տրամադրել տարատեսակ օգնություններ:
- Անապահով ընտանիքներին կտրամադրվի վառելափայտ, հասգուստ, սննդի փաթեթներ, կենցաղային իրեր, տոն և հիշատակի օրերին՝ աջակցություն, սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ: Դրամական և նյութական աջակցություն կտրամադրվի դժվար կացության մեջ հայտնված և անապահով ընտանիքներին՝ սոցիալական խնդիրների լուծման նպատակով: Կկազմակերպվի 7-ից 13 տարեկան երեխաների ամառային հանգստը մարզաառողջարանային ճամբարում:
- Նախատեսվում է միջնորդագրեր տրամադրել սոցիալապես խոցելի խմբերին՝ պետպատվերի շրջանակներում ստացիոնար բուժում անցկացնելու և բարեգործական ճաշարաններում ընդգրկելու նպատակով:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Նոր Նորք վարչական շրջանի փողոցների և ճանապարհների երկարությունը 87.4 կմ է: Վարչական շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք, գործում է 593 վերելակ: Նոր Նորք վարչական շրջանում առկա է 6 գետնանցում, 335 բակային տարածք, 143 խաղահրապարակ, 20 մարզահրապարակ, 18 մինի ֆուտբոլի դաշտ և 3 լողավազան:

Վարչական շրջանի կանաչ տարածությունը 399,18 հա է, առկա է 17 զբոսայգի և 6 պուրակ: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել փողոցների երթևեկելի մասի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ և հիմնական վերանորոգում, 1000 գծմ բազալտե եզրաքարերի ընթացիկ վերանորոգում:
- Իրականացվելու է 2 խաղահրապարակի և 3 հանգստի գոտիների կառուցում և բարեկարգում: Բակային տարածքներում և այգիներում տեղադրելու է 8 ճոճանակ, 8 զրուցարան և 75 նստարան:
- Հիմնանորոգվելու են 3 աստիճաններ, 1 հենապատ, 5 վերելակ, մոտ 9000քմ հարթ տանիք, կատարվելու է բազմաբնակարան շենքերի 220 շքամուտքերի վերանորոգում:
- Բնակֆոնդի պահպանման նպատակով ձեռք են բերվելու ազբոշիֆեր, ջրթափ խողովակներ, ինչպես նաև տարբեր տեսակի շինարարական նյութեր:
- 2018թ. ընթացքում շարունակական աշխատանքներ են իրականացվելու 37.58 հա կանաչ տարածքների պահպանման համար՝ ծառերի, թփերի երիտասարդացում, տնկում, էտում և բուժում, ծաղկանոցների և սիզամարգերի սանիտարական մաքրում, հողի փխրեցում, պարարտացում, ոռոգում, թեք լանջերի ճմապատում:
- Նախատեսվում է իրականացնել կանաչ տարածքների ընդլայնում, նոր սիզամարգերի, ծաղկանոցների ստեղծում, խիտ բնակեցված թաղամասերում բակային այգիների բարեկարգում, կանաչապատում, ոռոգման ցանցի վերականգնում և շահագործում:

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նորք-Մարաշ վարչական շրջանը զբաղեցնում է 470 հա տարածք, բնակչություն թիվը կազմում է 11.8 հազ. մարդ: Վարչական շրջանը սահմանակից է Կենտրոն, Էրեբունի և Նոր Նորք վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Մարզական և մշակութային օջախների, կրթօջախների բակային տարածքների բարեկարգում և կանաչապատում,*
2. *Բակային տարածքների արտաքին լուսավորության ապահովում,*
3. *Ոռոգման ցանցի և կանաչ տարածքների ընդլայնում,*
4. *Առողջապահական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, գույքի արդիականացում, վերազինում, բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակի բարձրացում,*
5. *Միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում,*
6. *Նոր հանգստի գոտիների և խաղահրապարակների ստեղծում, բակային տարածքների ամբողջական բարեկարգում,*
7. *Թեքահարթակների ստեղծում՝ տեղաշարժման դժվարություններ ունեցողների համար,*
8. *Գյուղմթերքի շուկայի ստեղծում,*
9. *Խմելու ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում է 4 մանկապարտեզ, 4 դպրոց, 2 հատուկ նշանակության դպրոց՝ «Լսողության խանգառումներ ունեցող երեխաների գիշերօթիկ դպրոցը» և «Թիվ 2 օժանդակ դպրոցը», 1 գրանդարան, 1 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, 1 երաժշտական դպրոց:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Իրականացվելու է 25 միջոցառում՝ նվիրված ՀՀ ազգային տոներին և հիշատակի, որոնց մասնակից կդառնան կրթական և մշակութային հաստատությունների սաները և բնակիչները:
- 2018թ. ընթացքում, առողջ ապրելակերպի քարոզման նպատակով, կկազմակերպվեն 26 սպորտային միջոցառումներ, մարզական խաղեր՝ բնակչության տարբեր տարիքային խմբերի մասնակցությամբ:
- Նախատեսվում է Ա.Իսահակյանի անվան գրադարանի մասնաճյուղի գրքային ֆոնդի համալրում, երաժշտական դպրոցի համար երաժշտական գործիքների ձեռքբերում, նոր ժամանակակից գույքի ձեռքբերում, մարզադպրոցի համար անհրաժեշտ մարզագույքի ապահովում:
- Նախատեսվում է մանկապարտեզների ավարտական խմբերի 1-ին դասարան հաճախող երեխաներին դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանում գործում են 6 առողջապահական հիմնարկներ՝ «Նորք-Մարաշ»

բժշկական կենտրոնը, Վնասվածքաբանության, օրթոպեդիայի և վերականգնողական կենտրոնը, «Նորք» ինֆեկցիոն հանրապետական կենտրոնը, «Հովարդ Կարագյոզյան» մանկական ատամնաբուժական կենտրոնը, «Սուրբ Մարիամ» առողջապահական կենտրոնը, թիվ 5 պոլիկլինիկան: Շրջանում գործում են նաև Մանկան տունը և Նորքի տուն-ինտերնատը:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կշարունակվի համագործակցությունը հովանավոր կազմակերպությունների և անհատ բարերարների, մայրաքաղաքում գործող թատրոնների և մշակույթի տների հետ՝ վարչական շրջանում բնակվող կարիքավոր ընտանիքներին թատերական և համերգային ծրագրերին մասնակից դարձնելու նպատակով:
- Համագործակցելով անհատ բարերարների և հասարակական կազմակերպությունների հետ՝ նյութական և պարենային աջակցության կցուցաբերվի սոցիալապես անապահով ընտանիքներին, ՀՄՊ և Արցախյան պատերազմի մասնակից վետերաններին, ինչպես նաև զոհված ազատամարտիկների ընտանիքներին:
- Նախատեսվում է պետպատվերի շրջանակում, բուժօգնություն ստանալու համար միջնորդագրեր տրամադրել թոշակառուներին և հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին:
- Կկազմակերպվի երեխաների, սոցիալապես խոցելի խմբերի և վետերանների ամառային հանգիստը ճամբարներում: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին կտրամադրվեն դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Նորք-Մարաշ վարչական շրջանի փողոցների թիվը 25-ն է, որոնց երկարությունը կազմում է մոտ 22.5 կմ: Վարչական շրջանի գործող ոռոգման ցանցի երկարությունը կազմում է 15.467 զծմ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքները

- Իրականացվելու է փողոցների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ նորոգման, ինչպես նաև խմելու ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ:
- Կկառուցվեն թեքահարթակներ:
- Նախատեսվում է կանաչապատ տարածքների մակերեսը հասցնել 1.2 հա:
- Կիրականացվեն մոտ 410 զծմ ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքներ՝ կանաչ տարածքների խնամքն ու պահպանումն ապահովելու համար:
- Նորքի 13-րդ փողոցի վերջնամասում կկառուցվի հասարակական նշանակության հանգստի գոտի՝ կիրականացվեն բարեկարգման աշխատանքներ, կտեղադրվեն նստարաններ, աղբամաններ, կիրականացվի արտաքին լուսավորության ցանցի անցկացում:
- Նախատեսվում է նաև Նորքի անտառների վերականգնմանն ուղղված աշխատանքներ:
- Իրականացվելու են նաև նախկինում կառուցված բակերի և խաղահրապարակների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նուբարաշեն վարչական շրջանը սահմանակից է Կոտայքի և Արարատի մարզերին, Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 1724 հա, բնակչությունը՝ 9.8 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Նոր հանգստի գոտիների և խաղահրապարակների ստեղծում և շահագործում,*
2. *Փողոցների, մայթերի, բակային տարածքների ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում,*
3. *Չլուսավորվող փողոցների ու բակային տարածքների արտաքին լուսավորության ապահովում,*
4. *Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների և վերելակների վերանորոգում,*
5. *Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հիմնանորոգում,*
6. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների կառուցում,*
7. *Սոցիալապես անապահով ընտանիքների կենսապայմանների բարելավում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում գործում է 1 մանկապարտեզ, 1 նախակրթարան, 2 հանրակրթական դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 մարզամշակութային կենտրոն, 1 գրադարան, 1 շախմատի մանկապատանեկան կենտրոն, Երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոն, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.11 օժանդակ (գիշերօթիկ) դպրոցը, Նուբարաշենի մասնագիտացված ռազմամարզական դպրոցը:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. նախատեսվում է կառուցել մանկապարտեզ: Կիրականացվի հսկողություն՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների, սննդի որակի և ժամկետների պահպանման, նկատմամբ: Նախատեսվում է մանկապարտեզների ջեռուցման կաթսայի փոխարինում նորով:
- Մշտապես հսկողություն կիրականացվի կրթամշակութային հաստատությունների հարակից տարածքների՝ սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների նկատմամբ:
- 2018թ. նախատեսվում է կազմակերպել և իրականացնել սպորտային, ՀՀ ազգային տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, մարզաառողջարարական և ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված ծրագրեր, այցեր թանգարաններ: «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում կկազմակերպվեն բակային ճամբարներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Նուբարաշեն վարչական շրջանում գործում է Նուբարաշեն ՍԱՏԲ-ն, Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ը, Նուբարաշեն հոգեբուժական կլինիկան, «Նուբարաշենի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Սոցիալապես անապահով ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, միայնակ տարեցներին, կենսաթոշակառուներին, միակողմանի, և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, բազմազավակ ընտանիքներին կցուցաբերվի դրամական, նյութական և պարենային աջակցություն:
- Առողջապահության ոլորտում շարունակվելու է պետության կողմից երաշխավորված, անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը սոցիալապես անապահով բնակիչներին:
- Հաղթանակի օրվա կապակցությամբ ֆինանսական աջակցություն կտրամադրվի վարչական շրջանի զոհված ազատամարտիկների ընտանիքներին, Արցախյան պատերազմի 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին: Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների երեխաների հանգիստը կկազմակերպվի մարզաառողջարանային ճամբարում:
- Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ երեխաներին կտրամադրվեն պայուսակներ և գրենական պիտույքներ, Ամանորին՝ սննդի փաթեթներ:
- 2018թ. ընթացքում նախատեսվում է ընդլայնել հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակը:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Նուբարաշեն վարչական շրջանում հաշվառված է 1522 սեփական տնտեսություն, 35 բազմաբնակարան շենք, գործում է 6 վերելակ:

Վարչական շրջանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները կազմում են 4,9 հա:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կիրականացվեն մայթերի և փողոցների ասֆալտապատման աշխատանքներ:
- Կիրականացվեն արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ, կբարեկարգվեն փողոցները, մայթերը և եզրաքարերը:
- Տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար կկառուցվեն թեքահարթակներ:
- Կհիմնանորոգվի մեկ բազմաբնակարան շենքի թեք տանիք, կվերանորոգվեն շենքերի 20 շքամուտքեր:
- Շարունակական բնույթ են կրելու խաղահրապարակների, զբոսայգիների, բակերի, ընթացիկ նորոգման աշխատանքները: Աշխատանքներ կիրականացվեն կանաչ տարածքների ընդլայնման, խնամքի ու պահպանության ուղղությամբ: Նախատեսվում է զբոսայգիներում, պուրակներում, ինչպես նաև կենտրոնական փողոցներում տնկել թվով 520 ծառեր և տնկիներ:
- Նուբարաշեն 11 փողոցի 12-րդ և 16-րդ բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում կկառուցվեն 2 նոր խաղահրապարակներ:
- Բակային տարածքներում կտեղադրվի 2 մանկական խաղ, 2 սպորտային խաղ, 4 զրուցարան, 15 նստարան և 10 աղբաման:

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շենգավիթ վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն վարչական շրջաններին և Արարատի մարզին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 4060 հա, բնակչությունը՝ 139.6 հազ.մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում և հիմնանորոգում,*
2. *Մարզական և մշակութային հիմնարկների, կրթօջախների շենքային պայմանների բարելավում՝ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի թարմացում,*
3. *Բնակչությանը մատուցվող սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակի ընդլայնում, ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրում և երեխաների, տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծում,*
4. *Մանկական խաղահրապարակների ընթացիկ նորոգում, նոր խաղահրապարակների կառուցում,*
5. *Փողոցների, ինչպես նաև բակային և միջբակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում,*
6. *Վերգետնյա և ստորգետնյա անցումների ընթացիկ նորոգում և նորերի կառուցում,*
7. *Բակային և միջբակային տարածքներում արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում, փողոցներում արտաքին լուսավորության ապահովում,*
8. *Կանաչ տարածքների ընդլայնում և խնամք, այգիների, պուրակների և նոր հանգստի գոտիների ստեղծում,*
9. *Բազմաբնակարան շենքերի վթարային շքապատշգամբների վերանորոգում, վերելակների հիմնանորոգում,*
10. *Ջրագծերի և կոյուղագծերի կառուցում, վերանորոգում:*

Կրթություն, մշակույթ և սպորտ

Շենգավիթ վարչական շրջանում գործում է 29 դպրոց (4 ավագ, 25 հիմնական), 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 4 մարզադպրոց, 1 մարզակումբ, 2 երաժշտական դպրոց և 3 կրթամշակութային հիմնարկ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018 թվականին նախատեսվում է իրականացնել հ.հ. 129, 134 և 138 մանկապարտեզների վերանորոգման աշխատանքներ: Մարզական կրթօջախներում նախատեսվում է մարզական գույքի թարմացում և արդիականացում: Վերանորոգվելու է նաև «Երևանի մենապայքարային ու խաղային մարզաձևերի մանկապատանեկան համալիր» մարզադպրոցը: Կիրականացվեն սանհանգույցների, տանիքի, կոյուղագծերի, ինչպես նաև ջրագծերի նորոգման և ներքին հարդարման աշխատանքներ:
- Վարչական շրջանի կրթօջախներում, մշակութային ու մարզական կենտրոններում, այգիներում նախատեսվում է կազմակերպել պետական, ազգային ու այլ տոներին և հիշատակի օրերին նվիրված զանգվածային միջոցառումներ, ֆլեշմոբեր:

- Կշարունակվեն աշխատանքները գրադարանների ընթերցասրահները ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ (ապահովում համակարգչային տեխնիկայով, համացանցով, տեսակապի միջոցներով, նոր գույքով, գրքային ֆոնդով)։ Գրադարաններում կշարունակվեն գրական ցերեկույթ-հանդիպումներ՝ ժամանակակից գրողների հետ, ընթերցողների ու գրականագետների հետ քննարկումներ տարբեր ստեղծագործությունների շուրջ, կկազմկերպվեն բանավեճեր։

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանի տարածքում գործում է 11 առողջապահական կազմակերպություն, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության 2 բժշկական կենտրոն և 5 պոլիկլինիկա։ Պոլիկլինիկաներից 2-ն ունեն մասնաճյուղեր Ն.Չարբախում և Նոր Խարբերդում։ Վարչական տարածքում գործում են նաև 2 ատամնաբուժական պոլիկլինիկա, ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ Երևանի հ.2 մասնաճյուղը։ Կան նաև բժշկական ծառայություններ մատուցող այլ մասնավոր կլինիկաներ։

«Առաքելություն Հայաստան» ՀԿ ենթակայությամբ Շենգավիթ վարչական շրջանում գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են շուրջ 140 շահառուներ։

Գործում են նաև «Փրկություն» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն ՀԿ, «Էմմանուել» հատուկ կարիքներով երեխաների ՀԿ, «Ալեքս» ՀԿ և մի շարք այլ հասարակական կազմակերպություններ։

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Բնակչության սոցիալապես անապահով խավի սոցիալական ապահովության խնդիրներով զբաղվող հասարակական և բարեգործական կազմակերպությունների, գործարար ոլորտի հետ համագործակցության արդյունքում նախատեսվում է մեծացնել բարեգործական ծրագրերի շրջանակներում իրականացվող աջակցությունը։ 2018թ. ընթացքում համագործակցությունը կշարունակվի «Հանս Քրիստիան Կոֆոյեդ» հիմնադրամի, «Էմմանուել», «Արդա», «Ալեքս» և բազմաթիվ այլ հասարակական կազմակերպությունների հետ։ Համագործակցությունը կշարունկվի նաև ՀՀ ոստիկանության և երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ։
- Դրամական աջակցություն կտրամադրվի կարիքավոր ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերանների և այլ սոցիալական անապահով կարգավիճակ ունեցող շահառուների։
- Կշարունակվեն վարչական շրջանում բնակվող սիրիահայ ընտանիքների, ազատամարտի մասնակից վետերանների, արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքների, ինչպես նաև տարեցների աջակցության ծրագրերը։
- «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մի շարք սոցիալապես անապահով ընտանիքներ, միայնակ տարեցներ հնարավորություն կստանան օգտվելու բարեգործական ճաշարանից։
- «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում կշարունակվի հաշմանդամություն ունեցող երիտասարդների զբաղվածության, վերջիններիս մասնագիտական ուսուցման ապահովումը։
- Կկազմակերպվի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը ճամբարներում, երեխաներին կտրամադրեն դպրոցական պայուսակներ՝ համալրված գրենական պիտույքներով։

- Վարչական շրջանում գործող պոլիկլինիկաների հետ համագործակցությամբ սոցիալապես անապահով (կարիքավոր) ընտանիքների համար կիրականացվի անվճար բժշկական խորհրդատվություն, բուժզննում և դժվարամատչելի հետազոտություններ, կտրամադրվեն միջնորդագրեր՝ պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով:
- Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ կտրամադրվեն նվեր-փաթեթներ սոցիալապես անապահով ընտանիքներին, Հայրենական Մեծ պատերազմի մարտական գործողություններին մասնակից վետերանների, արցախյան պատերազմի մասնակից ազատամարտիկների և ԱՊ զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Շենգավիթ վարչական շրջանն ունի 636 բազմաբնակարան բնակելի շենք, 138-ը՝ բարձրահարկ (9-16 հարկանի), 279 վերելակ: Հաշվառված է 5 գետնանցում, 3 վերգետնյա անցում: Փողոցների թիվը՝ 137, երկարությունը՝ 99,5կմ:

Շենգավիթ վարչական շրջանի կանաչ տարածքները կազմում են 30հա, իսկ ոռոգման ցանցի երկարությունը՝ 31կմ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև 1000 գծմ եզրաքարերի հիմնանորոգում և վերանորոգում:
- 2018թ. կիրականացվեն 4500 քմ հարթ և 6000 քմ թեք տանիքների, 1200 գծմ անձրևատար խողովակների և ջրհորդանների վերանորոգման աշխատանքներ:
- Իրականացվելու է 5 բակի բարեկարգման աշխատանքներ, կտեղադրվեն մանկական և սպորտային խաղեր, զրուցատաղավարներ, նստարաններ, 28 բակային տարածքներում կիրականացվի շուրջ 320 միավոր ընդհանուր օգտագործման գույքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
- Կվերանորոգվի 224 մուտք, գեղարվեստական ձևավորման նպատակով կտեղադրվեն 583 լուսատուներ և կիրականացվեն 450գծմ գեղարվեստական լուսավորության ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
- Վարչական շրջանի մի շարք հասցեներում կշարունակվի կանաչ տարածքների ընդլայնումը, կստեղծվեն 3580 քմ սիզամարգեր, ոռոգման ցանցը կնդլայնվի 3720 գծմ-ով:
- Նոր Խարբերդ թաղամասում նախատեսվում է իրականացնել 15000քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և 2,5 կմ արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքներ:

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը սահմանակից է Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջաններին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 773 հա, իսկ բնակչությունը՝ 73.8 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Բակային տարածքներում մանկական խաղերի, մարզական սարքավորումների, նստարանների և աղբամանների, զրուցարանների տեղադրում, նստարանների և զրուցարանների վերանորոգում,*
2. *Զբոսայգիների, կանաչ գոտիների ստեղծում և ընդլայնում,*
3. *Փողոցների, մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում, եզրաքարերի տեղադրում,*
4. *Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում,*
5. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների նորոգում, վթարային պատշգամբների վերանորոգում,*
6. *Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում,*
7. *Վերելակների նորոգում,*
8. *Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգում: Նոր ոռոգման ցանցի անցկացում,*
9. *Միջշենքային և շենքերի հարակից տարածքներում բետոնե աստիճանների նորոգում, հենապատերի և ցանկապատերի կառուցում և վերանորոգում, առկա և նոր հենապատերի սվաղում ու ներկում,*
10. *Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացում:*

Կրթություն , մշակույթ և սպորտ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում է 15 մանկապարտեզ, որից 14-ը վարչական շրջանի ենթակայության, 9 հիմնական դպրոց, 3 ավագ դպրոց, 1 մասնագիտացված կրթահամալիր՝ խոսքի ծանր խանգարումներով երեխաների համար, 1 հատուկ ֆիզմաթ դպրոց, ՌԴ ՊՆ 1 միջնակարգ դպրոց, 1 կերպարվեստի դպրոց, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 կենտրոնացված գրադարանային համալիր՝ 2 մանսաճյուղով, 1 մարզադպրոց, 1 մշակութային կենտրոն, 1 շախմատի դպրոց, 3 թանգարան, 5 բուհ, 2 քոլեջ, միջնակարգ մասնագիտական 1 ուսումնարան, մինի ֆուտբոլի 7 դաշտ և բազմաֆունկցիոնալ 7 դաշտ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2018թ. նախատեսվում է վերանորոգել հհ. 149, 152, 156, 158 մանկապարտեզները, մասնակի վերանորոգել՝ հ. 157 մանկապարտեզը:
- Կշարունակվի հսկողությունը մանկապարտեզների սննդի որակի և պահպանման ժամկետների, սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ:

- 2018թ. կիրականացվեն մշակութային, կրթական և սպորտային մի շարք միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: Երևանյան ամառ ծրագրի շրջանակներում կկազմակերպվեն բակային ճամբարներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանում գործում է երեք բարեգործական ճաշարան, որոնցում ընդգրկված են մոտ 450 շահառու: Վարչական շրջանում է գտնվում նաև «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից սպասարկվող սոցիալական տունը, որտեղ ժամանակավոր կացարան է հատկացվել շուրջ 45 անօթևանների: Վարչական շրջանի տարածքում գործում է 7 հիվանդանոց և 2 պոլիկլինիկա:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Շարունակական է լինելու սոցիալական աջակցության ծրագրերի (դրամական, պարենային, նյութական օգնություն) իրականացումը՝ ուղղված տարբեր սոցիալական խմբերի ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանն ու վիճակի բարելավմանը:
- Դրամական աջակցություն կցուցաբերվի սոցիալապես անապահով ընտանիքներին, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, կերակրողին կորցրած ընտանիքներին:
- Կկազմակերպվի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների շուրջ 290 երեխաների ամառային հանգիստը մարզաառողջարանային և բակային ճամբարներում:
- Սոցիալապես անապահով անձանց առողջապահական խնդիրների լուծման նպատակով կտրամադրվեն պետպատվերի միջնորդագրեր և առողջարանների ուղեգրեր: Բնակչության առողջապահական խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով, շրջանում գործող բժշկական հաստատությունների հետ կիրականացվեն տարբեր ծրագրեր՝ անվճար խորհրդատվություն, մասնակի հետազոտություն ու ախտորոշում:
- Բարեգործական ճաշարանների գործարկման ծրագիրը շարունակական բնույթ է կրելու: Տոնական օրերին շահառուների համար կազմակերպվելու են միջոցառումներ:
- Փետրվարի 23-ի և մայիսյան հաղթանակների տոների կապակցությամբ շուրջ 180 ՀՄՊ և թիկունքի վետերանների, զոհված ազատամարտիկների ընտանիքներին և հաշմանդամություն ունեցող ազատամարտիկներին, տարեցների միջազգային օրվա կապակցությամբ՝ շրջանի ամենատարեց բնակիչներին, կտրվեն դրամական պարգևներ:
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվա և Գիտելիքի օրվա կապակցությամբ նվերներ, դպրոցական պարագաներ կտրամադրվեն սոցիալապես անապահով ընտանիքների մոտ 480 երեխաների:
- Աշխատավորների, ընտանիքի և հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա ու Ամանորի կապակցությամբ աշխատանքի վետերանների, բազմազավակ, հաշմանդամություն ունեցող և կարիքավոր մոտ 1500 ընտանիքի կտրամադրվեն սննդի փաթեթներ:
- Շրջանում գործող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով 2018թ. ևս կշարունակվի համապատասխան ծրագրերի իրականացումը՝ մարդասիրական օգնությունների տրամադրում, մասնագիտական ուսուցման ծրագրերի իրականացում:

- Ցուցաբերվող տարաբնույթ աջակցությունը ավելի արդյունավետ, նպատակային և հասցեական դարձնելու նպատակով կշարունակվի սոցիալապես անապահով ընտանիքների և տարբեր խոցելի խմբերին պատկանող մարդկանց մասին տեղեկատվության հավաքագրման, տվյալների բազայի թարմացման աշխատանքները:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 59,4 կմ է: Վարչական շրջանում առկա է 52հա կանաչ տարածք, մեկ զբոսայգի և հինգ պուրակ, գործում է 17.5կմ ոռոգման ջրագիծ:

Շրջանն ունի 353 բակային տարածք: Առկա են 81 խաղահրապարակներ, 55 տաղավարներ, 405 խաղեր և մարզասարքեր:

Վարչական շրջանում հաշվառված է բնակելի 358 շենք, անհատական բնակելի 3140 տներ, 218 վերելակ:

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Շարունակական բնույթ են կրելու շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման, բազմաբնակարան շենքերի 3500 քմ թեք տանիքների և 4600 քմ հարթ տանիքների մասնակի նորոգման աշխատանքները: Նախատեսվում է իրականացնել 150 շքամուտքերի վերանորոգում:
- Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ: Կբարեկարգվի 4 բակային տարածք: Կտեղադրվեն նստարաններ:
- Կավելացվեն և կվերականգնվեն 900 քմ սիզամարգեր, կստեղծվեն 550 քմ ծաղկանոցներ, կտնկվի 3000 հատ տնկի և կիրականցվի ոռոգման ցանցի վերանորոգման և բարելավման աշխատանքներ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության և/կամ առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամ Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ **Անահիտ Բախշյան** (հ.Ե-3/92 գրություն՝ առ 15.11.2017թ.)	Կրթության զարգացման 2030 պետական ծրագրում կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունքներից մեկը ներառականությունն է՝ կրթության բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը, այն պետք է ընդգրկի հասարակության բոլոր խավերը՝ ներառյալ խոցելի խմբերը: Պետությունը պետք է ապահովի համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Ծրագրում դրված է ներառական և արդարացի որակյալ կրթության հասնելու նպատակ, իսկ 2014-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքով ապահովված է թե՛ իրավական դաշտը, թե՛ 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 որոշմամբ էլ հաստատվել է այն մինչև 2025թ. իրականացնելու ժամանակացույցը, որի համաձայն 2018-ին Երևանում պե՛տք է ներդրվի համընդհանուր ներառական քաղաքականությունը: Անհրաժեշտ է նախապատրաստել գործողությունների պլան ու ժամանակացույց, ըստ որի, համագործակցելով Կրթության ազգային ինստիտուտի և «Հույսի կամուրջ» հ/կ-ի հետ, պետք է կազմակերպել դպրոցների տնօրենների և մանկավարժական	**Առաջարկն ընդունվել է** և «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի նախագծի «Հանրակրթություն» բաժնի «2018 թվականին նախատեսվող աշխատանքներ» ենթաբաժինը լրացվել է հետևյալ ծրագրային դրույթով. «Ձեռնարկել միջոցներ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Երևանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում համընդհանուր ներառական կրթության ներդրման

		կազմի վերապատրաստումները, դպրոցներում հետևել համապատասխան ճիշտ կադրերի համալրման գործընթացին: Հատկապես նշեմ, որ 2018թ. Երևանի բյուջեում ներառական կրթության 3 տողերում դրված 1.301.127.700դրամ գումարը բավարարում է Երևանի բոլոր դպրոցներում հաճախող մոտ 112.000 աշակերտների հաշվով ուսուցչի օգնականների և մասնագետների աշխատավարձի համար:		ուղղությամբ՝ համագործակցելով ՀՀ կրթության և գիտության, ֆինանսների նախարարությունների և համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ»
2.		Երևանի հատուկ 4 դպրոցները վերակազմակերպվելու են մանկավարժահոգեբանական ծառայությունների կենտրոնների և ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի դրանց թիվը Երևանում պետք է լինեն առնվազն 4-ը: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 13.10.2016թ. N 1058-Ն և 22.09.2016թ. N 968-Ն ընդունած որոշումներով, անհրաժեշտ է նախապատրաստվել այս գործընթացին՝ համաձայն այդ կենտրոնների կանոնադրության ու ֆինանսավորման նոր կարգի:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ նշված ՀՀ կառավարության որոշումներին համապատասխան՝ Երևանի վերակազմակերպվող թվով 4 հատուկ դպրոցները Երևանի ենթակայության չեն, և Երևան համայնքը այդ գործընթացի հետ կապված լիազորություններ չունի:	
3.		Առաջարկում եմ Երևանի «Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց»-ը վերակազմավորել մանկավարժահոգեբանական կենտրոնի, որը տարաբնույթ ծառայություններ կտրամադրի ցանկացած երեխայի իր սովորական միջավայրում, որի կարիքը շատ կա Երևանում:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ «Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց»-ի նկատմամբ Երևանի քաղաքապետն իրականացնում է պատվիրակված լիազորություն, որի շրջանակում Երևանի քաղաքապետին վերակազմակերպման գործառույթ	

			պատվիրակված չէ:	
4.		Առաջարկում եմ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 801 - Ն որոշմամբ հաստատված ՊՈԱԿ-ների Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ԱՆ 8-րդ կետի համաձայն Երևանի ենթակայության բոլոր դպրոցների պաշտոնական կայքերի միասնական բովանդակությունն ապահովելու և կառավարության պահանջը օրինակելի կերպով իրականացնելու համար, Տեղեկատվական ազատության կենտրոնի օգնությամբ մշակել դպրոցների պաշտոնական կայքերի միասնական բովանդակության ձև ու որպես մեթոդական ուղեցույց տրամադրել նրանց, մասնավորապես տեղադրել դպրոցի անձնագիրը՝ տնօրենի աշխատանքային պայմանագրի սկիզբն ու ավարտը, հավաստագրման ժամանակաշրջանը, դպրոցի կառավարման խորհրդի կազմը, տվյալներ նրանց մասին, թե ով՝ որ կազմակերպությունն է ներկայացնում և երբ է ընդգրկվել կառավարման խորհրդի կազմում:	**Առաջարկն ընդունվել է մասնակի,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ ՀՀ կառավարության 25.07.2002թ. հ.1392-Ն որոշմամբ (ՀՀ կառավարության 06.07.2017թ. հ. 801-Ն որոշման խմբագրությամբ) հաստատված հ. 3 հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, դպրոցի նախահաշիվը, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները և դպրոցի գործունեությանն առնչվող «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ տեղեկություններ: Նշված այլ տեղեկությունները սպառիչ սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում, որով սահմանված չեն առաջարկվող տեղեկությունների հրապարակման պահանջներ: Այդուհանդերձ կձեռնարկվեն միջոցներ օրենքի սահմաններում հրապարակվող տեղեկությունների ցանկն ընդլայնելու ուղղությամբ:	
5.		«Մանկապարտեզ» էլեկտրոնային հերթագրման համակարգը դարձնել հասանելի ծնողների համար՝ դրանք տեղադրելով մանկապարտեզի կայքէջում,	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան	

		անշեղորեն իրականացնել Երևանի քաղաքապետի 706-Ա 04.03.2016թ. որոշմամբ սահմանված հերթագրման կարգը, հերթագրման մասին ծնողին տրամադրել այս որոշմամբ սահմանված փաստաթուղթն ու ծնողի հետ կնքել պայմանագիր:	քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել: «Մանկապարտեզ» էլեկտրոնային հերթագրման համակարգը ծնողների համար հասանելի դարձնելու ծրագրային դրույթը ներառվել է Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրում: Համակարգը ներկայումս անցնում է փորձարկման և ճշգրտման փուլ, որի վերջնականացման համար պահանջվում է որոշակի ժամանակ: Միաժամանակ էլեկտրոնային ցուցակները պարունակում են երեխաների անձնական տվյալներ, որոնք չեն կարող հրապարակվել և հանրամատչելի դարձվել հանրության համար առանց երեխաների օրինական ներկայացուցուչների գրավոր համաձայնության («Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներ), ինչը նշանակում է, որ փորձարկումից հետո պետք է հստակեցվեն հրապարակման ենթակա տվյալները, որից հետո միայն հնարավոր կլինի հրապարակել: Հետևաբար այս ամբողջ գործընթացը 2018 թվականին իրականացնելը ժամկետային իրագործելիության առումով պարունակում է ռիսկեր:	
6.		Yerevan.am կայքի «Կրթություն» վերնագրի տակ դրվելիք Երևանի ենթակայության ՊՈԱԿ-ների Օրինակելի կանոնադրությամբ սահմանված կայքերում տեղադրվեն դպրոցների ֆինանսական	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման	

		ամբողջ փաստաթղթերը, որոնք այսօր առկա են «Ֆինանսներ» բաժնի տեղեկատվության մեջ, նույնը՝ մանկապարտեզների կայքերում, ինչպես նաև երեխաների հերթագրման էլեկտրոնային ցուցակները:	նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ առաջարկը ծրագրային բնույթ չի կրում, ինչպես նաև հրապարակված փաստաթղթերի տեղադրումը ֆինանսական բաժնից բացի նաև կրթության բաժնում կիրականացվի մինչև 2018 թվականը:	
7.		Վերահսկողության մեխանիզմ սահմանել ապահովելու համար դպրոցներում լրացուցիչ վճարովի ծառայությունների մատուցման համար ծնողների հետ պայմանագրերի առկայությունը:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ դպրոցներում լրացուցիչ վճարովի ծառայությունների գործընթացը կարգավորվում է ՀՀ ԿԳ նախարարի 2010թ դեկտեմբերի 6-ի՝ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության և ծնողի միջև կնքվող վճարովի հիմունքներով հանրկրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրեր, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման համար օրինակելի պայմանագրի ձևը հաստատելու մասին» հրամանով հաստատված պայմանագրի համաձայն, իսկ Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունն իր գործառույթների շրջանակում իրականացնում է հսկողություն:	
8.		Yerevan.am կայքում ունենալ youtoob-ի պատուհան, որտեղ դրված լինեն ավագանու նիստերի առցանց տեսագրությունները:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի	

			կատարվել, քանի որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքի ներքևի հատվածում տեղադրված է յութուբյան պաշտոնական էջի հղումը (https://www.youtube.com/user/YervanMunicipality), որտեղ տեսանյութեր բաժնում առկա են ավագանու նիստերի ուղիղ հեռարձակման տեսագրությունները:	
9.		Գործի դնել Yerevan.am կայքի «Հաշվետվություններ» պատուհանը, որը 2009 թվականից դատարկ է:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ պաշտոնական կայքի «Հաշվետվություններ» էջում տեղադրվում են Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվությունները դեկտեմբեր ամսին, ինչպես նաև այլ ընթացիկ հաշվետվություններ: Միաժամանակ տարբեր ձևաչափերով հրապարակվող հաշվետվությունները նույնպես կտեղադրվեն այդ պատուհանում:	
10.		Ապահովել աշակերտների այցելությունները մշակութային օջախներ՝ թատրոն, համերգասրահ, պատկերասրահներ, կինոթատրոն:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ դպրոցականների մշակութային օջախներ այցելությունը կազմակերպվում է դպրոցներում՝ ապահովելով կամավորության սկզբունքը:	
11.		Նախորդ ծրագրում ընդունված. «Քաղաքի	**Առաջարկն ընդունվել է** և «Երևանի	Երևանի զարգացման

		մաքրության ու կանաչապատման գործընթացում համագործակցել քաղհասարակության նախաձեռնող խմբերի և հասարակական կազմակերպությունների հետ» կետի համաձայն, համագործակցել «Ծառատունկ» հայ-ամերիկյան ծրագրի հետ, որը պատրաստ է քաղաքի կանաչապատման նպատակով մատակարարել բազմամյա բույսեր, ծառեր, թփեր ու այդ գործընթացի համար կրճատել բյուջեով նախատեսվող ծախսերը:	զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Երևանի քաղաքապետարանը պատրաստակամ է «Ծառատունկ» հայ-ամերիկյան ծրագրի հետ համագործակցել, ինչպես նաև գոհունակությամբ ընդունում է որոշ վարչական շրջաններին տրամադրվող սահմանափակ քանակությամբ տնկանյութը:	2018 թվականի ծրագրի նախագծի «Բնապահպանություն» բաժնի «2018 թվականին նախատեսվող աշխատանքներ» ենթաբաժինը լրացվել է հետևյալ պարբերությամբ. «Աշխատանքներ կիրականացվեն նաև հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ «Ծառատունկ» հայ-ամերիկյան ծրագրի հետ»:
12.	**Մերի Խաչատրյան** (հ.Խ-2663 գրություն՝ առ 21.11.2017թ.)	**Բնապահպանություն:** Ցավոք սրտի Երևանում կանաչ տարածքները նվազեցին նաև մեծ թվով նորառաճ բնակարանային, հյուրանոցային շենքերի և խանութների կառուցման պատճառով: Բացի այդ, գործարանային վթարները (թունավոր արտահոսքերը) կանխելու և վերացնելու, կանաչ զանգվածները ճիշտ խնամելու անհմտությունը (խոր էտը, որը ծառերի նոր հիվանդությունների պատճառ է) աղքատացրել են քաղաքի բնաշխարհը: Պետք է բարձրացնել Կանաչապատման ընկերությունների աշխատակիցների հմտությունները, հենվելով միջազգային լավագույն փորձի վրա:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի «Բնապահպանություն» բաժնում առկա է միջազգային փորձի կիրառման հետ կապված համապատասխան ծրագրային դրույթ:	
13.	«Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական	Ունենք հաշմանդամություն ունեցող շահառուների թիմ, որոնք ունեն օգնության կարիք: Երևանի քաղաքապետարան դիմելու դեպքում՝ հնարավոր է մասնակցել համապատասխան ծրագրում՝	**Առաջարկն ընդունվել է,** սակայն նախագծում փոփոխություն չի կաատարվել:	

	կազմակերպության նախագահ՝ **Մովսես Արիստակեսյան** (հանրային լսումներ 23.11.2017թ., դիմում հ.17/75028 առ 20.11.2017թ)	օգնություն և օժանդակություն ստանալու համար:	Քաղաքապետարանն ունի սոցիալական օժանդակության ծրագրեր, որի շրջանակներում կդիտարկվի համագործակցության առաջարկը:	
14.	**Մերի Խաչատրյան** (հանրային լսումներ 23.11.2017թ., դիմում հ. Խ-2663 հ.Գ-5231 առ 21.11.2017թ.)	Ուշադրության կարիք ունի թիվ 187 դպրոցը, որտեղ վերանորոգման, գույքի ձեռք բերման ծախսերն իրականացվում են դպրոց հաճախող երեխաների ծնողների կողմից, որը բեռ է հանդիսանում նրանց համար: Դպրոցը գտնվում է վատթար վիճակում, առկա են խնդիրներ կապված սանհանգույցների, առաստաղի, պատերի հետ, ինչն ազդում է նաև շենքի սեյսմակայունության վրա:	**Առաջարկն ընդունվել է,** նախագծում փոփոխություն չի կատարվել: Դպրոցների կառավարումը Երևան համայնքի համար հանդիսանում է պատվիրակված լիազորություն: Յուրաքանչյուր տարի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ քննարկվում է նաև դպրոցների հիմնանորոգման և/կամ վերանորոգման հարցը, և հնարավորության սահմաններում ու խնդրի լուծման հրատապությունից ելնելով՝ որոշ դեպքերում նման ծախսեր նախատեսվում են: Համայնքը նույնպես ունի գույք, որն ըստ առաջնահերթության վերանորոգում է: Երևանի զարգացման 2018-2022 թվականների հանգամյա ծրագրի համաձայն՝ համայնքը պարտավորվել է առաջնահերթ հիմնանորոգել մանկապարտեզները: Հաշվի առնելով, որ պետության հետ բանակցությունները շարունակվելու են՝ դպրոցների վերանորոգման համար միջոցներ հատկացնելու ուղղությամբ, այդ համատեքստում կուսումնասիրվի և կքննարկվի նաև թիվ 187 դպրոցի	

			խնդիրը:	
15.		Համայնքը պարտավոր է առավելագույնս սատարել դպրոցին և այնտեղ աշխատող տաղանդավոր մարդկանց՝ ուշադրության կենտրոնում պահելով նրանց և ցուցաբերելով բարոյական աջակցություն:	**Առաջարկն ընդունվել է**, նախագծում փոփոխություն չի կատարվել: Բոլոր մանկապարտեզների և դպրոցների աշխատակիցները մշտապես համայնքի ուշադրության կենտրոնում են, իսկ առաջացած խնդիրներն ուսումնասիրվում են և հնարավորության դեպքում լուծվում:	
16.		Դպրոցն ունի 2000 քմ այգի, որից օգտվում են բոլոր բնակիչները և երեխաները՝ զբոսնելու, խաղալու համար: Անհրաժեշտ է ուշադրության կետնրոնում պահել այգին, քանի որ բնակիչները վնասում են այն, ծառերը չորանում են, հողը պարարտացված չէ, ոռոգման համակարգի անցկացման անհրաժեշտություն կա: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Երևանում օդի որակի բարելավման խնդիր կա՝ խնդրում եմ այգու բարեկարգումը ներառել ծրագրերում:	**Առաջարկն ընդունվել է,** նախագծում փոփոխություն չի կատարվել: Ջրվեժի Մայակ թաղամասը հանդիսանում քաղաքի ծայրամասային կետերից մեկը, և քաղաքապետարանի որդեգրած քաղաքականության համապատասխան՝ այդ հատվածները գտնվում են ուշադրության կենտրոնում: Թաղամասում արդեն իսկ ծավալուն աշխատանքներ են կատարվել, որոնք կրելու են շարունակական բնույթ:	
17.		Ջրվեժի Մայակ թաղամասի նախկին կաթսայատան խողովակների ապամոնտաժում:	**Առաջարկն ընդունվել է,** նախագծում փոփոխություն չի կատարվել: Ըստ առաջնահերթության և հնարավորության ապամոնտաժվում են նախկին կաթսայատների խողովակները:	
18.	Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման	**Մատչելիության քարտեզի անհրաժեշտ կիրառում** «Հանրային Դիվանագիտություն» ՀԿ-ն արդեն ունի matcheli.vayrer հեռախոսային հավելվածը, որը նշում է Երևանի բոլոր մատչելի վայրերը հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: Քարտեզի տվյալները հիմնված են Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև անհատների	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել: Համայնքը պատրաստակամ է աջակցել	

	խորհրդի անդամ Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ **Անահիտ Բախշյան** (հ.17/76575, հ.Ե-3/97 գրություն՝ առ 24.11.2017թ.)	տեղեկատվության վրա, որը ստուգվել է և միայն դրանից հետո զետեղվել է հավելվածում: Հավելվածը հասանելի է բոլոր սմարթֆոնների համար անվճար: 2017 նոյեմբերի կեսերին Հանրային Դիվանագիտությունը մասնակցել է տեղեկատվական մրցույթին Թիֆլիսում և գրավել է առաջին տեղը matcheli.vayrer հավելվածի համար, ինչպես նաև ստացել է փոքրիկ դրամական աջակցություն զարգացման նպատակով: Գաղափարը հետևյալն է: Պետք է տեղադրել հատուկ սարքեր, որոնք արբանյակին կհաղորդեն Երևանի 25 հաշմանդամների համար հարմարեցված ավտոբուսների տեղանքը օնլայն ռեժիմում, իսկ ծրագրավորողները կկապեն այդ ինֆորմացիան matcheli.vayrer հավելվածի հետ: Արդյունքում ցանկացած հատուկ կարիքներով մարդ կարող է օնլայն ռեժիմով վերահսկել մատչելի ավտոբուսը և զերծ մնալով տաքսու թանկ ծառայություններից հասնել ցանկացած վայր: Հավելվածը շահել է նաև այն պատճառով, որ այն լուծում է հասանելիության խնդիրը: Առանց հասանելիության բոլոր մյուս հարցերը երկրորդական են: Կան հարմարեցված ավտոբուսներ, ուրեմն պարտավոր ենք ապահովել դրանց հասանելիությունը, չէ որ մյուս կրթական, առողջապահական և այլ օբյեկտների հասանելիությունը սկսում է ավտոբուսներից: Մեր մասնագետների կոպիտ հաշվարկներով այս հավելվածի ստեղծման համար անհրաժեշտ գումարի համար քաղաքապետարանի ներդրումը կլինի մոտավորապես 1.4մլն դրամ, չբավարարելու դեպքում մնացածը՝ «Հանրային Դիվանագիտություն» ՀԿ-ն: Հավելվածը ավարտական տեսքի հասցնելուց	գաղափարի կյանքի կոչմանը՝ տեղադրելով GPS սարքեր հաշամանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ավտոբուսների վրա՝ դրանց գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման նպատակով:	

		հետո Հանրային Դիվանագիտություն ՀԿ-ն պատրաստ է այն նվիրել Երևանի քաղաքապետարանին:		
19.		Հայաստանի Հանրապետությունը իր առաջնահերթությունների շարքում դասում է նորագույն տեխնոլոգիաների, SS ոլորտի և տուրիզմի ոլորտի զարգացումը: Այդ ամենի մեջ իր ուրույն տեղն ունի «խելացի» հանրային զուգարանների ցանցը: Քաղաքակիրթ երկրի ցուցանիշներից մեկը, դա հասարակական զուգարանների ներկայությունն է: Կարևոր է երկրի հյուրերի բնական կարիքները բավարարելու համար լավ պայմաններ ստեղծել, օգտագործելով նորագույն տեխնոլոգիաները: Նախաձեռնող խմբի կողմից կազմվել և իրագործվում է մի ծրագիր, որը Հայաստանում տուրիզմի զարգացման ոլորտի մի քանի ուղղություն է ընդգրկում: Գլխավոր և հիմնական հարցը դա Երևանում և ողջ Հայաստանում ստեղծել հասարակական զուգարանների ամբողջ մի ցանց, և ամենակարևորը, գրագետ սպասարկվող համակարգով: Դա ժամանակակից, հարմարավետ, գեղեցիկ, ավտոմատ կառավարվող, բազմաֆունկցիոնալ համալիր է, իր տարբեր վճարային համակարգերով, համակարգչային ծրագրով ղեկավարվող, ինտեգրված հիմնական քարտեզների ու այլ ինֆորմացիոն ծրագրերի մեջ: Համախմբելու է շատ պետական և մասնավոր կազմակերպությունների ծառայությունները մեկ հարթակի մեջ: Ծառայելով ինչպես մեր քաղաքացիներին, այնպես էլ Հայաստան ժամանող հյուրերին: Ծրագրի աշխատանքային անվանումն է YEVEV: Ծրագիրը համագործակցելու է հյուրանոցների, B&B-	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն չի կատարվել: Հաշվի առնելով, որ Երևան քաղաքում հասարակական զուգարանների կառուցման ուղղությամբ արդեն իսկ բանակցություններ են վարվում ներդրողների և համապատասխան մասնագետների հետ՝ առաջարկը կքննարկվի այդ համատեքստում:	

		ների, հոստելների, գովազդային ընկերությունների հետ, տրանսպորտային կազմակերպությունների և տաքսի ծառայությունների, զբոսաշրջիկներ ընդունող ու սպասարկող պետական և մասնավոր կազմակերպությունների հետ: Մեծ դեր է հատկացվում ներգնա տուրիզմի օպերատորների հետ համագործակցությանը փոխշահավետ հիմունքներով: ՀՀ Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համագործակցելը ծրագրի կարևոր հարցերից է: Կոմիտեի կողմից հնարավոր աջակցությունն ու կորդինացումը կօգնի YEVEV ծրագրի աշխատանքների ճիշտ կազմակերպմանը, օգտագործելով գոյություն ունեցող վիճակագրական տվյալները: YEVEV ծրագիրը կարևորվում է Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությունը, քանի որ ծրագրի մեկնարկը նախատեսվում է Երևան քաղաքից: Շատ կարևոր են հասարակական զուգարանների տեղադրման ճիշտ տեղերի որոշումը, տեխնիկական և ճարտարապետական խնդիրների լուծումները:		
20.	Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ **Սերգեյ Ղահրամանյան** (հ. 17/76270, հ. Ե-9/32, գրություն՝ առ 24.11.2017թ.)	2018թ. Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների 8-րդ ենթակետի մեջ ներառված աշխատանքների մեջ ներառել նաև՝ • Կորյունի 8 հասցեի շենքի բաց պատշգամբների վերանորոգման հիմնախնդիրը, որոնք վտանգավոր են և անմխիթար վիճակում են • Արշակունյաց 52/1 բարձրահարկ շենքի հարթ տանիքը նորոգելու խնդիրը, որը վնասված է և անձրևաջրերը ներթափանցում են վերջին հարկի	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա: Երևանի զարգացման 2018թ. ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ և թեք տանիքների, բաց պատշգամբների վերանորոգում: Շենքերի	

		բնակարաններ:	բաց պատշգամբների և տանիքների վերանորոգման ծրագրերի շրջանակներում կոնկրետ հասցեները կքննարկվեն և ըստ առաջնահերթության և հնարավորության սահմաններում կներառվեն վերանորոգման աշխատանքների ծրագրում:	
21.	Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ **Մերգեյ Ղահրամանյան** (հ. 17/76271, հ.Ե-9/34, գրություն՝ առ 24.11.2017թ.)	2018թ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի Քանաքեռ-Զեյթուն համայնքին վերաբերվում հատվածում հիմնախնդիրների մեջ գրված է վերելակների հիմնախնդիրը, բայց որևէ տեղ արտացոլված չէ, թե որքան վերելակ է նորոգվելու: Հաշվի առնելով բնակիչների անհանգստությունը, ինչպես նաև բողոքներն ու մտահոգությունները, խնդրում եմ Թբիլիսյան 1 և 2 հասցեում գտնվող շենքերի վերելակները նորոգել կամ հիմնանորոգել, քանի որ իրենց համար դա առաջին անհրաժեշտություն է և վերելակները բացի այն որ արդեն իսկ շատ վտանգավոր են, նաև շատ հաճախակի են վթարվում: Ցանկանում եմ որպես ավելացում տեղեկացնել, որ այդ երկու շենքերը 16 հարկանոց են և բազմաբնակարան:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա: Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից, սակայն խիստ վթարային և հիմնանորոգման անհրաժեշտություն ունեցող վերելակները գույքագրվում են և հնարավորության սահմաններում վերանորոգվում համայնքի կողմից: Վերելակային տնտեսության հիմնախնդրի լուծման ուղղությամբ նախատեսվող աշխատանքները ներկայացված են ինչպես Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա, այնպես էլ՝ 2018թ. ծրագրում:	

			Վերելակային տնտեսության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, համակարգը նոր վերելակներով համալրելու, վերազինելու, արդիականացնելու, միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկում ապահովելու հիմնախնդրի լուծումը դիտարկվում է պետություն–համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում, որի մասին նշված է Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի նախագծի «Կոմունալ տնտեսություն» բաժնի «2018 թվականին նախատեսվող աշխատանքներ» ենթաբաժնում:	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 224-Ն և 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 90-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 190-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 675-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկում	«Երևան համայնքում տեղական տուրքերի 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին», «Երևան համայնքում տեղական վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N 224-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 90-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին», «2018 թվականի տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N 190-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2017 թվականի փետրվարի 14-ի N 675-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին», «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) վերաբերյալ հանրային քննարկումների հրավերները՝ ա. հրապարակվել են 08.11.2017թ. Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում, բ. հրապարակել են 08.11.2017թ. իրավական ակտերի նախագծերի միասնական հրապարակման կայքում (www.e-draft.am), գ. հրապարակվել են 09.11.2017թ. «Հայոց աշխարհ» օրաթերթում, դ. փակցվել են Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
Հանրային քննարկումների մասնակիցները	Հանրային քննարկումների հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ ա. Նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներին առաջարկություններով և առարկություններով մասնակցել են հետևյալ անձինք՝ 1. Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամ, Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ՝ Անահիտ Բախշյան (հ.Ե-3/92 և

	հ.Ե-3/93 գրություններ՝ առ 15.11.2017թ.), 2. Մերի Խաչատրյան (հ.Խ-2663 գրություն՝ առ 21.11.2017թ.), 3. Արսեն Գրիգորյան (ստացված է իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 10.11.2017թ.), 4. «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ՝ Մովսես Արիստակեսյան (ստացված է իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 09.11.2017թ.), 5. «Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն (ստացված է իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 14.11.2017թ.), 6. Երևանի ավագանու «Ելք» խմբակցության ղեկավար՝ Դավիթ Խաժակյան (հ.2/Ե-49 գրություն՝ առ 22.11.2017թ.), 7. Արամ Գրիգորյան (հանրային լսումներ 23.11.2017թ., դիմում հ.Գ-5231 առ 15.11.2017թ.), 8. Մերի Խաչատրյան (հանրային լսումներ 23.11.2017թ., դիմում հ. Խ-2663 հ.Գ-5231 առ 21.11.2017թ.) բ. հանրային բաց լսումների եղանակով 12.10.2017թ. ժ.15:00-ին կազմակերպված հանրային քննարկումներին մասնակցելու համար դիմումներ են ներկայացրել հետևյալ անձիք՝ 1. «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ՝ Մովսես Արիստակեսյան (20.11.2017թ., գրություն հ.17/75028), 2. Արամ Գրիգորյան (15.11.2017թ., գրություն հ.Գ-5231 դիմում), 3. Մերի Խաչատրյան (21.11.2017թ., գրություն հ. Խ-2663):
Հանրային քննարկումների մասնակցության արդյունքները	Հանրային քննարկումների հրավերներով սահմանված կարգով և ժամկետում նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների արդյունքում Նախագծերում կատարված համապատասխան փոփոխությունները ներկայացվել են սահմանված կարգով կազմված ամփոփաթերթերում:
Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք կան)	Հանրային բաց լսումների եղանակով կազմակերպված հանրային քննարկումների ընթացքում Նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, առարկությունների և հարցադրումների ընդունման կամ չընդունման վերաբերյալ կազմվել են տեղեկանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/հ	Առաջարկության, առարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակությունը	Պարզաբանում/ Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	1	2	3	4
1.	Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ **Մերգեյ Ղահրամանյան** 12.12.2017թ. հ. 17/80603 (հ.52/Ե-9 գրություն՝ առ 04.12.2017թ.)	Խնդրում եմ 2018թ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի մեջ ներառել Արշակունյաց 41 հասցեին հարող հատվածում գտնվող վերնանցմանը ծածկ տեղադրելու հարցը: Մայրաքաղաքի վերնանցումների մեծամասնության դեպքում դրանք ունեն ծածկեր, ինչը պաշտպանում է, հատկապես ձմռանը, սառույց չառաջանալու համար: Նշվածս վերնանցման դեպքում չկա ծածկ, ինչը ձմռանը վերնանցման աստիճանների և ընդհանուր առմամբ վերնանցման սառցակալման պատճառ է հանդիսանում, որի պատճառով մարդիկ չեն կարողանում օգտվել վերնանցումից: Դրա հետևանքով հետիոտները ստիված ընտրում են ավելի բարդ, սակայն տվյալ դեպքում հաղթահարելի՝ փողոցով անցնելու տարբերակը:	**Առաջարկը չի ընդունվել,** քանի որ վերգետնյա անցումները կառուցվել են սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Նախագծով տվյալ հասցեում ծածկ նախատեսված չի եղել: Ծածկի կառուցման համար անհրաժեշտ են տվյալ կառույցի կոնստրուկտիվ փոփոխություններ, որոնց իրագործումը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:	
2.	Երևանի ավագանու «Ելք» խմբակցության	Արաբկիր վարչական շրջանի Քեռու փողոցը կամ վատագույն դեպքում՝ ասֆալտապատել:	**Առաջարկը չի ընդունվել,** քանի որ Երևան քաղաքում ասֆալտ–բետոնյա ծածկի ընթացիկ նորոգման	

	անդամ **Սերգեյ Ղահրամանյան** 12.12.2017թ. հ. 17/80586 (հ.53/Ե-9 գրություն՝ առ 04.12.2017թ.)	Հիմնանորոգել Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 9-րդ փողոցը կամ վատագույն դեպքում՝ ասֆալտապատել:	աշխատանքներն իրականացվում են առկա հնարավորությունների սահմաններում՝ փաստացի իրականացված ուսումնասիրությունների հիման վրա՝ առավել վնասված հատվածներում: Այնուհանդերձ, եթե նշված հատվածները դիտարկվեն որպես վերանորոգման ենթակա, ապա այն կիրականացվի ասֆալտապատման ծրագրի շրջանակներում:	
3.		Նորոգել Ռաֆֆու 99 շենքի վերելակները:	**Առաջարկն ընդունվել է,** սակայն «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա: Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից, սակայն խիստ վթարային և հիմնանորոգման անհրաժեշտություն ունեցող վերելակները գույքագրվում են և հնարավորության սահմաններում վերանորոգվում համայնքի կողմից: Վերելակային տնտեսության հիմնախնդրի լուծման ուղղությամբ նախատեսվող աշխատանքները ներկայացված են ինչպես Երևանի	

			զարգացման 2018-2022 թվականների հնգամյա, այնպես էլ՝ 2018թ. ծրագրում: Վերելակային տնտեսության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, համակարգը նոր վերելակներով համալրելու, վերազինելու, արդիականացնելու, միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկում ապահովելու հիմնախնդրի լուծումը դիտարկվում է պետություն–համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում:	
4	Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ **Սերգեյ Ղահրամանյան** 12.12.2017թ. հ. 17/80599 (հ.54/Ե-9 գրություն՝ առ 04.12.2017թ.)	Վերականգնել Արշակունյաց պողոտային հարող Կոմիտասի պանթեոնին հարակից Կոմիտասի այգին: Համայնքին պատկանելու դեպքում առաջարկում եմ Երևանի այդ անկյունում տեղակայված ու լքված այգին կրկին վերականգնել: Ինքս մի քանի անգամ մասնակից եմ եղել այդ հատվածում շաբաթօրյակների, սակայն քանի դեռ պետական մոտեցում չկա այդ այգին այդպես էլ լքված է մնալու, այդ հատվածում կա կիսաքանդ լքված մի շինություն, որի պատերի ետնամասում և ընդհանուր հարող տարածքում հակահիգիենիկ վիճակ է: Կարծում եմ, որ շատ մեծ ներդրումների արդյունքում այդ այգին կարելի է այնպես կազմակերպել, որ դառնա երևանցիների սիրելի վայրերից մեկը:	**Առաջարկն ընդունվել է:** Կոմիտանի անվան զբոսայգու բարեկարգումը նախատեսված է Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրում: Միաժամանակ զբոսայգու բարեկարգման աշխատանքները փոխկապակցված են տվյալ տարածքում նախատեսվող եկեղեցու շինարարության հետ, որի ավարտից հետո կիրականացվեն նախագծի ճշգրտումներ և կմեկնարկեն զբոսայգու բարեկարգման աշխատանքերը:	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ